



Համարը թիվ 353-Ն

Տիպը Հրաման

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2012.05.21/14(427) Հոդ.165

Ընդունող մարմինը Ֆինանսների նախարար

Ստորագրող մարմինը Ֆինանսների նախարար

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 31.05.2012

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 17.04.2012

Ստորագրման ամսաթիվը 17.04.2012

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 319 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
11 մայիսի 2012 թ.
Պետական գրանցման թիվ 11812208

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

17 ապրիլի 2012 թ.

թիվ 353-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 319 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝

Հրամայում եմ.

- Հաստատել «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը»՝ համաձայն Հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը հաստատելու մասին» թիվ 319 հրամանը:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Վ. Գաբրիելյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2012 թվականի ապրիլի 17-ի
թիվ 353-Ն հրամանի

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը (այսուհետ՝ հաշվային պլան) մշակվել է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին (ՖՀՄՄ-ներին) համապատասխան հաշվապահական հաշվառում վարելուն և ֆինանսական հաշվետվություններ պատրաստելուն օժանդակելու նպատակով: Սույն հաշվային պլանի մշակումն իրականացվել է՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 26-ի «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին» N 740 որոշման հիման վրա մշակված հաշվային պլանի կառուցվածքն ու սկզբունքները:

Սույն հաշվային պլանը նախատեսված է ՖՀՄՄ-ներին համապատասխան առանձին կամ անհատական (ոչ համախմբված) ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարգավորման ոլորտում գործող կազմակերպությունների) համար և կրում է օրինակելի, օժանդակող, ցուցադրող բնույթ: Թեև հաշվային պլանը պարտադիր բնույթ չի կրում, դրան հետևելը դյուրացնում է հաշվապահների, աուդիտորների, հաշվապահական համակարգչային ծրագրեր մշակողների, պետական լիազոր մարմինների գործը և նպաստում է ֆինանսական հաշվետվությունների համադրելիությանը:

Հաշվային պլանը բաղկացած է երեք բաժնից՝

I. Ընդհանուր դրույթներ,

II. Հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկ,

III. Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգ:

I բաժնում տրված է հաշվային պլանի ընդհանուր բնութագիրը, գործողության ոլորտը, ֆինանսական հաշվետվությունների ձևերի հետ կապը, ինչպես նաև դասակարգման և կոդավորման հիմունքները:

II բաժնում տրված է հաշվապահական հաշվառման դասերում և խմբերում միավորված առաջին և երկրորդ կարգի հաշիվների ցանկը:

III բաժնում տրված է հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվապահական հաշվառման հաշվային պլանը կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և դրա կողմից իրականացվող գործառնությունների փաստերի՝ հաշվապահական հաշվառման մեջ գրանցման և խմբավորման սխեմա է:

Հաշվային պլանը կազմված է ըստ տնտեսական բովանդակության դասակարգված հաշիվներից և ներառում է հաշիվների դասեր, հաշիվների խմբեր, առաջին կարգի հաշիվներ (սինթետիկ հաշիվներ) և երկրորդ կարգի հաշիվներ (ենթահաշիվներ):

Հաշվային պլանը ներառում է 9 դաս՝

1. Ոչ ընթացիկ ակտիվներ,

2. Ընթացիկ ակտիվներ,

3. Սեփական կապիտալ,

4. Ոչ ընթացիկ պարտավորություններ,

5. Ընթացիկ պարտավորություններ,

6. Եկամուտներ,

7. Ծախսեր,

8. Կառավարչական հաշվառման հաշիվներ,

9. Արտահաշվեկշռային հաշիվներ:

1-7 դասերն ընդգրկում են ֆինանսական հաշվառման հաշիվները, 8-րդ դասը՝ կառավարչական հաշվառման և 9-րդ դասը՝ արտահաշվեկշռային հաշիվները:

Ֆինանսական հաշվառման հաշիվներն օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլման

ենթակա տեղեկատվության ընդհանրացման համար: Դրանք բաժանվում են հաշվեկշռային հաշիվների (1-5 դասեր) և գործունեության արդյունքների հաշիվների (6-7 դասեր):

Հաշվեկշռային հաշիվները նախատեսված են կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են այս հաշիվների մնացորդները (դեբետային կամ կրեդիտային):

Գործունեության արդյունքների հաշիվները նախատեսված են կազմակերպության եկամուտների և ծախսերի հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում այս հաշիվների զուտ շրջանառությունը (դեբետային՝ ծախսերի գծով և կրեդիտային՝ եկամուտների գծով), իսկ սահմանված դեպքերում՝ դրանց տարբերությունը տեղափոխվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Կառավարչական հաշվառման հաշիվները նախատեսված են արտադրական ծախսումների և արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի, ինչպես նաև ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) և մշակման ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք օգտագործվում են կազմակերպությունում՝ կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով:

Արտահաշվեկշռային հաշիվները նախատեսված են կազմակերպությանը չպատկանող, բայց ժամանակավորապես նրա տրամադրության կամ օգտագործման տակ գտնվող ակտիվների (գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ, պատասխանատու պահպանման, վերամշակման ընդունված սպարանքանյութական արժեքներ, հավատարմագրային պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ, կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ և այլն), պայմանական ակտիվների և պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման, ինչպես նաև առանձին գործառնությունների վերահսկման համար:

Հաշիվների կողավորումը կառուցված է հետևյալ կերպ՝

- հաշիվների դասերը նշված են միանիշ թվով՝ 1-ից մինչև 9-ը,

- հաշիվների խմբերը նշված են երկնիշ թվով, որոնցից առաջինը ցույց է տալիս դասի ծածկագիրը, իսկ երկրորդը՝ խմբի համարը,

- առաջին կարգի հաշիվները նշված են եռանիշ թվով, որոնցից առաջին երկուսը ցույց են տալիս խմբի ծածկագիրը, երրորդը՝ առաջին կարգի հաշվի համարը,

- երկրորդ կարգի հաշիվները նշված են քառանիշ թվով, որոնցից առաջին երեքը ցույց են տալիս առաջին կարգի հաշվի ծածկագիրը, չորրորդը՝ երկրորդ կարգի հաշվի համարը:

Հաշիվները, կախված կազմակերպությունում գործունեության տարբեր տեսակների (վարձակալական գործունեություն, արժեթղթերի առուվաճառք) հարաբերական կարևորությունից և կրկնման հաճախականությունից, կարող են փոփոխվել, եթե այդ փոփոխությունը կնպաստի կազմակերպության հիմնական գործունեության, այլ գործառնական գործունեության և ոչ գործառնական գործունեության արդյունքների առավել ճշմարիտ ներկայացմանը: Երկրորդ կարգի բոլոր հաշիվները, ինչպես նաև 8-9 դասի առաջին կարգի հաշիվները օգտագործվում են ըստ անհրաժեշտության՝ ելնելով կազմակերպության գործունեության առանձնահատկություններից, ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության բացահայտման պահանջներից, ինչպես նաև վերահսկողության և վերլուծության նպատակներից:

Յուրահատուկ գործառնությունների հաշվառման նպատակով կազմակերպությունները անհրաժեշտության դեպքում, կարող են՝

- հաշվային պլանում ավելացնել լրացուցիչ առաջին և երկրորդ կարգի հաշիվներ՝ օգտագործելով հաշիվների ազատ ծածկագրերը, կամ

- փոփոխել առաջին և երկրորդ կարգի հաշիվները՝ այդ փոփոխությունները ներկայացնելով հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Հաշվային պլանը ներառում է ակտիվային, պասիվային, ակտիվապասիվային հաշիվներ: 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ դասերի հաշիվները, բացառությամբ պասիվային կարգավորող հաշիվների, ակտիվային են, իսկ 3-6-րդ դասերի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են:

1-8-րդ դասերի հաշիվներում և 9-րդ դասի 92 խմբում (այն նախատեսված է բրոքերային և հավատարմագրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար) կազմակերպության գործառնությունների և դրա վրա ազդող իրադարձությունների արտացոլումը իրականացվում է կրկնակի գրանցման հիմունքով, իսկ 9-րդ դասի մնացած հաշիվներում՝ հաշվառման պարզ (միակի գրանցման) համակարգով:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎՎՆԵՐԻ ՑԱՆԿ

	I կարգի	
Հաշիվ.	հաշիվ.	II կարգի հաշիվ. ծածկ.
խմբի	ծածկ.	
ծածկ.		

ԴԱՍ 1. ՈՉ ԸՆԹԱՑԻՎ ԱԿՏԻՎՆԵՐ

11-12

ՈՉ ԸՆԹԱՑԻՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**111****Մաշվող հիմնական միջոցներ**

1111

Շենքեր

1112

Կառուցվածքներ

1113

Փոխանցող հարմարանքներ

1114

Մեքենաներ և սարքավորումներ

1115

Տրանսպորտային միջոցներ

1116

Արտադրական գույք, տնտեսական գույք,
գործիքներ

1119

Այլ հիմնական միջոցներ

112**Հիմնական միջոցների մաշվածություն**

1121

Շենքերի մաշվածություն

1122

Կառուցվածքների մաշվածություն

1123

Փոխանցող հարմարանքների մաշվածություն

1124

Մեքենաների և սարքավորումների մաշվածություն

1125

Տրանսպորտային միջոցների մաշվածություն

1126

Արտադրական գույքի, տնտեսական գույքի,
գործիքների մաշվածություն

1129

Այլ հիմնական միջոցների մաշվածություն

115

Հողամասեր

116

Կենսաբանական ակտիվներ

1161

Պտղատու այգիներ

1162

Ծառեր տնկադաշտում

1163

Թփեր

1164

Խաղողի վազեր

1165

Կաթնատու հոտ

1166

Մաստու կենդանիներ

117

Կենսաբանական ակտիվների
մաշվածություն

1171

Պտղատու այգիների մաշվածություն

1172

Ծառեր տնկադաշտում – մաշվածություն

1173

Թփերի մաշվածություն

1174

Խաղողի վազերի մաշվածություն

1175

Կաթնատու հոտի մաշվածություն

1176

Մաստու կենդանիների մաշվածություն

118

Օգտագործման համար ոչ մատչելի
հիմնական միջոցներ

1181

Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր

1182

Օգտագործման համար ոչ մատչելի
կառուցվածքներ

1183

Օգտագործման համար ոչ մատչելի փոխանցող
հարմարանքներ

	1184	Օգտագործման համար ոչ մատչելի մեքենաներ և սարքավորումներ
	1185	Օգտագործման համար ոչ մատչելի տրանսպորտային միջոցներ
	1186	Օգտագործման համար ոչ մատչելի արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ
	1189	Օգտագործման համար ոչ մատչելի այլ հիմնական միջոցներ
119		Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ
121		Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն
122		Ներդրումային գույք
	1221	Իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույք
	1222	Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույք
123		Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն
124		Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում
	1241	Մաշվող հիմնական միջոցների արժեզրկում
	1242	Հողամասերի արժեզրկում
	1243	Կենսաբանական ակտիվների արժեզրկում
	1244	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում

1245 Ֆինանսական վարձակալությամբ ստացված
հիմնական միջոցների արժեզրկում

1246 Ներդրումային գույքի արժեզրկում

13

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

131

Ոչ նյութական ակտիվներ

1311 Ֆիրմային անուններ

1312 Հրապարակումների անուններ

1313 Համակարգչային ծրագրեր

1314 Լիցենզիաներ և վստահագրեր (ֆրանշիզներ)

1315 Հեղինակային իրավունքներ

1316 Արտոնագրեր

1317 Ծառայությունների մատուցման և շահագործման
իրավունքներ

1318 Բանաձևեր, մոդելներ, նախագծեր,
բաղադրատոմսեր և փորձանմուշներ

1319 Այլ ոչ նյութական ակտիվներ

132

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

1321 Ֆիրմային անունների ամորտիզացիա

1322 Հրապարակումների անունների ամորտիզացիա

1323 Համակարգչային ծրագրերի ամորտիզացիա

1324 Լիցենզիաների և վստահագրերի (ֆրանշիզների)
ամորտիզացիա

1325 Հեղինակային իրավունքների ամորտիզացիա

1326 Արտոնագրերի ամորտիզացիա

1327 Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքների ամորտիզացիա

1328 Բանաձևերի, մոդելների, նախագծերի, բաղադրատոմսերի և փորձանմուշների ամորտիզացիա

1329 Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

133 Անավարտ ոչ նյութական ակտիվներ

1331 Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներ

1332 Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ

134 Գուդվիլ

136 Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

1361 Ոչ նյութական ակտիվների արժեզրկում

1362 Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների արժեզրկում

1363 Գուդվիլի արժեզրկում

14 ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

141 Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում

1411 Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների բաժնային գործիքներում

1412	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների ածանցյալ գործիքներում
142	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում
1421	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալում
1422	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում
1423	Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ համատեղ վերահսկվող միավորների կանոնադրական կապիտալում
143	Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ
1431	«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ
1432	Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ
144	Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր
145	Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր
146	Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր

147

Չվաստակաձ ֆինանսական եկամուտ
ամորտիզացված արժեքով հաշվառվող
երկարաժամկետ ֆինանսական ակտիվների
գծով

1471

Չվաստակաձ ֆինանսական եկամուտ մինչև
մարման ժամկետը պահվող երկարաժամկետ
ներդրումների գծով

1472

Չվաստակաձ ֆինանսական եկամուտ
երկարաժամկետ փոխառությունների գծով

1473

Չվաստակաձ ֆինանսական եկամուտ
ֆինանսական վարձակալության գծով

148

**Որպես հեջավորման գործիք նախատեսված
ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ**

149

**Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների
արժեզրկում (անհավաքագրելիություն)**

1491

Չկապակցված կազմակերպություններում
սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ
ներդրումների արժեզրկում

1492

Կապակցված կազմակերպությունների
կանոնադրական կապիտալում ոչ ընթացիկ
ներդրումների արժեզրկում

1493

Մինչև մարման ժամկետը պահվող
երկարաժամկետ ներդրումների
անհավաքագրելիություն

1494

Երկարաժամկետ փոխառությունների
անհավաքագրելիություն

1495

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք
համախառն մուտքերի անհավաքագրելիություն

15

ԱՅԼ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

151

Հետաձգված հարկային ակտիվներ

152	Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար
153	Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ
154	Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով
155	Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա
156	Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում

ԴԱՍ 2. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

21	ՊԱՇԱՐՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ
211	Նյութեր
2111	Հումք և նյութեր
2112	Գնովի կիսապատրաստուկներ, համալրող շինվածքներ և դետալներ
2113	Վառելիք
2114	Տարա և տարանյութեր
2115	Պահեստամասեր
2116	Շինանյութեր
2117	Գյուղատնտեսական նշանակության նյութեր
2118	Վերամշակման հանձնված նյութեր

2119

Այլ նյութեր

212

Սպառվող կենսաբանական ակտիվներ

214

Անավարտ արտադրություն

2141

Արտադրանքի գծով անավարտ արտադրություն

2142

Աշխատանքների գծով անավարտ
արտադրություն

2143

Ծառայությունների գծով անավարտ
արտադրություն

2144

Օժանդակ արտադրության գծով անավարտ
արտադրություն

215

Արտադրանք

2151

Պատրաստի արտադրանք

2152

Սեփական արտադրության
կիսապատրաստուկներ

2153

Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով
վաճառքի հանձնված արտադրանք

2154

Առաքված արտադրանք

216

Ապրանքներ

2161

Ապրանքներ պահեստում

2162

Ապրանքներ մանրածախ առևտրում

2163

Տարա և տարանյութեր

2164

Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով
վաճառքի հանձնված ապրանքներ

2165

Առաքված ապրանքներ

2166

Այլ ապրանքներ

217

Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն

2171

Առևտրական հավելագին

2172

Ավելացված արժեքի հարկ

2173

Ակցիզային հարկ

218

Պաշարների արժեքի նվազում

2181

Նյութերի արժեքի նվազում

2184

Անավարտ արտադրանքի արժեքի նվազում

2185

Արտադրանքի արժեքի նվազում

2186

Ապրանքների արժեքի նվազում

22

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

221

Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով

2211

Դեբիտորական պարտքեր արտադրանքի, ապրանքների վաճառքների գծով

2212

Դեբիտորական պարտքեր մատուցած ծառայությունների, կատարած աշխատանքների գծով

2213

Դեբիտորական պարտքեր այլ պաշարների վաճառքների գծով

2214

Դեբիտորական պարտքեր ֆինանսական ներդրումների վաճառքների գծով

2215

Դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքների գծով

2216

Դեբիտորական պարտքեր այլ վաճառքների գծով

222

Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով

2221

Դեբիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով

2222

Դեբիտորական պարտքեր ստացվելիք շահաբաժինների գծով

2223

Դեբիտորական պարտքեր ստացվելիք տոկոսների գծով

2224

Դեբիտորական պարտքեր ապահովագրական հատուցումների գծով

2225

Դեբիտորական պարտքեր տույժերի, տուգանքների գծով

2226

Դեբիտորական պարտքեր նյութական վնասի փոխհատուցման գծով

2227

Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով

223

Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ

224

Տրված ընթացիկ կանխավճարներ

2241

Տրված կանխավճարներ նյութեր ձեռք բերելու համար

2242

Տրված կանխավճարներ ապրանքներ ձեռք բերելու համար

2243

Տրված կանխավճարներ աշխատանքներ, ծառայություններ ձեռք բերելու համար

2244

Այլ նպատակներով տրված ընթացիկ կանխավճարներ

225

Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով

2251

Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով

2252

Դեբիտորական պարտքեր եկամտահարկի գծով

2253

Դեբիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով

2254

Դեբիտորական պարտքեր ակցիզային հարկի գծով

2255

Դեբիտորական պարտքեր գույքահարկի գծով

2256

Դեբիտորական պարտքեր հողի հարկի գծով

2257

Դեբիտորական պարտքեր մաքսատուրքի գծով

2258

Դեբիտորական պարտքեր պետական տուրքի գծով

2259

Դեբիտորական պարտքեր այլ պարտադիր վճարների գծով

226

Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր

227

Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով

228

Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով

2281

Առհաշիվ տրված գումարներ նյութեր ձեռք բերելու համար

2282

Առհաշիվ տրված գումարներ ապրանքներ ձեռք բերելու համար

2283

Առհաշիվ տրված գումարներ գործուղումների համար

2284

Այլ նպատակներով առհաշիվ տրված գումարներ

229

Այլ դեբիտորական պարտքեր

2291

Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով

2292

Դեբիտորական պարտքեր աշխատակիցների հետ այլ գործառնությունների գծով

2293

Դեբիտորական պարտքեր բողոքարկումների գծով

23-24

**ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**

231

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2311

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ

2312

Սկզբնապես որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2313

Սկզբնապես որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ընթացիկ մաս

232

Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2321

Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2322

Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ընթացիկ մաս

- 233 Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր
- 234 Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս
- 235 Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր
- 236 Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս
- 237 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս
- 238 Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով
- 2381 Չվաստակած ֆինանսական եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով
- 2382 Չվաստակած ֆինանսական եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների կարճաժամկետ մասի գծով
- 2383 Չվաստակած ֆինանսական եկամուտ կարճաժամկետ փոխառությունների գծով
- 2384 Չվաստակած ֆինանսական եկամուտ երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով
- 2385 Չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով

239	Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ
241	Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկում (անհավաքագրելիություն)
2412	Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)
2413	Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների անհավաքագրելիություն
2414	Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն
2415	Կարճաժամկետ փոխառությունների անհավաքագրելիություն
2416	Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն
2417	Ֆինանսական վարձակալության գծով համախառն մուտքերի կարճաժամկետ մասի անհավաքագրելիություն
25	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
251	Դրամարկղ
2511	Ազգային արժույթի դրամարկղ
2512	Արտարժույթի դրամարկղ
2513	Սառեցված գումարներ դրամարկղում
252	Հաշվարկային հաշիվ
2521	Հաշվարկային հաշիվ

2522

Սառեցված գումարներ հաշվարկային հաշվում

253

Արտարժութային հաշիվ

2531

Արտարժութային հաշիվ երկրի ներսում

2532

Արտարժութային հաշիվ արտերկրում

2533

Սառեցված գումարներ արտարժութային հաշվում

254

Այլ հաշիվներ բանկերում

2541

Ակրեդիտիվներ

2542

Չեկային գրքույկներ

2543

Այլ հաշիվներ բանկերում

255

Դրամական միջոցներ ճանապարհին

256

Դրամական փաստաթղթեր

26

ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

261

Ընթացիկ ակտիվներ հաշվանցումը
հետաձգված անուղղակի հարկերի գծով

262

Պատվիրատուներից ստացվելիք
համախառն գումարներ կառուցման
պայմանագրերի գծով

263

Որպես վաճառքի համար պահվող
դասակարգված ակտիվներ

2631

Որպես վաճառքի համար պահվող
դասակարգված հիմնական միջոցներ

2632	Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ նյութական ակտիվներ
2633	Որպես վաճառքի համար պահվող դասակարգված այլ ոչ ընթացիկ ակտիվներ
2634	Որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառված ընթացիկ ակտիվներ

ԴԱՍ 3. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

31	ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ
311	Կանոնադրական կապիտալ
3111	Հասարակ բաժնետոմսեր
3112	Արտոնյալ բաժնետոմսեր
3113	Բաժնեմասեր
3114	Փայեր
312	Չվճարված կապիտալ
3121	Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ
3122	Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ մինչև անվանական արժեքի չափով
3123	Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ անվանական արժեքը գերազանցող չափով
313	Հետ գնված կապիտալ
3131	Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով

3132 Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝
անվանական արժեքի և հետգնման գնի
տարբերության չափով

3133 Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝
անվանական արժեքով

3134 Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝
անվանական արժեքի և հետգնման գնի
տարբերության չափով

3135 Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքով

3136 Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքի և
հետգնման գնի տարբերության չափով

3137 Հետ գնված փայեր՝ անվանական արժեքով

3138 Հետ գնված փայեր՝ անվանական արժեքի և
հետգնման գնի տարբերության չափով

Էմիսիոն եկամուտ

314

32

**ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԵՎ
ՎԵՐԱՉԱՓՈՒՄԻՑ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

321

**Հիմնական միջոցների և ոչ նյութական
ակտիվների վերագնահատումից արժեքի աճ**

3211 Հիմնական միջոցների վերագնահատումից
արժեքի աճ

3212 Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից
արժեքի աճ

322

**Վաճառքի համար մատչելի ֆինանսական
ակտիվների՝ իրական արժեքով
վերաչափումից չիրացված օգուտներ և
կորուստներ**

3221 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ

3222 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ

323 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ

3231 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ

3232 Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ

324 Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ

3241 Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից

3242 Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածի գծով

3243 Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

33 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

331 Շահույթ կամ վնաս

3311 Շարունակվող գործունեությունից շահույթ կամ վնաս

3312 Ընդհատված գործունեությունից շահույթ կամ վնաս

34

ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ (ԶԾԱԾԿՎԱԾ ՎՆԱՍ)

341

Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում

3411

Նախորդ տարիների սխալների ուղղման հետևանքով կիրառման արդյունքում առաջացած ճշգրտում

3412

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքով կիրառման արդյունքում առաջացած ճշգրտում

342

Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)

343

Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)

344

Միջանկյալ շահաբաժիններ

35

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ

351

Պահուստային կապիտալ

352

Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ

ԴԱՍ 4. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

411	Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ
412	Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ
4121	Երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարներ
4122	Երկարաժամկետ չփոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ
4123	Երկարաժամկետ փոխարկելի պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ
4124	Մարելի արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ
4125	Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ
413	Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ
414	Չկրած տոկոսային ծախսեր Երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով
4141	Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի գծով
4142	Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների գծով
4143	Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով
415	Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

42

ԱՅԼ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

421

Ակտիվներին վերաբերող շնորհներ

422

Հետաձգված հարկային
պարտավորություններ

425

Ոչ ընթացիկ պահուստներ

426

Սահմանված հատուցումների պլանների
գծով պարտականության ներկա արժեքը

427

Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ
(վնաս)

428

Դեռևս չճանաչված անցյալ ծառայության
արժեքի աճ

429

Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ

ԴԱՍ 5. ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

51

ՍՏԱՑՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐ,
ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

511

Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք
համախառն գումարներ

512

Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք
համախառն գումարների կարճաժամկետ
մաս

513

Կարճաժամկետ փոխառությունների գծով
վճարվելիք համախառն գումարներ

514	Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս
5141	Տրված երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս
5142	Տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս
5143	Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս
515	Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս
516	Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով
5161	Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ վարկերի գծով
5162	Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով
5163	Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ փոխառությունների գծով
5164	Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով
5165	Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով
517	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
5171	Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ

5172

Սկզբնապես որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորություններ

518

Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

52-53

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

521

Կրեդիտորական պարտքեր գնումների գծով

5211

Կրեդիտորական պարտքեր ստացված հումքի, նյութերի գծով

5212

Կրեդիտորական պարտքեր ապրանքների գնումների գծով

5213

Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով

5214

Կրեդիտորական պարտքեր ստացված ֆինանսական ակտիվների գծով

5215

Կրեդիտորական պարտքեր ստացված հիմնական միջոցների գծով

5216

Կրեդիտորական պարտքեր այլ գնումների գծով

523

Ստացված կանխավճարներ

5231

Ստացված կանխավճարներ վաճառվելիք արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գծով

5232

Ստացված կանխավճարներ վաճառվելիք ոչ ընթացիկ ակտիվների գծով

5233

Ստացված կանխավճարներ գործառնական վարձակալության գծով

5234

Այլ նպատակներով ստացված կանխավճարներ

524

Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով

5241

Պարտքեր շահութահարկի գծով

5242

Պարտքեր եկամտահարկի գծով

5243

Պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով

5244

Պարտքեր ակցիզային հարկի գծով

5245

Պարտքեր գույքահարկի գծով

5246

Պարտքեր հողի հարկի գծով

5247

Պարտքեր մաքսատուրքի գծով

5248

Պարտքեր հարկերի դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների գծով

5249

Պարտքեր այլ պարտադիր վճարների գծով

525

Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով

5251

Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ աշխատակիցների հաշվին

5252

Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ գործատուների հաշվին

5253

Պարտավորություններ՝ փոխհատուցելի բացակայությունների գծով հաշվեգրվելիք պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով

527

Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով

5271 Պարտքեր աշխատավարձի վճարման գծով

5272 Պարտքեր փոխհատուցելի բացակայությունների գծով

5273 Պարտքեր պարգևավճարների գծով

5274 Պարտքեր ավանդագրված հատուցումների գծով

528 Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով

5281 Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով

5282 Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով

529 Պարտքեր շահաբաժինների գծով

5291 Վճարվելիք շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով

5292 Վճարվելիք շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով

531 Այլ ընթացիկ պարտավորություններ

5311 Պարտքեր գործառնական վարձակալության գծով

5312 Պարտքեր տույժերի, տուգանքների գծով

5313 Պարտքեր ապահովագրավճարների գծով

54

**ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

541

Եկամուտներին վերաբերող շնորհներ

542

Վճարումը հետաձգված հարկային
պարտավորություններ

543

Ընթացիկ պահուստներ

5431

Երաշխիքային վաճառքների գծով ընթացիկ
պահուստներ

5432

Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ
պահուստներ

5433

Տրամադրված երաշխավորությունների և
երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ

5434

Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մաս

5435

Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ

544

Պատվիրատուներին հասանելի
համախառն գումարներ կառուցման
պայմանագրերի գծով

ԴԱՍ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

61

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

611

Արտադրանքի, ապրանքների,
աշխատանքների, ծառայությունների
իրացումից հասույթ

6111

Արտադրանքի վաճառքներից հասույթ

6112

Ապրանքների վաճառքներից հասույթ

6113

Աշխատանքների կատարումից հասույթ

6114

Ծառայությունների մատուցումից հասույթ

612	Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում
614	Գործառնական այլ եկամուտներ
6141	Այլ պաշարների օտարումից եկամուտներ
6142	Պաշարների արժեքի փոփոխությունից եկամուտներ, դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) հակադարձումից եկամուտներ
6143	Գործառնական վարձակալությունից եկամուտներ
6144	Եկամուտներ տույժերից, տուգանքներից
6145	Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ
6146	Գործառնական այլ եկամուտներ
615	Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ
6151	Բերքահավաքից (ներառյալ՝ ծնածից) եկամուտ
6152	Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ
6153	Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ
6154	Կենսաբանական ակտիվների օտարումից եկամուտ
62	ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
621	Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ

6211	Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ
6212	Ոչ նյութական ակտիվների օտարումից եկամուտներ
6213	Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ
6214	Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ
622	Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ
624	Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ
6241	Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ
6242	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից օգուտներ
6243	Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորստի հակադարձումից օգուտներ
6244	Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկման կորստի հակադարձումից օգուտներ
6245	Ներդրումային գույքի վերաչափումից օգուտներ
6246	Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկման հակադարձումից) օգուտներ
625	Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ
626	Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից օգուտներ

6261	«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից օգուտներ
6263	Վաճառքի համար մատչելի ոչ գործառնական ֆինանսական ակտիվների վերաչափումից օգուտներ
6264	Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից օգուտներ
6265	Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից օգուտներ
627	Ֆինանսական ներդրումներից եկամուտներ
6271	Շահաբաժիններ
6272	Տոկոսային եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով
6273	Ֆինանսական վարձակալությունից եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով
628	Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ
629	Այլ եկամուտներ
63	ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
631	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից

632	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ
6321	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից եկամուտներ
6322	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի «իրական արժեք հասնած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտներ
64	ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ՕԳՈՒՏՆԵՐ
642	Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ
643	Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ
644	Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ
6441	Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված օգուտներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից
6442	Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված օգուտներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածի գծով
6443	Վերադասակարգման ճշգրտումներ. փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով

67

**ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՃԱՆԱՉՎՈՂ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

671

**Հիմնական միջոցների և ոչ նյութական
ակտիվների վերաչափումից օգուտներ**

6711

Հիմնական միջոցների վերագնահատումից
օգուտներ

6712

Հիմնական միջոցների արժեզրկման
հակադարձումից օգուտներ

6713

Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից
օգուտներ

6714

Ոչ նյութական ակտիվների արժեզրկման
հակադարձումից օգուտներ

672

**Վաճառքի համար մատչելի ֆինանսական
ակտիվների՝ իրական արժեքով
վերաչափումից օգուտներ**

673

**Հեջավորման գործիքների՝ իրական
արժեքով վերաչափումից օգուտներ**

674

**Արտերկրյա ստորաբաժանումների հետ
կապված փոխարժեքային օգուտներ**

6741

Փոխարժեքային օգուտներ՝ արտերկրյա
ստորաբաժանումների ֆինանսական
հաշվետվությունների վերահաշվարկումից

6742

Փոխարժեքային օգուտներ՝ արտերկրյա
ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս
համարվող դրամային հոդվածի գծով

6743

Փոխարժեքային օգուտներ՝ արտերկրյա
ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի
գծով

ԴԱՍ 7. ԾԱԽՍԵՐ**71****ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾԱԽՍԵՐ****711****Իրացված արտադրանքի, ապրանքների,
աշխատանքների, ծառայությունների
ինքնարժեք**

7111

Վաճառված արտադրանքի ինքնարժեք

7112

Վաճառված ապրանքների ինքնարժեք

7113

Կատարված աշխատանքների ինքնարժեք

7114

Մատուցված ծառայությունների ինքնարժեք

712**Իրացման ծախսեր**

7121

Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական
ապահովության վճարներ

7122

Հիմնական միջոցների մաշվածության, դրանց
նորոգման և սպասարկման գծով ծախսեր

7123

Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների
փաթեթավորման, տարայի, տեսակավորման,
պահպանման ծախսեր

7124

Արտադրանքի, ապրանքների իրացման
տրանսպորտային և ապահովության ծախսեր

7125

Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն

7126

Մարկետինգի և գովազդի ծախսեր

7127

Իրացման այլ ծախսեր

713**Վարչական ծախսեր**

- 7131 Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ
- 7132 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի), դրանց նորոգման և սպասարկման ծախսեր
- 7133 Գործուղման և ներկայացուցչական ծախսեր
- 7134 Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր
- 7135 Գրասենյակային և կոմունալ ծախսեր
- 7136 Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր
- 7137 Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովության ծախսեր
- 7138 Զփոխհատուցվող հարկերից ծախսեր
- 7139 Վարչական այլ ծախսեր

714**Գործառնական այլ ծախսեր**

- 7141 Այլ պաշարների օտարումից ծախսեր
- 7142 Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսեր, վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) գծով ծախսեր, երաշխիքային սպասարկման և վերանորոգման գծով ծախսեր
- 7143 Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության ծախսեր
- 7144 Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր
- 7145 Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսեր, խոտանված արտադրանքի հետ կապված ծախսեր
- 7146 Հետազոտության և մշակման ծախսեր

	7147	Հիմնական միջոցների լուծարման ծախսեր
	7148	Գործառնական այլ ծախսեր
715		Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր
	7151	«Գյուղատնտեսական գործունեության ծախսումներ»
	7152	Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ
	7153	Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ
	7154	Կենսաբանական ակտիվների օտարումից ծախսեր
72		ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ
721		Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր
	7211	Հիմնական միջոցների օտարումից ծախսեր
	7212	Ոչ նյութական ակտիվների օտարումից ծախսեր
	7213	Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր
	7214	Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր
722		Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր

724

Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ

7241

Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ

7242

Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստներ

7243

Հիմնական միջոցների գծով արժեզրկումից կորուստներ

7244

Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ

7245

Ներդրումային գույքի վերաչափումից կորուստներ

7246

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկումից) կորուստներ

725

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ

726

Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ

7261

Որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից կորուստներ

7263

Վաճառքի համար մատչելի ոչ գործառնական ֆինանսական ակտիվների վերաչափումից կորուստներ

7264

Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից կորուստներ

7265

Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ

727	Ֆինանսական ծախսեր
7271	Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները
7272	Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր
7274	Պահուստների զեղչման ազդեցության ճշգրտման հետևանքով առաջացած տոկոսային ծախսեր
7275	Որպես պարտավորություն դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ և տոկոսներ
728	Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր
729	Այլ ծախսեր
73	ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԽՍԵՐ
731	Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից
732	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր
7321	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից ծախսեր

	7322	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի՝ «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստներ
733		Շահութահարկ ընդհատված գործունեության
	7331	Ընդհատված գործունեության շահույթի կամ վնասի գծով շահութահարկ
	7332	Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից կամ վերաչափումից օգուտի կամ կորստի գծով շահութահարկ
74		ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ԿՈՐՈՒՍՏՆԵՐ
742		Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ
743		Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ
744		Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ
	7441	Վերադասակարգման ճշգրտումներ. Փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից
	7442	Վերադասակարգման ճշգրտումներ. Փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածի գծով

	7443	Վերադասակարգման ճշգրտումներ. Փոխարժեքային իրացված կորուստներ՝ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի գծով
75		ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ԵԿԱՄՈՒՏ)
	751	Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)
	7511	Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)
	7512	Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)
77		ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՃԱՆԱԶՎՈՂ ԾԱԽՍԵՐ
	771	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ
	7711	Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստ
	7712	Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստ
	7713	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստ
	7714	Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստ
	772	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ
	773	Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ

774

Արտերկրյա ստորաբաժանումների հետ
կապված փոխարժեքային
տարբերություններից կորուստներ

7741

Փոխարժեքային կորուստներ՝ արտերկրյա
ստորաբաժանումների ֆինանսական
հաշվետվությունների վերահաշվարկումից

7742

Փոխարժեքային կորուստներ՝ արտերկրյա
ստորաբաժանումներում զուտ ներդրման մաս
համարվող դրամային հոդվածի գծով

7743

Փոխարժեքային կորուստներ՝ արտերկրյա
ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջերի
գծով

775

Ակտուարային վնասներ

ԴԱՍ 8. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ

81

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ

811

Հիմնական արտադրություն

8111

Ուղղակի նյութական ծախսումներ

8112

Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8113

Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8114

Ուղղակի արտադրական այլ ծախսումներ

8115

Օժանդակ արտադրության ծախսումներ

8116

Անուղղակի արտադրական ծախսումներ

812

Օժանդակ արտադրություն

8121

Ուղղակի նյութական ծախսումներ

- 8122 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով
- 8123 Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
- 8124 Օժանդակ արտադրության այլ ուղղակի ծախսումներ
- 8125 Անուղղակի արտադրական ծախսումներ

813**Անուղղակի արտադրական ծախսումներ**

- 8131 Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ
- 8132 Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովության վճարներ
- 8133 Արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածություն
- 8134 Արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսումներ
- 8135 Արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա
- 8136 Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ
- 8137 Արտադրական անձնակազմի գործուղման ծախսումներ
- 8138 Անուղղակի արտադրական այլ ծախսումներ

814**Խոտան և դրա շտկման ծախսումներ**

- 8141 Խոտան արտադրանք
- 8142 Խոտանի ուղղման նյութական ծախսումներ

8143 Խոտանի ուղղման աշխատանքային ծախսումներ

8144 Խոտանի ուղղման գծով սոցիալական
ապահովության վճարներ

8145 Խոտանի ուղղման այլ ծախսումներ

82

**Ոչ ընթացիկ ակտիվների կառուցման
(ստեղծման) ծախսումներ**

821

**Ոչ ընթացիկ նյութական ակտիվների
կառուցման (ստեղծման) ծախսումներ**

8211 Ուղղակի նյութական ծախսումներ

8212 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8213 Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8214 Այլ ուղղակի ծախսումներ

8215 Անուղղակի ծախսումներ

822

**Սարքավորումների տեղակայման
ծախսումներ**

8221 Ուղղակի նյութական ծախսումներ

8222 Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8223 Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8224 Այլ ուղղակի ծախսումներ

8225 Անուղղակի ծախսումներ

823**Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա
կապիտալացվող հետագա ծախսումներ**

8231

Ուղղակի նյութական ծախսումներ

8232

Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8233

Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8234

Այլ ուղղակի ծախսումներ

8235

Անուղղակի ծախսումներ

824**Ոչ նյութական ակտիվների ներստեղծման
ծախսումներ**

8241

Ուղղակի նյութական ծախսումներ

8242

Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8243

Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8244

Այլ ուղղակի ծախսումներ

8245

Անուղղակի ծախսումներ

825**Ոչ նյութական ակտիվների վրա
կապիտալացվող հետագա ծախսումներ**

8251

Ուղղակի նյութական ծախսումներ

8252

Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8253

Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8254

Այլ ուղղակի ծախսումներ

8255

Անուղղակի ծախսումներ

826

Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման
ծախսումներ

8261

Ուղղակի նյութական ծախսումներ

8262

Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման
գծով

8263

Ուղղակի ծախսումներ սոցիալական
ապահովության վճարների գծով

8264

Այլ ուղղակի ծախսումներ

8265

Անուղղակի ծախսումներ

ԴԱՍ 9. ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՈՒՄՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

91

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՉՊԱՏԿԱՆՈՂ
ԱԿՏԻՎՆԵՐ

911

Գործառնական վարձակալությամբ
ընդունված հիմնական միջոցներ

912

Պատասխանատու պահպանման ընդունված
ապրանքանյութական արժեքներ

913

Վերամշակման ընդունված նյութեր

914

Տեղակայման ընդունված սարքավորումներ

915

Կոմիսիայի և կոնսիգնացիայի
պայմանագրերով ընդունված ապրանքներ

916

Որպես գրավ պահվող ակտիվներ

92

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՇՎԵԿՈՒՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ**

921

**Հավատարմագրային կառավարման
պայմանագրի համաձայն կառավարվող
միջոցներ**

9211

Հավատարմագրային կառավարման
պայմանագրի համաձայն կառավարվող
դրամական միջոցներ

9212

Հավատարմագրային կառավարման
պայմանագրի համաձայն կառավարվող
արժեթղթեր

922

**Կոմիսիայի և կոնսիգնացիայի
պայմանագրերի համաձայն ստացված
միջոցներ**

9221

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի
համաձայն արժեթղթերում ներդրումներ
կատարելու համար դրամական միջոցներ

9222

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի
համաձայն ստացված արժեթղթեր

9223

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի
համաձայն ձեռք բերված արժեթղթեր

9224

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի
համաձայն ընդունված (ձեռք բերված)
արժեթղթերի իրացումից դրամական միջոցներ

923

**Հավատարմագրային կառավարմամբ և
բրոքերային գործունեությամբ առաջացած
դեբիտորական պարտքեր և տրամադրված
փոխառություններ**

9231

Դեբիտորական պարտքեր արժեթղթերի
վաճառքների գծով

9232

Դեբիտորական պարտքեր հաշվեգրված
տոկոսների գծով

	9233	Դեբիտորական պարտքեր հայտարարված շահաբաժինների գծով
	9234	Տրամադրված փոխառություններ
924		Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ
	9241	Պարտավորություններ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ստացված միջոցների գծով
	9242	Պարտավորություններ կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով
925		Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք
926		Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ
	9261	Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր
	9262	Ստացված փոխառություններ
93		ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ
931		Պայմանական պարտավորություններ
932		Պայմանական ակտիվներ
94		ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

941	Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր
942	Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր
943	Չհատուցված հարկային վնաս
944	Գրավադրված ակտիվներ
945	Խիստ հաշվառման բլանկներ
946	Պարբերական և մասնագիտական գրականություն
947	Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ

III. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Հաշվապահական հաշվառման հաշիվների կիրառման հրահանգում նկարագրված են հաշվապահական հաշվառման վարման հետ կապված հիմնական մոտեցումները: Նրանում բերված են դասերի, հաշիվների խմբերի, առաջին կարգի (սինթետիկ) հաշիվների հակիրճ բնութագրերը, բացահայտված են վերջիններիս կառուցվածքը և նշանակությունը, առավել տարածված գործառնությունների տիպային (ոչ պարտադիր) հաշվապահական թղթակցությունները: Այն գործառնությունները, որոնց հաշվապահական թղթակցությունները սույն բաժնում նախատեսված չեն, կազմակերպությունները դրանց թղթակցությունները կազմում են ինքնուրույն՝ ելնելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից և սույն հրահանգից: Հաշվապահական հաշվառման հաշիվների նկարագիրն ըստ բաժինների տրված է հաշվային պլանով նախատեսված հաջորդականությամբ:

ԴԱՍ 1 «ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող հաշիվների, ակտիվային են և նախատեսված են ոչ ընթացիկ ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 1 «Ոչ ընթացիկ ակտիվներ» դասը իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 11-12 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ», 13 «Ոչ նյութական ակտիվներ», 14 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» և 15 «Այլ ոչ ընթացիկ ակտիվներ»:

Ակտիվների՝ ոչ ընթացիկին վերագրման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում:

ԽՈՒՄԲ 11- 12 «ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒՑԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

11-12 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 111 «Մաշվող հիմնական միջոցներ», 112 «Հիմնական միջոցների մաշվածություն», 115 «Հողամասեր», 116 «Կենսաբանական ակտիվներ», 117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն», 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ», 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ», 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն», 122 «Ներդրումային գույք», 123

«Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն» և 124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»:

Հաշիվ 111 «Մաշվող հիմնական միջոցներ»

111 «Մաշվող հիմնական միջոցներ» հաշիվը նախատեսված է սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող, այդ թվում՝ գործառնական վարձակալության հանձնված (բացի ներդրումային գույքից) մաշվող հիմնական միջոցների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հիմնական միջոցների՝ նյութական ակտիվներին վերագրման, դրանց կազմի, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է սեփական մաշվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը, հետագա կապիտալացված ծախսումները, վերագնահատումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված, ֆինանսական վարձակալության հանձնված, ինչպես նաև դուրս գրված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցների կամ հիմնական հոտից խոտանված անասունների արժեքը (սկզբնական՝ հաշվի առած հետագա կապիտալացված ծախսումները և վերագնահատումները), վերագնահատումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է սեփական մաշվող հիմնական միջոցների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

111 «Մաշվող հիմնական միջոցներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1111 «Շենքեր», 1112 «Կառուցվածքներ», 1113 «Փոխանցող հարմարանքներ», 1114 «Մեքենաներ և սարքավորումներ», 1115 «Տրանսպորտային միջոցներ», 1116 «Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ», 1119 «Այլ հիմնական միջոցներ»:

Հիմնական միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնական միջոցների տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

111 «Մաշվող հիմնական միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների մուտքագրում՝	
ա) կազմակերպությունում կառուցված (ստեղծված), տեղակայված	118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»
բ) մատակարարներից ձեռք բերված, տեղակայում չպահանջող	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
գ) մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»

դ) ֆինանսական վարձակալությամբ ստացվածների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելիս	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
ե) նախկինում ֆինանսական վարձակալության տրվածի հետ ընդունում	146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» 237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս»
զ) ներդրումային գույքի՝ որպես հիմնական միջոց վերադասակարգում	122 «Ներդրումային գույք»
է) որպես շնորհ ստացված	421 «Ակտիվների վերաբերող շնորհներ»
ը) գույքագրմամբ հայտնաբերված ավելցուկ	614 «Գործառնական այլ եկամուտներ»
թ) այլ ակտիվների հետ փոխանակման կարգով ստացված	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ»
2. Տեղակայում չպահանջող հիմնական միջոցների ձեռք բերման (ստացման) հետ կապված ծախսումների (տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման ծախսումներ, չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտաթուղթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
3. Օգտագործման համար մատչելի հիմնական միջոցների վրա հետագա ծախսումների կապիտալացում	823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»

4. Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
5. Ինքնարժեքի մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի ավելացում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է հիմնական միջոցի սկզբնական արժեքում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»

111 «Մաշվող հիմնական միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված, ֆինանսական վարձակալության տրված, այլ կերպ օտարված հիմնական միջոցների, բացառությամբ ընդհատված գործունեությանը վերագրվողներից, հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկման տարբերություն) դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Ընդհատված գործունեությանը վերագրելի վաճառված (օտարված) հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
3. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
4. Լուծարված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
5. Անհատույց տրված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի արտացոլում	728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»
6. Որպես շնորհ ստացված հիմնական միջոցների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
7. Հիմնական միջոցի՝ որպես ներդրումային գույք վերադասակարգում	122 «Ներդրումային գույք»
8. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարների դուրս գրում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն»
9. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված, հիմնական միջոցների կուտակված արժեզրկման դուրս գրում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»
10. Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազում՝	

ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
11. Բնքնարժեքի մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի նվազում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է հիմնական միջոցի սկզբնական արժեքում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
12. Հիմնական միջոցների պակասորդների և կորուստների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»

Հաշիվ 112 «Հիմնական միջոցների մաշվածություն»

112 «Հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը նախատեսված է սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող հիմնական միջոցների մաշվածության վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Մաշվածության հաշվառման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրված գումարները, վերագնահատումից մաշվածության աճը, իսկ դեբետում՝ օտարված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված, ֆինանսական վարձակալության տրված, մաշվածության հաշվեգրված գումարների դուրս գրումը, ինչպես նաև վերագնահատումից մաշվածության նվազումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունում առկա սեփական հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

112 «Հիմնական միջոցների մաշվածություն» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1121 «Շենքերի մաշվածություն», 1122 «Կառուցվածքների մաշվածություն», 1123 «Փոխանցող հարմարանքների մաշվածություն», 1124 «Մեքենաների և սարքավորումների մաշվածություն», 1125 «Տրանսպորտային միջոցների մաշվածություն», 1126 «Արտադրական գույքի, տնտեսական գույքի, գործիքների մաշվածություն», 1129 «Այլ հիմնական միջոցների մաշվածություն»:

Հիմնական միջոցների մաշվածության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնական միջոցների տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

112 «Հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվներին

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Մեփական հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրում	543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության աճ	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
4. Ֆինանսական վարձակալությամբ ստացված և վարձակալի սեփականությունը դարձած հիմնական միջոցների մաշվածության արտացոլում	121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն»
5. Նախորդ ժամանակաշրջաններում (սխալի արդյունքում) պակաս հաշվարկված մաշվածության ուղղում հետընթաց վերահաշվարկ	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

112 «Հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ

1. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված հիմնական միջոցների, ինչպես նաև որպես վաճառքի համար պահվող դասակարգված, հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարների դուրս գրում	111 «Մաշվող հիմնական միջոցներ»
2. Հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
3. Նախորդ ժամանակաշրջաններում (սխալի արդյունքում) ավել հաշվարկված մաշվածության հետընթաց վերահաշվարկ (ուղղում)	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

Հաշիվ 115 «Հողամասեր»

115 «Հողամասեր» հաշիվը նախատեսված է սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող հողամասերի (այդ թվում նաև շենքերի և շինությունների տակ գտնվող և բնական ռեսուրսներով հողամասերի) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հողամասերի՝ ակտիվների համապատասխան խմբին (հիմնական միջոցների կամ ներդրումային գույքի) վերագրման կարգի, դրանց չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՄ 16-ում և «Ներդրումային գույք» ՀՀՄՄ 40-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերած (ստացված) հողամասերի սկզբնական արժեքը, վերագնահատումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված, ֆինանսական վարձակալության տրված հողամասերի հաշվեկշռային արժեքը, վերագնահատումից արժեքի աճի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հողամասերի արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Հողի բարելավման նպատակով կատարված (մեղիորացիայի, չորացման և այլ ծախսումներ) կապիտալ ծախսումները չեն ավելացվում հողամասի արժեքին և հաշվառվում են 154 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով» հաշվում:

115 «Հողամասեր» հաշվին կից կարող են բացվել երկրորդ կարգի հաշիվներ՝ հողամասեր առանց շինությունների, շինություններով, օգտակար հանածոներով և այլն:

Հողամասերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

115 «Հողամասեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ

1. Հողամասերի ձեռք բերում	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Մասնակիցների (բաժնետերերի) կողմից հողամասի ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
3. Հողամասերի ձեռք բերման հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ, հողի գնահատման, տարածքի մաքրման և հավասարեցման համար վճարում և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
4. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերում	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
5. Ներդրումային գույք դասակարգված հողամասի՝ որպես հիմնական միջոց վերադասակարգում	122 «Ներդրումային գույք»
6. Հողամասերի ստացումը որպես պետական շնորհ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
7. Հողամասերի վերագնահատումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

115 «Հողամասեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Վաճառված, ֆինանսական վարձակալության տրված, այլ կերպ օտարված հողամասերի, բացառությամբ ընդհատված գործունեությանը վերագրվողներից, հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված արժեզրկման տարբերություն) դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Ընդհատված գործունեությանը վերագրելի հողամասերի հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված արժեզրկման տարբերություն) դուրս գրում	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
3. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հողամասերի հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
4. Որպես պետական շնորհի ստացված հողամասերի հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
5. Հողամասերի՝ որպես ներդրումային գույք վերադասակարգում	122 «Ներդրումային գույք»
6. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված հողամասերի կուտակված արժեզրկման դուրս գրում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»
7. Հողամասերի վերագնահատումից արժեքի նվազում՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

Հաշիվ 116 «Կենսաբանական ակտիվներ»

116 «Կենսաբանական ակտիվներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կենսաբանական ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Կենսաբանական ակտիվների հասկացությունը, դրանց ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Գյուղատնտեսություն» ՀՀՄՄ 41-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերած կենսաբանական ակտիվների սկզբնական արժեքը (իրական արժեքը), վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված, կենսական գործընթացները դադարեցված կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքը, վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ կենսաբանական ակտիվների արժեքը (հաշվեկշռային արժեքը՝ «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով չափվող կենսաբանական ակտիվների համար և սկզբնական արժեքը՝ մնացած կենսաբանական ակտիվների համար):

116 «Կենսաբանական ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1611 «Պտղատու այգիներ», 1612 «Ծառեր տնկադաշտում», 1613 «Թփեր», 1614 «Խաղողի վազեր», 1615 «Կաթնատու հոտ», 1616 «Մսատու կենդանիներ»:

Կենսաբանական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ տեսակների, տարիքային խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

116 «Կենսաբանական ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կենսաբանական ակտիվների ձեռք բերում	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Հիմնադիրների (բաժնետերերի) կողմից կենսաբանական ակտիվների ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
3. Կենսաբանական ակտիվների ձեռք բերման հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
4. Կենսաբանական ակտիվների ստացում որպես պետական շնորհ	
ա) ոչ պայմանական պետական շնորհի դեպքում	628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»
բ) որոշակի պայմաններով պետական շնորհի դեպքում	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
5. Ծնածից կամ այլ կերպ գյուղատնտեսական գործունեությունից ստացված կենսաբանական ակտիվների մուտքագրում	615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ»
6. Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ (պայմանավորված զնի կամ ֆիզիկական փոփոխությամբ)	615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ»

116 «Կենսաբանական ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) կենսաբանական ակտիվների (բացի ընդհատված գործունեությանը վերագրվողներից) հաշվեկշռային արժեքի դուրս գրում	
ա) ստացված կամ ստացվելիք հատուցումը չգերազանցող չափով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 255 «Դրամական միջոցներ ճանապարհին» 523 «Ստացված կանխավճարներ»
բ) ստացված կամ ստացվելիք հատուցումը գերազանցող չափով	715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»
2. Ընդհատված գործունեությանը վերագրելի վաճառված (օտարված) կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում՝	
ա) ստացված կամ ստացվելիք հատուցումը չգերազանցող չափով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 255 «Դրամական միջոցներ ճանապարհին» 523 «Ստացված կանխավճարներ»
բ) ստացված կամ ստացվելիք հատուցումը գերազանցող չափով	732«Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
3. Որպես շնորհ ստացված կենսաբանական ակտիվների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
4. Կենսաբանական ակտիվների կուտակված մաշվածության դուրս գրում (վաճառքի, իրական արժեքով չափմանն անցնելու կամ այլ դեպքերում)	117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն»
5. Կենսաբանական ակտիվների կուտակված արժեզրկման դուրս գրում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»

6. Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ (պայմանավորված գնի կամ ֆիզիկական փոփոխությամբ)	715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»
7. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
8. Բերքատու կենսաբանական ակտիվների դասակարգումը որպես սպառվող կենսաբանական ակտիվների	212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»

Հաշիվ 117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն»

117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն» հաշիվը նախատեսված է կենսաբանական ակտիվի մաշվածության վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այս հաշիվը կիրառելի է միայն այն կենսաբանական ակտիվի համար, որոնց սկզբնական ճանաչման պահին դրանց համար շուկայում որոշված գները կամ արժեքները մատչելի չեն, և որոնց համար իրական արժեքի այլընտրանքային գնահատումները համարվում են բացահայտ անարժանահավատ: Կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվառումն իրականացվում է «Հիմնական միջոցներ» ՀՀՄՄ 16-ով սահմանված մոտեցումներին համապատասխան:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է կենսաբանական ակտիվների հաշվարկված մաշվածության գումարը, իսկ դեբետում՝ կենսաբանական ակտիվների կուտակված մաշվածության գումարների դուրս գրումը դրանց օտարման, որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու, իրական արժեքով չափումն հնարավոր դառնալու կամ այլ դեպքերում: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է այն կենսաբանական ակտիվների գծով կուտակված մաշվածության գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել սկզբնական ճանաչման պահին և հետագայում: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Կենսաբանական ակտիվների մաշվածության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների տեսակների, տարիքային խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվեզրում	811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»

117 «Կենսաբանական ակտիվների մաշվածություն» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ

Կենսաբանական ակտիվների կուտակված մաշվածության դուրս գրում (դրանց օտարման, որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու, իրական արժեքով չափումն հնարավոր դառնալու կամ այլ դեպքերում)	116 «Կենսաբանական ակտիվներ»
---	--------------------------------

Հաշիվ 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»

118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Դրանք ներառում են կառուցման ընթացքում գտնվող կամ ձեռք բերված, սակայն դեկավարության մտադրություններին համապատասխան օգտագործման համար դեռևս ոչ մատչելի (ոչ պատրաստ գտնվելու վայրով կամ վիճակով պայմանավորված) հիմնական միջոցները, ինչպես օրինակ, տեղակայում պահանջող սարքավորումները:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է հիմնական միջոցների կառուցման, տեղակայման ենթակա սարքավորումների ձեռք բերման և տեղակայման կուտակվող ծախսումները, ինչպես նաև այլ հիմնական միջոցների ձեռքբերման ծախսումները, որոնք դեռ մատչելի չեն օգտագործման համար, իսկ կրեդիտում՝ կառուցումը կամ տեղակայումն ավարտված, կազմակերպության դեկավարության մտադրություններին համապատասխան եղանակով գործելուն պատրաստ հիմնական միջոցների սկզբնական արժեքը: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է այն հիմնական միջոցների (ներառյալ՝ տեղակայման ենթակա սարքավորումների և կառուցման ընթացքում գտնվողների) արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք դեռ մատչելի (պատրաստ) չեն օգտագործվելու (գործելու) դեկավարության մտադրություններին համապատասխան եղանակով:

118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1181 «Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր», 1182 «Օգտագործման համար ոչ մատչելի կառուցվածքներ», 1183 «Օգտագործման համար ոչ մատչելի փոխանցող հարմարանքներ», 1184 «Օգտագործման համար ոչ մատչելի մեքենաներ և սարքավորումներ», 1185 «Օգտագործման համար ոչ մատչելի տրանսպորտային միջոցներ», 1186 «Օգտագործման համար ոչ մատչելի արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ», 1189 «Օգտագործման համար ոչ մատչելի այլ հիմնական միջոցներ»:

Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կառուցվող հիմնական միջոցների օբյեկտների, կատարվող աշխատանքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների կառուցման գծով կուտակվող ծախսումների արտացոլում	821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»
2. Հիմնական միջոցների գծով անավարտ հետագա կապիտալացվող ծախսումների արտացոլում	823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»
3. Կազմակերպության դեկավարության մտադրություններին համապատասխան եղանակով գործելուն դեռևս ոչ պատրաստ հիմնական միջոցների (ներառյալ՝ տեղակայման ենթակա սարքավորումներ) մուտքագրում	

ա) մատակարարներից ձեռք բերված	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
բ) մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
գ) որպես պետական շնորհ ստացված	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
4. Կազմակերպության ղեկավարության մտադրություններին համապատասխան եղանակով գործելուն դեռևս ոչ պատրաստ հիմնական միջոցների (ներառյալ՝ տեղակայման ենթակա սարքավորումների) ձեռք բերման (ստացման) և տեղակայման հետ կապված ծախսումների (տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման ծախսումներ, չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն) արտացոլում	228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
5. Սարքավորումների տեղակայման հետ կապված ծախսումների արտացոլում	822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ»

6. Կապալառուի կողմից կառուցվող հիմնական միջոցների ավարտուն մասի արտացոլում	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
7. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կազմակերպությունում կառուցումը (տեղակայումը) ավարտած կամ այլ կերպ կազմակերպության ղեկավարության մտադրություններին համապատասխան եղանակով գործելուն պատրաստ (օգտագործման համար մատչելի) դարձած հիմնական միջոցների արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ»
2. Որպես շնորհի ստացված օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
3. Ավարտված կամ անավարտ գույքի՝ որպես ներդրումային գույք դասակարգում	122 «Ներդրումային գույք»

4. Վաճառված (օտարված) օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների, բացառությամբ ընդհատված գործունեությանը վերագրվողներից, հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված արժեզրկման տարբերություն) դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
5. Ընդհատված գործունեությանը վերագրելի վաճառված (օտարված) օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված արժեզրկման տարբերություն) դուրս գրում	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
6. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
7. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
8. Վաճառված (օտարված) և որպես վաճառքի համար պահվող դասակարգված օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների կուտակված արժեզրկման դուրս գրում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»
9. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների պակասորդների և կորուստների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»

Հաշիվ 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»

119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների՝ ակտիվներին վերագրման, դրանց չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Վարձակալություն» ՀՀՄՄ 17-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեքը, իսկ կրեդիտում՝ վարձակալի սեփականություն դարձած կամ վարձատուին հետ վերադարձված հիմնական միջոցների արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է վարձակալված հիմնական միջոցների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արտացոլում	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Ուղղակի ֆինանսական վարձակալությանը վերաբերող ծախսումների (վարձակալական պայմանագրերի շուրջը բանակցելիս և կնքելիս առաջացող և այլն) արտացոլում	228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր»
2. Վարձատուին հետ վերադարձված ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների կուտակված մաշվածության ու արժեզրկման դուրս գրում	121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»
3. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հետ վերադարձում (հաշվեկշռային արժեքով)	

- մինչև ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների (հասնած չկրած տոկոսային ծախսերը) մեծությունը	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
- ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարները գերազանցող մասով	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
4. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
5. Վերագնահատման կամ ապաճանաչման ժամանակ կուտակված մաշվածության դուրս գրում	121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն»

Հաշիվ 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն»

121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածության վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Մաշվածության հաշվառման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրված գումարները, վերագնահատումից մաշվածության աճը, իսկ դեբետում՝ վարձակալի սեփականություն դարձած կամ վարձատուին վերադարձված վարձակալված հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարների դուրս գրումը, ինչպես նաև վերագնահատումից մաշվածության նվազումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունում առկա ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հաշվեգրված մաշվածության գումարը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրում	543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Ֆինանսական վարձակալությամբ ստացված և գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության աճ	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» հաշիվը
դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վարձակալի սեփականությունը դարձած ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածության արտացոլում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն»

2. Վարձատուին հետ վերադարձված կամ վերագնահատված ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների կուտակված մաշվածության դուրս գրում	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
3. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

Հաշիվ 122 «Ներդրումային գույք»

122 «Ներդրումային գույք» հաշիվը նախատեսված է ներդրումային գույքի առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ներդրումային գույքի ճանաչման, չափման և դասակարգման մոտեցումները նկարագրված են «Ներդրումային գույք» ՀՀՄՄ 40-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված, կառուցված, կառուցման կամ բարելավման ընթացքում գտնվող, որպես ներդրումային գույք վերադասակարգված այլ գույքի սկզբնական արժեքը, հետագա կապիտալացված ծախսումները, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված, ֆինանսական վարձակալության հանձնված, որպես հիմնական միջոց վերադասակարգված ներդրումային գույքի արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ներդրումային գույքի արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

122 «Ներդրումային գույք» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1221 «Իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույք» և 1222 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույք»:

Ներդրումային գույքի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ գույքի տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

122 «Ներդրումային գույք» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
1. Ներդրումային գույքի մուտքագրում	
ա) կազմակերպությունում կառուցված	821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»

բ) մատակարարներից ձեռք բերված	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
գ) մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
դ) հիմնական միջոցի որպես ներդրումային գույք վերադասակարգում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
ե) պաշարների որպես ներդրումային գույք վերադասակարգում	215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ»
զ) այլ ակտիվների հետ փոխանակման կարգով ստացված	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների օտարումից եկամուտներ»
է) ֆինանսական վարձակալությամբ ստացված	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Ներդրումային գույքի ձեռք բերման (ստացման) հետ կապված ծախսումների (իրավաբանական ծառայությունների դիմաց վճար և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Ներդրումային գույքի վրա հետագա ծախսումների կապիտալացում	823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»
4. Ներդրումային գույքի՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ներդրումային գույքի՝ որպես հիմնական միջոց վերադասակարգում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
2. Ներդրումային գույքի՝ որպես պաշար վերադասակարգում	216 «Ապրանքներ»
3. Վաճառված (օտարված)՝ սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելով չափվող ներդրումային գույքի, բացառությամբ ընդհատված գործունեությանը վերագրվողներից, հաշվեկշռային արժեքի (սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկման տարբերություն) դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
4. Իրական արժեքի մոդելով չափվող ներդրումային գույքի օտարում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 523 «Ստացված կանխավճարներ»
5. Ընդհատված գործունեությանը վերագրելի վաճառված (օտարված) ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքի դուրս գրում	732 «Ընդհատված գործունեություն կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
6. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքի տեղափոխում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
7. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի կուտակված մաշվածության դուրս գրում	123 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն»
8. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված ներդրումային գույքի կուտակված արժեզրկման դուրս գրում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»
9. Ներդրումային գույքի՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

123 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն» հաշիվը նախատեսված է սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածության վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Մաշվածության հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ներդրումային գույք» ՀՀՄՍ 40-ում և «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածության հաշվեգրված գումարները, իսկ դեբետում` օտարված, ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի կուտակված մաշվածության դուրս գրումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունում առկա սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի կուտակված մաշվածության գումարը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ներդրումային գույքի տեսակների, հաշվառման (միատիպ) խմբերի, առանձին գույքային օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

123 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածության հաշվեգրում	729 «Այլ ծախսեր»
2. Որպես ներդրումային գույք վերադասակարգված հիմնական միջոցի կուտակված մաշվածության արտացոլում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն»

123 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի կուտակված մաշվածության գումարների դուրս գրում	122 «Ներդրումային գույք»
2. Որպես հիմնական միջոց վերադասակարգված` սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի կուտակված մաշվածության տեղափոխում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն»

Հաշիվ 124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում»

124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը նախատեսված է ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկման գումարների որոշման (զնահատման), դրանց ճանաչման և հակադարձման հաշվապահական հաշվառման

մոտեցումները նկարագրված են «Արժեզրկումից կորուստներ» ՀՀՄՄ 36-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ոչ ընթացիկ նյութական ակտիվների ճանաչված արժեզրկման գումարները, իսկ դեբետում՝ օտարված, ֆինանսական վարձակալության տրված ոչ ընթացիկ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարների դուրս գրումը, ինչպես նաև նախկինում ճանաչված արժեզրկման գումարների հակադարձումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կազմակերպությունում առկա ոչ ընթացիկ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1241 «Մաշվող հիմնական միջոցների արժեզրկում», 1242 «Հողամասերի արժեզրկում», 1243 «Կենսաբանական ակտիվների արժեզրկում», 1244 «Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում», 1245 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեզրկում», 1246 «Ներդրումային գույքի արժեզրկում»:

Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկման վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ ընթացիկ նյութական ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում (այդ թվում ֆինանսական վարձակալության տալուց հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի և վարձակալությունում գուտ ներդրումների դրական տարբերությունը)	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակություն	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված), ֆինանսական վարձակալության տրված, վերագնահատված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված կամ վարձատուին հետ վերադարձված ոչ ընթացիկ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարների դուրսգրում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք»

2. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկման հակադարձում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
--	--

ԽՈՒՄԲ 13 «ՈՉ ՆՅՈՒՅԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

13 «Ոչ նյութական ակտիվներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 131 «Ոչ նյութական ակտիվներ», 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա», 133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ», 134 «Գուդվիլ» և 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»:

Հաշիվ 131 «Ոչ նյութական ակտիվներ»

131 «Ոչ նյութական ակտիվներ» հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող ոչ նյութական ակտիվների (բացառությամբ գուդվիլի, բացասական գուդվիլի և անավարտ ոչ նյութական ակտիվների) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվների՝ ոչ նյութականին վերագրման, դրանց կազմի, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38- ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերած (ստացված), ներստեղծված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը, հետագա կապիտալացված ծախսումները, վերագնահատումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված ոչ նյութական ակտիվների արժեքը (սկզբնական՝ հաշվի առած հետագա կապիտալացված ծախսումները և վերագնահատումները), վերագնահատումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ոչ նյութական ակտիվների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

131 «Ոչ նյութական ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1311 «Ֆիրմային անուններ», 1312 «Հրապարակումների անուններ», 1313 «Համակարգչային ծրագրեր», 1314 «Լիցենզիաներ և վստահագրեր (ֆրանշիզներ)», 1315 «Հեղինակային իրավունքներ», 1316 «Արտոնագրեր», 1317 «Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքներ», 1318 «Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ», 1319 «Այլ ոչ նյութական ակտիվներ»:

Ոչ նյութական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առանձին օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

131 «Ոչ նյութական ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
1. Ոչ նյութական ակտիվների մուտքագրում՝	
ա) կազմակերպությունում ներստեղծված	133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»

բ) մատակարարներից ձեռք բերված	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
գ) մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
դ) որպես պետական շնորհ ստացված	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
ե) այլ ակտիվների հետ փոխանակման կարգով ստացված	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ»
2. Ոչ նյութական ակտիվների վրա հետագա ծախսումների կապիտալացում	133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»
3. Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

131 «Ոչ նյութական ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի (սկզբնական (վերագնահատված) արժեքի և կուտակված ամորտիզացիայի ու արժեզրկման տարբերություն) դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Որպես շնորհ ստացված ոչ նյութական ակտիվների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»

3. Ընդհատված գործունեությանը վերագրելի վաճառված (օտարված) ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»
4. Վաճառված (օտարված) ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիայի գումարների դուրս գրում	132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
5. Վաճառված (օտարված) ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման դուրս գրում	136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»
6. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
7. Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

Հաշիվ 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»

132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ամորտիզացիայի հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՄ 38-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվեզրկված գումարները, իսկ դեբետում՝ օտարված, որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիայի դուրս գրումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կազմակերպությունում առկա ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիայի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1321 «Ֆիրմային անունների ամորտիզացիա», 1322 «Հրապարակումների անունների ամորտիզացիա», 1323 «Համակարգչային ծրագրերի ամորտիզացիա», 1324 «Լիցենզիաների և վստահագրերի (ֆրանշիզների) ամորտիզացիա», 1325 «Հեղինակային իրավունքների ամորտիզացիա», 1326 «Արտոնագրերի ամորտիզացիա», 1327 «Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքների ամորտիզացիա», 1328 «Բանաձևերի, մոդելների, նախագծերի, բաղադրատոմսերի և փորձանմուշների ամորտիզացիա», 1329 «Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առանձին օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերեա
1. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվեգրում	543 «Ընթացիկ պահուստներ» 713 «Վարչական ծախսեր» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»
2. Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով կուտակված ամորտիզացիայի աճ	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
3. Նախորդ ժամանակաշրջաններում պակաս հաշվարկված ամորտիզացիայի հետընթաց վերահաշվարկ (ուղղում)	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» հաշիվը դերեառով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված) ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիայի գումարների դուրս գրում	131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Ոչ նյութական ակտիվների վերագնահատման հետևանքով կուտակված ամորտիզացիայի նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
3. Նախորդ ժամանակաշրջաններում ավել հաշվարկված ամորտիզացիայի հետընթաց վերահաշվարկ (ուղղում)	341 «Նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում»

Հաշիվ 133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ»

133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» հաշիվը նախատեսված է կազմակերպությունում մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Անավարտ ոչ նյութական ակտիվների՝ ավարտուն ոչ նյութական ակտիվներին վերագրման մոտեցումները նկարագրված են «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՄ 38-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների արժեքը, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումները, իսկ կրեդիտում՝ ավարտուն ոչ նյութական ակտիվ ճանաչված ծախսումները, արդեն ճանաչված ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող ծախսումները: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է անավարտ ոչ նյութական ակտիվների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1331 «Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներ», 1332 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»:

Անավարտ ոչ նյութական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կատարվող աշխատանքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ոչ նյութական ակտիվների մշակման գծով կուտակվող ծախսումների արտացոլում	824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»
2. Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումների արտացոլում	825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»

133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կազմակերպությունում ներստեղծված ոչ նյութական ակտիվների օգտագործման հանձնում	131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Ոչ նյութական ակտիվների վրա հետագա ծախսումների կապիտալացում	131 «Ոչ նյութական ակտիվներ»
3. Անավարտ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում	156 «Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում»
4. Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվները օգտագործման հանձնելիս կուտակված արժեզրկման գումարների դուրս գրում	136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

134 «Գուղվիլ» հաշիվը նախատեսված է իրենից ձեռքբերում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորման ընթացքում առաջացող գուղվիլի (ձեռքբերման արժեքի և ձեռքբերված որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքում ձեռք բերողի բաժնեմասի դրական տարբերություն) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Գուղվիլի հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ՖՀՄՄ 3-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է գուղվիլի սկզբնական արժեքը, իսկ կրեդիտում դուրս գրված գուղվիլի արժեքը: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է գուղվիլի արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Գուղվիլի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

134 «Գուղվիլ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ձեռքբերողի առանձին ֆինանսական հաշվետվություններում ձեռքբերումից առաջացող գուղվիլի արտացոլում	156 «Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում»

134 «Գուղվիլ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Գուղվիլի կուտակված արժեզրկման գումարների դուրս գրում	136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Հաշիվ 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը նախատեսված է ոչ նյութական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ոչ նյութական ակտիվների արժեզրկման գումարների որոշման (գնահատման), դրանց ճանաչման և հակադարձման հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Արժեզրկումից կորուստներ» ՀՀՄՄ 36-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ոչ նյութական ակտիվների ճանաչված արժեզրկման գումարները, իսկ դեբետում՝ օտարված, դուրս գրված ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարների դուրսգրումը, ինչպես նաև նախկինում ճանաչված արժեզրկման գումարների հակադարձումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կազմակերպությունում առկա ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1361 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 1362 «Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 1363 «Գուղվիլի արժեզրկում»:

Ոչ նյութական ակտիվների արժեզրկման վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ նյութական ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների դեբետ</i>
<i>Ոչ նյութական ակտիվների արժեզրկման արտացոլում</i>	<i>724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»</i>

136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
<i>1. Վաճառված (օտարված) ավարտուն և անավարտ ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկման գումարների դուրս գրում</i>	<i>131 «Ոչ նյութական ակտիվներ» 133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ»</i>
<i>2. Դուրս գրված գուդվիլի կուտակված արժեզրկման գումարների դուրս գրում</i>	<i>134 «Գուդվիլ»</i>
<i>3. Ոչ նյութական ակտիվների արժեզրկման հակադարձում</i>	<i>624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»</i>

ԽՈՒՄԲ 141 «ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

14 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները , 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում», 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում», 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ», 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր», 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր», 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր», 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով», 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» և 149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»:

Հաշիվ 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում»

141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» հաշիվը նախատեսված է չկապակցված կազմակերպություններում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այդպիսի ներդրումները ներառում են չկապակցված կազմակերպությունների՝ գործող շուկայում շուկայական գնանշում չունեցող բաժնային գործիքներում ոչ ընթացիկ ներդրումները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, ինչպես նաև այդպիսի չգնանշված բաժնային գործիքների հետ կապված և դրանցով մարվող ածանցյալ գործիքներում ներդրումները: Այդպիսի ներդրումների հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված (ստացված) ոչ ընթացիկ ներդրումների սկզբնական արժեքը, իսկ կրեդիտում՝ օտարված ոչ ընթացիկ ներդրումների սկզբնական արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների սկզբնական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1411 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների բաժնային գործիքներում», 1412 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպությունների ածանցյալ գործիքներում»:

Չկապակցված կազմակերպություններում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
<i>1. Չկապակցված կազմակերպություններում ներդրումների ձեռք բերում, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով</i>	<i>152 «Գանիսավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Գրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>2. Ներդրումների ձեռք բերման հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ, բանկային ծառայությունների դիմաց վճար և այլն) արտացոլում</i>	<i>228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Գրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>3. Չկապակցված կազմակերպություններում ներդրումների ստացում մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում</i>	<i>311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»</i>

4. Այլ ակտիվների հետ փոխանակման կարգով չկապակցված կազմակերպություններում ներդրումների ձեռք բերում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»
5. Այլ ֆինանսական ակտիվների վերադասակարգումը՝ որպես սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումներ՝ հաշվեկշռային արժեքով	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ»

141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) ոչ ընթացիկ ներդրումների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների՝ վերադասակարգումը այլ ֆինանսական ակտիվների՝ հաշվեկշռային արժեքով	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների կուտակված արժեքի մասն դուրս գրում	149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը կուտակում (անհավաքագրելիություն)»
4. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

Հաշիվ 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում»

142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» հաշիվը նախատեսված է կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Կապակցված կազմակերպություններում ներդրումները սկզբնական արժեքով հաշվառման մոտեցումները նկարագրված են «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 27-ում, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» ՀՀՄՍ 28-ում և «Մասնակցություններ համատեղ ձեռնարկումներում» ՀՀՄՍ 31-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված (ստացված) ոչ ընթացիկ ներդրումների արժեքը, իսկ կրեդիտում՝ օտարված ոչ ընթացիկ ներդրումների արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում սկզբնական արժեքով

հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1421 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալում», 1422 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում», 1423 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ համատեղ վերահսկվող միավորների կանոնադրական կապիտալում»:

Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության արժեթղթերի ձեռք բերում, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Ներդրումների ձեռք բերման հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ, բանկային ծառայությունների դիմաց վճար և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության արժեթղթերի ստացում մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
4. Այլ ակտիվների հետ փոխանակման կարգով կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության արժեթղթերի ձեռք բերում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»

5. Այլ ֆինանսական ակտիվների վերադասակարգումը որպես սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումներ՝ հաշվեկշռային արժեքով	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ»
--	--

142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) ոչ ընթացիկ ներդրումների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների՝ վերադասակարգումը այլ ֆինանսական ակտիվների՝ հաշվեկշռային արժեքով	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների կուտակված արժեզրկման դուրս գրում	149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»
4. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

Հաշիվ 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը նախատեսված է իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները ներառում են «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված, ինչպես նաև որպես «վաճառքի համար մատչելի» դասակարգված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվների՝ որպես վաճառքի համար մատչելի դասակարգման կամ «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգման, դրանց ճանաչման, չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում¹:

¹ 2009-ի նոյեմբերին ՀՀՄՍ-ն հրապարակել է «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը, որը պարտադիր կիրառելի 2013-ի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կարգավորում է նաև ֆինանսական ակտիվների ճանաչման, չափման և դասակարգման հարցերը:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված (ստացված) իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ

երկրորդ կարգի հաշիվները՝ 1431 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ, 1432 Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ:

Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ֆինանսական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
<i>1. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ձեռք բերում</i>	<i>152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>2. Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ձեռք բերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ, բանկային ծառայությունների դիմաց վճար և այլն) արտացոլում</i>	<i>228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>3. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ստացում մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում</i>	<i>311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»</i>
<i>4. Այլ ակտիվների հետ փոխանակման կարգով իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ստացում</i>	<i>611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»</i>

5. Այլ ֆինանսական ակտիվների վերադասակարգումը որպես վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքով	142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
6. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ	
ա) Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների դեպքում	672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
բ) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների դեպքում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
7. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի գծով տոկոսային եկամուտների հաշվեգրում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»
8. Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների գծով ստացվելիք շահաբաժինների արտացոլում (շահաբաժինը ստանալու իրավունքի առաջացման ժամանակ)	627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»
9. Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» Կամ, որպես այլընտրանք, ստացված փողի կամ այլ ակտիվների կամ ստացվելիք դեբիտորական պարտքի հաշվառման հաշիվներ

2. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերադասակարգումը այլ ֆինանսական ակտիվների՝ հաշվեկշռային արժեքով	141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»
3. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ընթացիկ մասի տեղափոխում	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
4. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում	
ա) Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների դեպքում	772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
բ) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների դեպքում	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի գծով հաշվեզրված տոկոսային եկամուտների և հիմնական գումարի մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
6. Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»

144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը նախատեսված է մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր ստացվելիք մուտքերի անվանական (չգեղջկած)՝ արժեքը) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական ակտիվների՝ որպես մինչև մարման ժամկետը պահվող դասակարգման, դրանց ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված (ստացված) մինչև մարման

Ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերը, իսկ կրեդիտում՝ օտարված, մարված մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների հաշվեկշռային արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ներդրումների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
<i>1. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների ձեռք բերում</i>	<i>152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 231 «Բրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>2. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների ստացում մասնակիցներից (բաժնետերերից)՝ որպես ներդրում կանոնադրական կապիտալում</i>	<i>311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»</i>
<i>3. Այլ ակտիվների հետ փոխանակման կարգով մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների ստացում</i>	<i>611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»</i>
<i>4. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում</i>	<i>147 «Զվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»</i>
<i>5. Այլ ֆինանսական ակտիվների վերադասակարգումը որպես մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումներ՝ հաշվեկշռային արժեքով</i>	<i>143 «Բրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Բրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»</i>

6. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով դուրս գրված անհուսալի երկարաժամկետ պարտքերի հակադարձում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
7. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերեր
1. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների վերադասակարգումը այլ ֆինանսական ակտիվների՝ հաշվեկշռային արժեքով	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով համախառն մուտքերի կարճաժամկետ մասի տեղափոխում	234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս»
3. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդի դուրս գրում	147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
4. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով կուտակված անհավաքագրելիության գումարների դուրս գրում	149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»
5. Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով անհուսալի երկարաժամկետ պարտքերի դուրս գրում	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
6. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր»

145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր ստացվելիք մուտքերի անվանական (չգեղջկած) արժեքը) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական ակտիվների՝ որպես փոխառություն դասակարգման, դրանց ճանաչման և

չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերը, իսկ կրեդիտում՝ օտարված, մարված երկարաժամկետ փոխառությունների հաշվեկշռային արժեքը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխառուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ փոխառությունների տրամադրում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Երկարաժամկետ փոխառությունների գծով չվաստակաժ ֆինանսական եկամուտ արտացոլում	147 «Չվաստակաժ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
3. Երկարաժամկետ փոխառությունների գծով դուրս գրված անհուսալի երկարաժամկետ պարտքերի հակադարձում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
4. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Փոխառությունների գծով պահանջի իրավունքի զիջում	728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»
2. Փոխառությունների մարում՝ ժամկետից շուտ	
- փաստացի ստացված գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

- հաշվեկշռային արժեքի և փաստացի ստացված գումարի դրական տարբերության չափով	627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»
3. Երկարաժամկետ փոխառությունների գծով համախառն մուտքերի կարճաժամկետ մասի տեղափոխում	236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս»
4. Երկարաժամկետ փոխառությունների գծով չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդի դուրս գրում	147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
5. Երկարաժամկետ փոխառությունների գծով կուտակված անհավաքագրելիության գումարների դուրս գրում	149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»
6. Երկարաժամկետ փոխառությունների գծով անհուսալի երկարաժամկետ պարտքերի դուրս գրում	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
7. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»

146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը նախատեսված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր ստացվելիք մուտքերի անվանական (չգեղջկած) արժեքը) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի ճանաչման, դրանց չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Վարձակալություն» ՀՀՄՄ 17-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը, դուրս գրումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարձակալների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
1. Ֆինանսական վարձակալության տրված ակտիվների դիմաց վարձակալի պարտքերի (վարձակալությունում գուտ ներդրումների) արտացոլումը	621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ»

2. Ֆինանսական վարձակալությունից ստացվելիք համախառն մուտքերի գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում	147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
3. Ֆինանսական վարձակալության գծով դուրս գրված անհուսալի երկարաժամկետ պարտքերի հակադարձում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
4. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքի մարում՝ ժամկետից շուտ	
ա) երբ վարձակալության տրված ակտիվների սեփականության իրավունքը անցնում է վարձակալին	
- փաստացի ստացված (ստացվելիք) գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 229 «Այլ դեբիտորական պարտքեր»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի ստացված (ստացվելիք) գումարի դրական տարբերության չափով	729 «Այլ ծախսեր»
բ) երբ վարձակալության տրված ակտիվների սեփականության իրավունքը չի անցնում վարձակալին	
- փաստացի ստացված գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 229 «Այլ դեբիտորական պարտքեր»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի ստացված (ստացվելիք) գումարի ու չերաշխավորված մնացորդային արժեքի հանրագումարի դրական տարբերության չափով	729 «Այլ ծախսեր»
2. Ֆինանսական վարձակալության տրված ակտիվների հետ ընդունում	111 «Մաշվող հիմնական միջոցներ»

3. Ֆինանսական վարձակալության գծով համախառն մուտքերի կարճաժամկետ մասի տեղափոխում	237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս»
4. Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ֆինանսական եկամտի մնացորդի դուրս գրում	147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
5. Ֆինանսական վարձակալության գծով կուտակված անհավաքագրելիության գումարների դուրս գրում	149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»
6. Ֆինանսական վարձակալության գծով անհուսալի երկարաժամկետ պարտքերի դուրս գրում	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
7. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»

147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» հաշիվը նախատեսված է ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով չվաստակած ֆինանսական եկամտի (ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով ստացվելիք համախառն մուտքերի և դրանց գեղչված արժեքի տարբերությունը) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ընդ որում, չվաստակած ֆինանսական եկամտի գումարը որոշելիս գործարքի հետ կապված ծախսումները հանվում են: Չվաստակած ֆինանսական եկամտի, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումների որոշման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում և «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվը պահվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով չվաստակած ֆինանսական եկամուտը, իսկ դեբետում՝ գործարքի հետ կապված ծախսումները, ինչպես նաև չվաստակած ֆինանսական եկամտի հաշվեգրումը եկամուտների: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է չվաստակած ֆինանսական եկամտի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1471 «Չվաստակած ֆինանսական եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով», 1472 «Չվաստակած ֆինանսական եկամուտ երկարաժամկետ փոխառությունների գծով», 1473 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով»:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով չվաստակած ֆինանսական եկամտի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխառությունների, վարձակալների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների դեբետ</i>
<i>Չվաստակաձ ֆինանսական եկամտի արտացոլում</i>	<i>144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i> <i>145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i> <i>146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i>

147 «Չվաստակաձ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

<i>Տնտեսական գործառնությունների բովանդակությունը</i>	<i>Հաշիվների կրեդիտ</i>
<i>1. Գործարքի հետ կապված ծախսումների արտացոլում</i>	<i>228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»</i> <i>251 «Դրամարկո»</i> <i>252 «Հաշվարկային հաշիվ»</i> <i>253 «Արտարժույթային հաշիվ»</i> <i>254 «Այլ հաշիվներ բանկերում»</i> <i>521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»</i>
<i>2. Չվաստակաձ ֆինանսական եկամտի հաշվեգրում եկամուտներին</i>	<i>627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»</i>
<i>3. Երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով չվաստակաձ ֆինանսական եկամտի վերադասակարգում որպես կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով չվաստակաձ ֆինանսական եկամուտ</i>	<i>238 «Չվաստակաձ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»</i>
<i>4. Օտարված, մարված, վերադասակարգված ֆինանսական ակտիվների գծով չվաստակաձ ֆինանսական եկամտի մնացորդի դուրս գրում</i>	<i>144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i> <i>145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i> <i>146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»</i>

Հաշիվ 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը նախատեսված է որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական ակտիվների՝ որպես հեջավորման գործիք դասակարգելու, դրանց ճանաչման, չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ձեռք բերված (ստացված) որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ օտարված, իրագործված որպես հեջավորման բիզնեսի գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջավորման գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը
դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ձեռք բերման հետ կապված ծախսումների (միջնորդավճարներ, բանկային ծառայությունների դիմաց վճար և այլն) արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Այլ ակտիվների հետ փոխանակման կարգով որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների ստացում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»
4. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերածվելը ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

5. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերաժվելը ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
6. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
7. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառված (օտարված) որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի դուրս գրում	721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»
2. Հեջավորման գործիքների մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
3. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերադասակարգում որպես ընթացիկ ֆինանսական ակտիվներ	239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
4. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»

բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Արտարժույթով արտահայտված մուտքերի գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)»

149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)» հաշիվը նախատեսված է ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) գումարների որոշման (գնահատման), դրանց ճանաչման կամ հակադարձման հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում և «Արժեզրկումից կորուստներ» ՀՀՄՍ 36-ում:

Հաշիվը պասիվային է, կարգավորող: Մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկման (անհավաքագրելիության) գումարները, իսկ դեբետում՝ օտարված, մարված, վերադասակարգված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գծով կուտակված արժեզրկման (անհավաքագրելիության) գումարների դուրս գրումը, նախկինում ճանաչված արժեզրկման (անհավաքագրելիության) գումարների հակադարձումը: Հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կազմակերպությունում առկա ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գծով կուտակված արժեզրկման (անհավաքագրելիության) գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 1491 «Չկապակցված կազմակերպություններում սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների արժեզրկում», 1492 «Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ընթացիկ ներդրումների արժեզրկում», 1493 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների անհավաքագրելիություն», 1494 «Երկարաժամկետ փոխառությունների անհավաքագրելիության», 1495 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի անհավաքագրելիություն»:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»

149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակություն	Հաշիվների կրեդիտ
1. Օտարված, մարված, վերադասակարգված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կուտակված արժեզրկման (անհավաքագրելիության) դուրս գրում	141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»
2. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) վերադասակարգում որպես ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)	241 «Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկում (անհավաքագրելիություն)»
- առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 147 «Զվաստակաձ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
	233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 238 «Զվաստակաձ ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 414 «Զկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 516 «Զկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 543 «Ընթացիկ պահուստներ»
- անուղղակի հարկեր (ԱԱՀ , ակցիզային հարկ)	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»

4. Որպես պետական շնորհ ստացված դրամական միջոցների հետ վերադարձ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»
5. Սահմանված հատուցումների պլաններին մասհանումներ	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»
6. Արտարժույթային միջոցների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

Հաշիվ 255 «Դրամական միջոցներ ճանապարհին»

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը նախատեսված է ճանապարհին գտնվող ազգային արժույթով և արտարժույթով դրամական միջոցների, այսինքն՝ կազմակերպության հաշվարկային կամ այլ հաշիվներ մուտքագրելու համար (սակայն դեռևս չմուտքագրված) խնայողական բանկ, փոստային բաժանմունքներ մուտքագրված դրամական միջոցների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են ճանապարհին գտնվող դրամական միջոցները, իսկ կրեդիտում՝ համապատասխան հաշիվներ մուտք եղած դրամական միջոցները: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ճանապարհին գտնվող դրամական միջոցների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արժույթի տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ճանապարհին գտնվող դրամական միջոցների արտացոլում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»

255 «Դրամական միջոցներ ճանապարհին» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ճանապարհին գտնվող դրամական միջոցների մուտքագրումը հաշվարկային և արտարժույթային հաշիվներին	252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

Հաշիվ 256 «Դրամական փաստաթղթեր»

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը նախատեսված է կազմակերպության դրամարկղում գտնվող դրամական փաստաթղթերի (փոստային նամականիշեր, վճարված տրանսպորտային տոմսեր, հանգստյան տների և առողջարանների ուղեգրեր և այլն) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են մուտք եղած դրամական փաստաթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է դրամական փաստաթղթերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Դրամական փաստաթղթերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փաստաթղթերի տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Դրամական փաստաթղթերի ձեռք բերում	228 «Դեբիտորական պարտքեր անձնակազմի հետ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
2. Գույքագրմամբ հայտնաբերված դրամական փաստաթղթերի ավելցուկի մուտքագրում	614 «Գործառնական այլ եկամուտներ»

256 «Դրամական փաստաթղթեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Դրամական փաստաթղթերի օգտագործում	713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Գույքագրմամբ հայտնաբերված դրամական փաստաթղթերի պակասորդի արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»

ԽՈՒՄԲ 26 «ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

26 «Այլ ընթացիկ ակտիվներ» խումբն իր մեջ ներառում է 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով», 262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով», 263 «Ուրպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվները:

Հաշիվ 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»

261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը նախատեսված է հաշվանցման (փոխհատուցման) ենթակա այն անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնց հաշվանցման (փոխհատուցման) պահը հետաձգված է:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են անուղղակի հարկերի գծով առաջացած ընթացիկ ակտիվների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց դուրս գրումը, երբ հաշվանցման իրավունքը վրա է հասնում կամ էլ վերանում է: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առաջացման, դուրս գրման ժամկետների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ձեռք բերված (ստացված) ակտիվների, ծառայությունների, աշխատանքների գծով հարկային հաշիվներում առկա և հաշվանցվող (փոխհատուցվող) ԱԱՀ-ի գումարների արտացոլում, մասնավորապես, երբ ձեռք բերման (ստացման) և հաշվանցման (փոխհատուցման) պահերը չեն համընկնում	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
2. Ձեռք բերված (ստացված) ակտիվների, ծառայությունների, աշխատանքների գծով հաշվանցվող (փոխհատուցվող) ակցիզային հարկի գումարների արտացոլում, երբ ձեռք բերման (ստացման) և հաշվանցման (փոխհատուցման) պահերը չեն համընկնում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հաշվանցումն հետաձգված ԱԱՀ-ի գծով հաշվանցման իրավունքի ձեռք բերում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
2. Հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով ընթացիկ ակտիվների դուրս գրում՝ հաշվանցման իրավունքը կորցնելիս	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Ակցիզային հարկի գծով ընթացիկ ակտիվների դուրս գրում	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

Հաշիվ 262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով»

262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը նախատեսված է կապալառուների մոտ, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՄ 11-ին համապատասխան, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվ ճանաչման ենթակա «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարների» վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանագրի աշխատանքների դիմաց պատվիրատուից ստացվելիք համախառն գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ, կուտակային հիմունքով, կրած (կատարված) ծախսումներ, գումարած՝ ճանաչված շահույթներ, հանած՝ ճանաչված վնասներ և հանած՝ միջանկյալ հաշիվների գումարը, երբ գուտ հանրագումարը դրական թիվ է:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է պայմանագրերի գծով ճանաչված այն հասույթի գումարը, որի գծով հաշիվ (հաշիվ ապրանքագիր) ներկայացված չէ, իսկ կրեդիտում՝ այդ գումարների դասակարգումը դեբիտորական պարտքերին (ստացված կանխավճարների մարումների)՝ արդեն ճանաչված հասույթների գծով հաշիվ (հաշիվ ապրանքագիր) ներկայացնելիս մարումները: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է պայմանագրային աշխատանքների գծով պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարները (որպես ակտիվ) հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կառուցման պայմանագրերի գծով պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանագրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ճանաչված հասույթ՝ ներկայացված հաշիվների (հաշիվ ապրանքագրերի) գումարը գերազանցող չափով	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»
2. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների վրա կատարված ծախսումների՝ դեռ ծախս չճանաչված մաս	811 «Հիմնական արտադրություն»

262 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կառուցման պայմանագրերի գծով հաշվի (հաշվ ապրանքագրի) ներկայացում արդեն որպես հասույթ ճանաչված գումարների գծով	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
2. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների վրա նախկինում կատարված ծախսումների՝ հաշվետու ժամանակաշրջանում ծախս ճանաչումը	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

Հաշիվ 263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը նախատեսված է որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբերի ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության

ընդհանրացման համար: Ակտիվները և օտարման խմբերը որպես վաճառքի համար պահվող դասակարգելու չափանիշները և դրանց չափման մոտեցումները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՄ 5-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբերի ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների գումարները, ինչպես նաև այդ ոչ ընթացիկ ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի աճը (արժեզրկման հակադարձումը), իսկ կրեդիտում՝ «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի նվազումը (արժեզրկումը) օտարումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 2631 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցներ», 2632 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ նյութական ակտիվներ», 2633 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված այլ ոչ ընթացիկ ակտիվներ», 2634 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառված ընթացիկ ակտիվներ»:

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների (ներառյալ օտարման խմբերի ակտիվների) արտացոլում՝ որպես այդպիսին դասակարգմանը անմիջապես նախորդող հաշվեկշռային արժեքով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» և որպես վաճառքի համար պահվող դասակարգված ընթացիկ և ոչ ընթացիկ այլ ակտիվներ հաշվառող հաշիվներ

2. Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի աճը (արժեզրկման հակադարձումը)	
- երբ այդ ակտիվները չեն կազմում ընդհատված գործունեություն կամ դրա մաս	624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
- երբ այդ ակտիվները ընդհատված գործունեության մաս են	632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»

263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվների «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից արժեքի նվազումը (արժեզրկումը) և այդ ակտիվների օտարումը	
- երբ այդ ակտիվները չեն կազմում ընդհատված գործունեություն կամ դրա մաս	724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
- երբ այդ ակտիվները ընդհատված գործունեության մաս են	732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»

ԴԱՍ 3 «ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող և ակտիվապասիվային հաշիվների, պասիվային են և նախատեսված են սեփական կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 3 «Սեփական կապիտալ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ», 32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ», 33 «Ֆինանսական արդյունք», 34 «Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)» և 35 «Սեփական կապիտալի այլ հոդվածներ»:

ԽՈՒՄԲ 31 «ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ»

31 «Կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 311 «Կանոնադրական կապիտալ», 312 «Չվճարված կապիտալ», 313 «Հետ գնված կապիտալ» և 314 «Էմիսիոն եկամուտ»:

Հաշիվ 311 «Կանոնադրական կապիտալ»

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Կանոնադրական կապիտալի ձևավորման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերեւտ
1. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի ձևավորում՝	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտաթուխային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

բ) այլ ակտիվներով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Մաշվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր»
2. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝	
ա) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը չեն համընկնում	312 «Զվճարված կապիտալ»
բ) երբ ավելացման (տեղաբաշխման) և ներդրման (վճարման) պահերը համընկնում են՝	
- դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

- այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
3. Կանոնադրական կապիտալի ավելացում փոխարկելի պարտավորությունների (պարտատոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր և այլն) փոխարկմամբ	412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

4. Կանոնադրական կապիտալի ավելացում սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին	314 «Էմիսիոն եկամուտ» 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»
5. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների իրագործում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»

311 «Կանոնադրական կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Կանոնադրական կապիտալի նվազեցում՝	
ա) հետ գնված և շրջանառությունից հանված (մարված) բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին՝	
- հետգնման գնով, երբ հետգնման գինը փոքր է անվանական արժեքից	313 «Հետ գնված կապիտալ»
- հետգնման գնի և անվանական արժեքի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
բ) թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին	312 «Չվճարված կապիտալ»
գ) նախորդ տարիների վնասի ծածկման նպատակով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

Հաշիվ 312 «Չվճարված կապիտալ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը նախատեսված է կազմակերպության չվճարված կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների թողարկած, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ մասնակիցների (բաժնետերերի) պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով և տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի անվանական արժեքը: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

312 «Չվճարված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3121 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ», 3122 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ մինչև անվանական արժեքի չափով», 3123 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ՝ անվանական արժեքը գերազանցող չափով»:

Չվճարված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի, ինչպես նաև տեղաբաշխված (բայց ամբողջովին կամ մասամբ չվճարված) բաժնետոմսերի անվանական արժեքի և դրանց դիմաց վճարված գումարի տարբերության արտացոլում	311 «Կանոնադրական կապիտալ»
2. Հետ գնված(ձեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	313 «Հետ գնված կապիտալ»
3. Տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»
4. Հետ գնված (ձեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության արտացոլում	314 «Էմիսիոն եկամուտ»

312 «Չվճարված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կապիտալում ներդրումների գծով մասնակիցների (բաժնետերերի) պարտքերի մարում	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

բ) այլ ակտիվներով կամ պարտավորությունների մարմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»
2. Կանոնադրական կապիտալի նվազեցում թողարկված, բայց չտեղաբաշխված կամ չվճարված բաժնետոմսերի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ

Հաշիվ 313 «Հետ գնված կապիտալ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը նախատեսված է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է մասնակիցներից (բաժնետերերից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը և վերավաճառքը: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արժեքը

հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

313 «Հետ գնված կապիտալ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3131 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3132 «Հետ գնված հասարակ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3133 «Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով», 3134 «Հետ գնված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3135 «Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքով», 3136 «Հետ գնված բաժնեմասեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով», 3137 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքով», 3138 «Հետ գնված փայեր՝ անվանական արժեքի և հետգնման գնի տարբերության չափով»:

Հետ գնված կապիտալի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղորդումների:

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արտացոլում՝ գնման գնով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

313 «Հետ գնված կապիտալ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Շրջանառությունից հանված և մարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) արտացոլում՝	
- մինչև անվանական արժեքը	311 «Կանոնադրական կապիտալ»
- անվանական արժեքը գերազանցող մասը	314 «Էմիսիոն եկամուտ»
2. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը համընկնում են՝	
ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	

- վաճառքի գնով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»
3. Հետ գնված բաժնետոմսերի վաճառք, երբ վաճառքի և վճարման պահերը չեն համընկնում՝	
ա) երբ վաճառքի գինը բարձր է հետգնման գնից՝ հետգնման գնով	312 «Չվճարված կապիտալ»
բ) երբ վաճառքի գինը ցածր է հետգնման գնից՝	
- վաճառքի գնով	312 «Չվճարված կապիտալ»
- վաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության չափով	314 «Էմիսիոն եկամուտ»

Հաշիվ 314 «Էմիսիոն եկամուտ»

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը նախատեսված է կազմակերպության էմիսիոն եկամտի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, իսկ դեբետում՝ բացասական տարբերությունը: Հաշվի մնացորդը կրեդիտային է: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

Էմիսիոն եկամտի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղորդումների:

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության արտացոլում՝	

ա) երբ տեղաբաշխման և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ տեղաբաշխման և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»
2. Հետգնված (ձեռք բերված) բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի դրական տարբերության արտացոլում՝	
ա) երբ վերավաճառքի և վճարման պահերը համընկնում են	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) երբ վերավաճառքի և վճարման պահերը չեն համընկնում	312 «Չվճարված կապիտալ»
3. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) շրջանառությունից հանմամբ (մարմամբ) կանոնադրական կապիտալի նվազեցում՝ անվանական արժեքի և հետգնման գնի դրական տարբերության չափով	311 «Կանոնադրական կապիտալ»

314 «Էմիսիոն եկամուտ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված բաժնետոմսերի վերավաճառքի գնի և հետգնման գնի բացասական տարբերության արտացոլում	313 «Հետ գնված կապիտալ»

2. Հետ գնված և շրջանառությունից հանված ու մարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) անվանական արժեքը գերազանցող մասով էմիսիոն եկամտի նվազեցում	313 «Հետ գնված կապիտալ»
3. Կանոնադրական կապիտալի ավելացում էմիսիոն եկամտի հաշվին	311 «Կանոնադրական կապիտալ»

ԽՈՒՄԲ 32 «ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԵՎ ՎԵՐԱՉԱՓՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

32 «Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ», 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» և 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ», 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ», 325 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին վերաբերող չիրացված օգուտներ կամ կորուստներ»:

Հաշիվ 321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որը կիրառվում է, երբ կազմակերպությունն ընտրել է հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները վերագնահատված արժեքով հաշվառելու քաղաքականություն: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կամ արժեզրկման հակադարձումից զուտ օգուտի տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, իսկ դեբետում՝ վերագնահատումից կամ արժեզրկումից զուտ կորստի տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից, ինչպես նաև զուտ օգուտի վերագրումը չբաշխված շահույթին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3211 «Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ», 3212 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված զուտ օգուտի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցներին ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված գուտ կորստի (հարկային հետևանքներն հաշվի առած) տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից	771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) զուգընթաց, ինչպես նաև օտարվող ակտիվներին վերաբերող՝ վերագնահատումից արժեքի աճի վերագրումը չբաշխված շահույթին	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)

Հաշիվ 322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների (բացի հեջի հաշվառման նպատակներով իրական արժեքի հեջի դեպքում որպես հեջավորված հոդված նախատեսված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի՝ հեջավորված ռիսկին վերագրելի օգուտի կամ կորստից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3221 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3222 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»

2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»
---	--

322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»

Հաշիվ 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջի ժամանակ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում, ներառումը հեջավորված կանխատեսված գործարքի արդյունքում ճանաչված ոչ ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, ինչպես նաև վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով իրական արժեքով վերաչափումից չիրացված գուտ (հաշվի առած հարկային հետևանքները) օգուտները, չիրացված գուտ կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը, իսկ դեբետում՝ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերագրումը ֆինանսական արդյունքներին և դրանց ներառումը ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական արժեքում, եթե հեջավորված կանխատեսված գործարքը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչմանը: Այս հաշվի կրեդիտային մնացորդը իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3231 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ», 3232 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»:

Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերեա
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	743 «Վերադասակարգման ճշգրտումներ, հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպությունն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՄ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»

2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում	643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»
3. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների ներառումը ակտիվների և պարտավորությունների սկզբնական արժեքում (երբ կանխատեսված գործարքի հեջը հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման և երբ կազմակերպությունն ընտրում օգուտներն ու կորուստները ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքում ներառելու քաղաքականությունը համաձայն ՀՀՄՍ 39.98(բ)-ի)	Թղթակցում է ոչ ֆինանսական ակտիվները և ոչ ֆինանսական պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվների հետ

Հաշիվ 324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունները (փոխարժեքային օգուտները և կորուստները) ներառում են արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերությունները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, չիրացված կորուստների վերադասակարգումը շահույթում կամ վնասում, իսկ դեբետում՝ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստները, չիրացված օգուտների վերադասակարգումը շահույթում կամ վնասում: Այս հաշվի կրեդիտային մնացորդն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտները, իսկ դեբետային մնացորդը՝ չիրացված կորուստները: Դեբետային մնացորդի դեպքում այն դասվում է ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3241 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից», 3242 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման մաս համարվող դրամային հոդվածների գծով», 3243 «Փոխարժեքային տարբերություններ՝ արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջերի գծով»:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված օգուտների արտացոլում	674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	744 «Վերադասակարգման ճշգրտումներ, արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»

324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային չիրացված կորուստների արտացոլում	774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստներ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտների ճանաչումը շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ)	644 «Վերադասակարգման ճշգրտումներ, արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»

ԽՈՒՄԲ 33 «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ»

33 «Ֆինանսական արդյունք» խումբն իր մեջ ներառում է 331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը:

Հաշիվ 331 «Շահույթ կամ վնաս»

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը նախատեսված է կազմակերպության հաշվետու տարվա գործունեության շահույթի կամ վնասի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահույթը կամ վնասը ներառում է տվյալ ժամանակաշրջանում ճանաչված բոլոր եկամուտներն ու ծախսերը (ներառյալ՝ օգուտներն ու կորուստները), բացառությամբ, երբ դրանք ՖՀՄՄ-ներին և կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Հաշվի կրեդիտում արտացոլվում են կազմակերպության գործունեության եկամուտները, ինչպես նաև գուտ վնասի դուրս գրումը, իսկ դեբետում՝ ծախսերը և գուտ շահույթի դուրս գրումը: Այս հաշիվը տարեվերջի մնացորդ չի ունենում: Հաշվետու տարվա գուտ արդյունքը տեղափոխվում է 343 «Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)» հաշվին:

331 «Շահույթ կամ վնաս» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 3311 «Շարունակվող գործունեությունից շահույթ կամ վնաս», 3312 «Ընդհատված գործունեությունից շահույթ կամ վնաս»:

331 «Շահույթ կամ վնաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված եկամուտների արտացոլում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» 628 «Շտրհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» 629 «Այլ եկամուտներ» 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից» 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերադասակարգման ճշգրտումներից օգուտների արտացոլում	642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» 644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»
3. Շահութահարկի գծով եկամտի արտացոլում (երբ հաշվետու ժամանակաշրջանում շարունակվող կամ ընդհատված գործունեության արդյունքներով առաջացել է հարկի գծով եկամուտ)	733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» 751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
4. Հաշվետու ժամանակաշրջանի զուտ վնասի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)»

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու տարվա վերջի դրությամբ կուտակված ծախսերի հավաքագրում ըստ կազմակերպության գործունեության տեսակների	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» 712 «Իրացված ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր» 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» 724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» 725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ» 726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» 727 «Ֆինանսական ծախսեր» 728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» 729 «Այլ ծախսեր» 731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից» 732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» 733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» 751 «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերադասակարգման ճշգրտումներից կորուստների արտացոլում	742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» 743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» 744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»
3. Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթի տեղափոխում	343 «Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս)»

ԽՈՒՄԲ 34 «ԶԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ (ԶԾԱԾԿՎԱԾ ՎՆԱՍ)»

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով ակտուարային վնասների արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Պլանների ակտիվների գծով ակտուարային վնասների արտացոլում	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

3. Դեռևս չճանաչված ակտուարային օգուտների ճանաչում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
---	--

Հաշիվ 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» հաշիվը նախատեսված է չերաշխավորված հատուցումների գծով դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Անցյալ ծառայության արժեքի աճի որոշման և ճանաչման մոտեցումները նկարագրված են «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ում:

Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Կրեդիտում արտացոլվում է դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական աճը, չճանաչված դրական աճի ճանաչումը, իսկ դեբետում՝ դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական աճը, չճանաչված բացասական աճի ճանաչումը:

Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Անցյալ ծառայության արժեքի բացասական աճի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»

2. Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական աճի ճանաչում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
--	--

428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Անցյալ ծառայության արժեքի դրական աճի արտացոլում՝ չերաշխավորված հատուցումների գծով	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական աճի ճանաչում	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»

Հաշիվ 429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը նախատեսված է հետաձգված եկամուտ հանդիսացող ոչ ընթացիկ պարտավորությունների, մասնավորապես, գործառնական վարձակալության գծով վարձատուի կողմից հետագա տարիների համար ստացված կանխավճարի, հաճախորդների հավատարմության ծրագրերի ներքո մեկ տարուց ավելի ժամկետով հետաձգված եկամուտների և այլ ոչ ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության

ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Կրեդիտում արտացոլվում է դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի բացասական աճը, չճանաչված դրական աճի ճանաչումը, իսկ դեբետում՝ դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի դրական աճը, չճանաչված բացասական աճի ճանաչումը:

Այլ ոչ ընթացիկ պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պարտավորությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Գործառնական վարձակալության գծով վարձատուի կողմից հետագա տարիների համար կանխավճարի կամ հաճախորդների հավատարմության ծրագրերի ներքո մեկ տարուց ավելի ժամկետով հետաձգված եկամուտների ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Գործառնական վարձակալության գծով և այլ պարտավորությունների հաշվեցրում, որոնց վճարման ժամկետը վրա է հասնելու ավելի քան մեկ տարի հետո	712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»

429 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հետաձգված եկամուտների՝ որպես եկամուտ ճանաչում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ»

2. Գործառնական վարձակալության գծով և այլ պարտավորությունների հաշվեգրած ոչ ընթացիկ պարտավորությունների փոխանցումը ընթացիկ պարտավորություններին	531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
---	--------------------------------------

ԴԱՍ 5 «ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող հաշիվների, պասիվային են և նախատեսված են ընթացիկ պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 5-րդ՝ «Ընթացիկ պարտավորություններ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 51 «Ստացված կարճաժամկետ փոխառություններ և վարկեր, հեջավորման գործիքներ», 52-53 «Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր» և 54 «Այլ ընթացիկ պարտավորություններ»:

Պարտավորությունների՝ ընթացիկին վերագրման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՄ 1-ում:

ԽՈՒՄԲ 51 «ՍՏԱՑՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐ ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ»

51 «Ստացված կարճաժամկետ փոխառություններ և վարկեր, հեջավորման գործիքներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ», 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ», 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով», 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» և 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»:

Հաշիվ 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ»

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և արտերկրի բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված կարճաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս մարման ժամկետ ունեցող) վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չգեղջկած) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ստացված կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, մարման ժամկետների, առանձին վարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Վարկերի ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժությային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Վարկերի ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը կամ դեբիտորական պարտքերի առաջացմանը	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 229 «Այլ դեբիտորական պարտքեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Կարճաժամկետ վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կարճաժամկետ վարկերի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժությային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (երկարաժամկետ վարկերի այն մասը, որի մարման ժամկետը հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս է) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվում է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, մարման ժամկետների, առանձին վարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

**512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
2. Երկարաժամկետ վարկերի ժամկետից շուտ մարման արտացոլում (կարճաժամկետ մասի գծով)	
- փաստացի վճարված գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը նախատեսված է կարճաժամկետ (հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց պակաս մարման ժամկետ ունեցող) փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չզեղչված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պատկերված է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են ստացված կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխատուների, մարման ժամկետների, առանձին փոխառությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Փոխառությունների ստացում դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Փոխառությունների ստացում, որոնք անմիջապես ուղղվում են կրեդիտորական պարտքերի մարմանը	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Կարճաժամկետ փոխառությունների գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կարճաժամկետ փոխառությունների մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (երկարաժամկետ փոխառությունների այն մասը, որի մարման ժամկետը հաշվետու ամսաթվի դրությամբ մեկ տարուց

պակաս է) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5141 «Տրված երկարաժամկետ մուրհակների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 5142 «Տեղաբաշխված երկարաժամկետ պարտատուների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս», 5143 «Այլ երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»:

Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ փոխատուների, փոխառությունների ժամկետների, առանձին փոխառությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Երկարաժամկետ փոխառությունների ժամկետից շուտ մարման արտացոլում (կարճաժամկետ մասի ծով)	
- փաստացի վճարված գումարի չափով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Երկարաժամկետ փոխառությունների ժամկետից շուտ մարման արտացոլում (կարճաժամկետ մասի ծով)	
- փաստացի վճարված գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Չվճարված կապիտալ»
4. Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը նախատեսված է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Վարձակալություն» ՀՀՄՄ 17-ում:

Հաշիվը պահվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրս գրումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
---	-----------------

1. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի տեղափոխում	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքերի մարում՝ ժամկետից շուտ (կարճաժամկետ մասի գծով)	
- փաստացի վճարված (վճարվելիք) գումարի չափով	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
- հաշվեկշռային արժեքի և փաստացի վճարված գումարի բացասական տարբերության չափով	727 «Ֆինանսական ծախսեր»
3. Ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
4. Վարձակալված հիմնական միջոցների վերադարձում վարձատուին	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը նախատեսված է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի (ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով վճարվելիք համախառն գումարների և դրանց գեղչված արժեքի տարբերությունը) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, ընդ որում չկրած տոկոսային ծախսերի գումարը որոշելիս

գործարքի հետ կապված ծախսումները (բացառությամբ ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ ֆինանսական պարտավորության գծով գործարքի հետ կապված ծախսումների) գումարվում են: Եթե կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների զեղչման ազդեցությունը էական չէ կամ դրանց ստացումը և մարումը կատարվելու են միևնույն հաշվետու ժամանակաշրջանում, ապա կազմակերպությունները, տոկոսային ծախսը հաշվեգրելիս, կարող են զեղչման ազդեցությունը հաշվի չառնել: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումների որոշման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում և «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերը, իսկ կրեդիտում՝ չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրումը ծախսերին: Հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5161 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ վարկերի գծով», 5162 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մասի գծով», 5163 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ փոխառությունների գծով», 5164 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով», 5165 «Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասի գծով»:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկատուների, փոխատուների, վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը
դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Չկրած տոկոսային ծախսերի արտացոլում	511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»
2. Գործարքի հետ կապված ծախսումների արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկո» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
3. Թողարկված բաղադրյալ պարտքային գործիքում պարունակվող՝ որպես սեփական կապիտալ դասակարգված ածանցյալ գործիքների արտացոլում	352 «Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ»

4. Արտոնյալ (անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով) փոխառությունների արտոնության բաղադրիչը դասակարգված որպես պետական շնորհ	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ»
5. Երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի վերադասակարգում որպես կարճաժամկետ ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսեր պարտավորությունների գծով»	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Չկրած տոկոսային ծախսերի հաշվեգրում ծախսերին	727 «Ֆինանսական ծախսեր»
2. Չկրած տոկոսային ծախսերի կապիտալացում	118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
3. Ժամկետից շուտ մարված երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում	512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»

Հաշիվ 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական պարտավորությունների՝ որպես առևտրական նպատակներով պահվող դասակարգման, դրանց ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը պահվելու է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորության վերաձված ֆինանսական ակտիվների արժեքը, «կարճ վաճառքի» իրականացման դեպքում վաճառված արժեթղթերը առաքելու պարտավորությունը, դրանց՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ դեբետում՝ մարված առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների արժեքը, դրանց՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ ֆինանսական ակտիվների վերաձվելը ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ ֆինանսական պարտավորությունների վերաձվելը ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. «Կարճ վաճառքի» արտացոլում (երբ կազմակերպությունը վաճառում է դեռևս իր տնօրինության տակ չգտնվող արժեթղթեր)	722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր»
4. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների մարում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

2. Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունների իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական պարտավորությունների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պահվւյին է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված և ընթացիկ ֆինանսական պարտավորության վերածված ֆինանսական ակտիվների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի աճը, իսկ դեբետում մարված որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը, իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հեջավորման գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվների վերածվելը ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած կրեդիտային մնացորդի չափով)	239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերածվելը ընթացիկ ֆինանսական ակտիվների՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (իրական արժեքով վերաչափումից առաջացած դեբետային մնացորդի չափով)	239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
3. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերադասակարգում որպես ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

4. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճ՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»
5. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազում՝	
ա) երբ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (դրամական հոսքերի արդյունավետ հեջում)	673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»
բ) երբ ճանաչվում է շահույթում կամ վնասում (իրական արժեքի հեջում, ինչպես նաև դրամական հոսքերի ոչ արդյունավետ հեջում)	626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»
3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

ԽՈՒՄԲ 52-53 «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ»

52-53 «Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով», 523 «Ստացված կանխավճարներ», 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով», 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության

գծով», 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով», 528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով», 529 «Պարտքեր շահաբաժինների գծով» և 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»:

Հաշիվ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը նախատեսված է հումքի, նյութերի, ապրանքների, ծառայությունների, աշխատանքների, ֆինանսական ակտիվների, հիմնական միջոցների և այլ ակտիվների գնումների գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վերը նշված գործառնություններից առաջացող կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումները, դուրս գրումները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է գնումների գծով կրեդիտորական պարտքերի գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5211 «Կրեդիտորական պարտքեր ստացված հումքի, նյութերի գծով», 5212 «Կրեդիտորական պարտքեր ապրանքների գնումների գծով», 5213 «Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով», 5214 «Կրեդիտորական պարտքեր ստացված ֆինանսական ակտիվների գծով», 5215 «Կրեդիտորական պարտքեր ստացված հիմնական միջոցների գծով», 5216 «Կրեդիտորական պարտքեր այլ գնումների գծով»:

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ձեռք բերված ակտիվների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով պարտքերի արտացոլում՝ - առանց անուղղակի հարկերի	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող

	երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 238 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 256 «Դրամական փաստաթղթեր» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 714 «Գործառնական այլ ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» 731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից» 732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
անուղղակի հարկեր	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումը հետաձգված անուղղակի հարկերի գծով»

2. Բողոքարկումների գծով դեբիտորական պարտքերի արտացոլում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
3. Տրամադրված բնակարանային կոմունալ ծառայությունների դիմաց անձնակազմի դեբիտորական պարտքերի արտացոլում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
4. Արտարժույթով արտահայտված կրեդիտորական պարտքերի փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի մարում՝ ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»
բ) վարկերով և փոխառություններով	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»
գ) փոխադարձ պարտավորությունների հաշվանցմամբ	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
2. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի զիջում	614 «Գործառնական այլ եկամուտներ»
3. Կանոնադրական կապիտալի հետագա ավելացում՝ պարտավորությունների մարմամբ	311 «Կանոնադրական կապիտալ» 312 «Զվճարված կապիտալ»
4. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	542 «Վճարումը հետաձգված հարկային պարտավորություններ»
5. Բողոքարկումների գծով դեբիտորական պարտքի մարում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
6. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից՝ օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

Հաշիվ 523 «Ստացված կանխավճարներ»

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը նախատեսված է գնորդներից և պատվիրատուներից արտադրանքի,

ապրանքների, այլ ակտիվների մատակարարման, ինչպես նաև աշխատանքների, ծառայությունների մատուցման և գործառնական վարձակալության համար ստացված կանխավճարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վերը նշված գործառնությունների համար ստացված կանխավճարների գումարը, իսկ դեբետում՝ դրանց մարումը կամ դուրս գրումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ստացված կանխավճարների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

523 «Ստացված կանխավճարներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5231 «Ստացված կանխավճարներ վաճառվելիք արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գծով», 5232 «Ստացված կանխավճարներ վաճառվելիք ոչ ընթացիկ ակտիվների գծով», 5233 «Ստացված կանխավճարներ գործառնական վարձակալության գծով», 5234 «Այլ նպատակներով ստացված կանխավճարներ»:

Ստացված ընթացիկ կանխավճարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ստացված կանխավճարների արտացոլում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

523 «Ստացված կանխավճարներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ստացված կանխավճարների մարում վաճառված ակտիվներով (ոչ իրական արժեքով չափվող), մատուցված ծառայություններով՝ - առանց անուղղակի հարկերի	 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ» 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից» 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»
- անուղղակի հարկեր	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
2. Ստացված կանխավճարների մարում իրական արժեքով չափվող ակտիվների տրամադրմամբ (օտարմամբ)	

- առանց անուղղակի հարկերի	116 «Կենսաբանական ակտիվներ» 122 «Ներդրումային գույք» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
- անուղղակի հարկեր	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
3. Ստացված կանխավճարների հաշվին ընթացիկ դեբիտորական պարտքերի հաշվանցում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
4. Ստացված ընթացիկ կանխավճարների հետ վերադարձ	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

Հաշիվ 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը նախատեսված է հարկերի, տուրքերի, բյուջե վճարվող այլ պարտադիր վճարների, ինչպես նաև դրանց գծով տույժերի, տուգանքների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է բյուջեի նկատմամբ առաջացած կարճաժամկետ պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտավորությունների մարումը, ինչպես նաև անուղղակի հարկերի գծով հաշվանցվող գումարները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է բյուջեին ունեցած կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես բյուջեի գծով դեբիտորական պարտք:

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5241 «Պարտքեր շահութահարկի գծով», 5242 «Պարտքեր եկամտահարկի գծով», 5243 «Պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով», 5244 «Պարտքեր ակցիզային հարկի գծով», 5245 «Պարտքեր գույքահարկի գծով», 5246 «Պարտքեր հողի հարկի գծով», 5247 «Պարտքեր մաքսատուրքի գծով», 5248 «Պարտքեր հարկերի դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների գծով», 5249 «Պարտքեր այլ պարտադիր վճարների գծով»:

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Բյուջեի գծով ընթացիկ պարտավորությունների արտացոլում՝	
ա) շահութահարկի գծով	
- երբ հարկի վճարումը չի հետաձգվել	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
- երբ իրացման դիմաց վճարումը ստացվել է (երբ հարկի վճարման ժամկետը հետաձգվել էր մինչև իրացման դիմաց վճարի ստացումը)	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ հետաձգված հարկերի գծով»
բ) եկամտահարկի գծով՝	
- աշխատավարձից	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
- այլ տիպի գործառնություններից	211 «Նյութեր» 216 «Ապրանքներ»

զ) ավելացված արժեքի հարկի գծով՝	
- երբ հարկի վճարումը չի հետաձգվել	221 «Դեֆիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեֆիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 523 «Ստացված կանխավճարներ»
- երբ իրացման դիմաց վճարումը ստացվել է (այն ապրանքների և ծառայությունների համար, որոնց ԱԱՀ-ի պարտավորության ծագման պահը որոշվում է դրանց դիմաց վճարման պահով)	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»
դ) ակցիզային հարկի գծով	221 «Դեֆիտորական պարտքեր վաճառքների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ»
ե) հողի հարկի և գույքահարկի գծով	713 «Վարչական ծախսեր»
զ) մաքսատուրքի գծով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ»
է) հաստատագրված վճարի գծով	713 «Վարչական ծախսեր»
ը) այլ պարտադիր վճարների գծով	713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Հարկային նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրս գրումից՝ նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի որպես պարտավորություն ձևակերպում	714 «Գործառնական այլ ծախսեր»

3. Հարկերի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների հաշվեգրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
4. Ակտիվների (աշխատանքների, ծառայությունների) փոխանակման դեպքում ԱԱՀ գումարների հաշվանցում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
5. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի գերավճարի վերադասակարգում	225 «Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
6. Ակտիվների անհատույց տրամադրումից առաջացած ավելացված արժեքի հարկ	728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»

524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վճարումներ բյուջեին կարճաժամկետ պարտավորությունների դիմաց	252 «Հաշվարկային հաշիվ»
2. Հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների արտացոլում	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
3. Հաշվանցվող ակցիզային հարկի գումարների արտացոլում	261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»
4. Կանխավճարների հաշվին ընթացիկ պարտավորությունների մարում	225 «Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

Հաշիվ 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը նախատեսված է պարտադիր սոցիալական ապահովության վճարների (ինչպես աշխատավարձից պահվող, այնպես էլ գործատուի կողմից վճարվող), ինչպես նաև դրանց գծով տույժերի, տուգանքների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջացած կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը, ինչպես նաև աշխատակիցներին վճարված կամ վճարման ենթակա անաշխատունակության և այլ սոցիալական նպաստները: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է պարտադիր սոցիալական ապահովության գծով կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես դեբիտորական պարտք:

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5251 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով՝ աշխատակիցների հաշվին», 5252 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով՝ գործատուների հաշվին», 5253 «Պարտավորություններ՝ փոխհատուցելի բացակայությունների գծով հաշվեգրվելիք պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, ծախսային ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների նկատմամբ հաշվարկված սոցիալական ապահովության վճարների արտացոլում ըստ նշանակության	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի արտացոլում» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից պահված սոցիալական ապահովության վճարների գծով պարտքի արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
3. Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված տույժերի, տուգանքների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»
4. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գերավճարի տեղափոխում	227 «Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Սոցիալական ապահովության գծով կարճաժամկետ պարտքերի մարում	252 «Հաշվարկային հաշիվ»
2. Աշխատակիցներին վճարված կամ վճարման ենթակա անաշխատունակության կամ այլ սոցիալական նպաստների արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
3. Գերավճարի հաշվին սոցիալական ապահովության վճարների գծով պարտքի մարում	227 «Դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

Հաշիվ 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների, օրինակ՝ փոխհատուցելի բացակայությունների (արձակուրդ, ժամանակավոր անաշխատունակություն և այլն) դիմաց հատուցումներ, պարգևավճարների գծով հատուցումներ, աշխատակիցների բուժսպասարկում, բնակարանով և ավտոմեքենայով ապահովում, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքներ կամ ծառայություններ և այլն) գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով առաջացած կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով կրեդիտորական պարտքերը հաշվետու ամսաթվի դրությամբ: Դեբետային մնացորդի առաջացման դեպքում այն ձևակերպվում է որպես դեբիտորական պարտք:

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5271 «Պարտքեր աշխատավարձի վճարման գծով», 5272 «Պարտքեր փոխհատուցելի բացակայությունների գծով», 5273 «Պարտքեր պարգևավճարների գծով, 5274 «Պարտքեր ավանդագրված հատուցումների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, ծախսային ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների արտացոլում ըստ նշանակության	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի արտացոլում» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գերավճարի տեղափոխում	229 «Այլ դեբիտորական պարտքեր»

527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Աշխատավարձի վճարում`	
ա) դրամական միջոցներով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ»
բ) բնամթերքով	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» 614 «Գործառնական այլ եկամուտներ»
2. Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից հատկացումներ`	
ա) եկամտահարկի գծով	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
բ) սոցիալական ապահովության գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
գ) կատարողական թերթիկներով	531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
դ) աշխատակիցների` ապառիկ գնված ապրանքների, փոխառությունների գծով կազմակերպության նկատմամբ ունեցած պարտքերի մարման համար	229 «Այլ դեբիտորական պարտքեր»
ե) աշխատակիցների կողմից կազմակերպությունից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց դեբիտորական պարտքերի մարման համար	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
զ) նյութական վնասի փոխհատուցման համար	222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
3. Կանխավճար աշխատավարձի հաշվին	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ»

Հաշիվ 528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով»

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է առհաշիվ անձանց գծով, ինչպես նաև աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքերի գումարը, իսկ դեբետում` այդ պարտքերի մարումը, վերաձևակերպումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է աշխատակիցներին այլ գործառնությունների գծով կրեդիտորական պարտքը հաշվետու ամսաթվի դրությամբ:

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները` 5281 «Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով», 5282 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ աշխատակիցների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում յուրաքանչյուր աշխատողի՝ առհաշիվ գործառնությունների գծով կրեդիտային մնացորդի ձևակերպումը որպես ընթացիկ կրեդիտորական պարտք	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»
--	---

528 «Պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում յուրաքանչյուր աշխատողի՝ առհաշիվ գործառնությունների գծով կրեդիտային մնացորդի վերաձևակերպում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»

Հաշիվ 529 «Պարտքեր շահաբաժինների գծով»

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը նախատեսված է կազմակերպության մասնակիցների (բաժնետերերի) հետ կանոնադրական կապիտալում մասնակցության դիմաց ստացվող եկամուտների (շահաբաժինների) գծով կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հայտարարված շահաբաժինների (այդ թվում միջանկյալ) գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտքերի մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հայտարարված և չվճարված շահաբաժինների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ մասնակիցների (բաժնետերերի) և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հայտարարված շահաբաժինների գումարների արտացոլում՝	
ա) հաշվետու տարվա արդյունքներով	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)» 351 «Պահուստային կապիտալ»
բ) միջանկյալ շահաբաժիններ գծով	344 «Միջանկյալ շահաբաժիններ»

529 «Պարտքեր շահաբաժինների գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շահաբաժինների վճարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
2. Կազմակերպության բաժնետոմսերով շահաբաժինների վճարում	311 «Կանոնադրական (կապիտալ)» 312 «Չվճարված կապիտալ»

Հաշիվ 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը նախատեսված է կազմակերպության այլ ընթացիկ պարտավորությունների, մասնավորապես, գործառնական վարձակալության, տույժերի և տուգանքների (բացառությամբ հարկերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և այլ պարտադիր վճարների գծով հաշվարկված տույժերի և տուգանքների), ապահովագրավճարների գծով ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ

տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հաշվեգրված պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ այդ պարտավորությունների մարումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է այլ ընթացիկ պարտավորությունների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5321 «Պարտքեր գործառնական վարձակալության գծով», 5312 «Պարտքեր տույժերի, տուգանքների գծով», 5313 «Պարտքեր ապահովագրավճարների գծով»:

Այլ ընթացիկ պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կրեդիտորների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Այլ ընթացիկ պարտավորությունների հաշվեգրում՝	
ա) գործառնական վարձակալության գծով	
- առանց ԱԱՀ-ի	543 «Ընթացիկ պահուստներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
- ԱԱՀ	226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» 261 «Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով»

բ) ապահովագրավճարների գծով	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 712 «Իրացման ծախսեր» 713 «Վարչական ծախսեր» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
գ) գնորդներից հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների դիմաց	612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»
դ) կատարողական թերթիկներով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
2. Հաշվարկված տույժերի ու տուգանքների արտացոլում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) վճարման դիմաց պարտավորության արտացոլում (գնման գնով)	313 «Հետ գնված կապիտալ»
4. Ձեռնարկատիրական գործունեության ձեռք բերման դիմաց վճարվելիք գումարների արտացոլում	156 «Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում»
5. Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտքերի ժամկետից շուտ մարման դեպքում վճարվելիք գումարների արտացոլում	413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս»
6. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի արտացոլում	725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Այլ ընթացիկ պարտավորությունների մարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
2. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»

3. Արտարժույթով արտահայտված վճարումների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի արտացոլում	625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»
--	--

ԽՈՒՄԲ 54 «ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

54 «Այլ ընթացիկ պարտավորություններ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ», 542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ», 543 «Ընթացիկ պահուստներ», 544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով»:

Հաշիվ 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը նախատեսված է եկամուտներին վերաբերող շնորհների (շնորհներ, որոնք չեն հանդիսանում ակտիվներին վերաբերող շնորհներ) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Եկամուտներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՄ 20-ում:

Հաշիվը պահվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է եկամուտներին վերաբերող շնորհների գումարը, իսկ դեբետում՝ դրանց վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է դեռևս եկամուտ չճանաչված եկամուտներին վերաբերող շնորհների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Եկամուտներին վերաբերող շնորհների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց առաջացման ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Եկամուտներին վերաբերող շնորհների ստացում	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Եկամուտներին վերաբերող շնորհների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»
2. Շնորհների վերադարձում՝ չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդի հաշվին	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում»

Հաշիվ 542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ»

542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը նախատեսված է այն հաշվարկված հարկերի գծով պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնց վճարման ժամկետը, հարկային օրենսդրության համաձայն, հետաձգվում է, սովորաբար, մինչև դրանց հետ կապված վճարումների փաստացի կատարումը կամ ստացումը, օրինակ, կազմակերպության՝ որպես հարկային գործակալի կողմից վարձակալության կամ գնումների դիմաց քաղաքացիներին վճարվելիք գումարից պահվող եկամտահարկը, կամ ջրային ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկը և շահութահարկը:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վճարումն հետաձգված հարկային պարտավորությունների գումարը, իսկ դեբետում՝ դրանց փոխանցումը հարկերի գծով պարտքերի հաշվին: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է հետաձգված հարկերի գծով ընթացիկ պարտավորությունների գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Վճարումն հետաձգված հարկային պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հարկերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

542 «Վճարումն հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Իրացված արտադրանքի, ապրանքների, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների գծով հարկային հաշիվներում առկա ԱԱՀ-ի գումարների արտացոլում, երբ իրացման և հարկային պարտավորությունների առաջացման պահերը չեն համընկնում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
2. Իրացված արտադրանքի, ապրանքների, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների գծով շահութահարկի գումարների արտացոլում, երբ հարկի վճարման ժամկետը հետաձգվել է մինչև իրացման դիմաց վճարի ստացման ժամանակաշրջանը	751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»
3. Ֆիզիկական անձ մատակարարներից պահվող եկամտահարկի կամ ոչ ռեզիդենտ մատակարարներից պահվող շահութահարկի գումարների արտացոլում	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

542 «Վճարումը հետաձգված հարկային պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Վճարումը հետաձգված հարկային պարտավորությունների տեղափոխումը հարկերի գծով պարտքի հաշիվ	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

Հաշիվ 543 «Ընթացիկ պահուստներ»

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող ընթացիկ պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ընթացիկ պահուստների ճանաչման, չափման և օգտագործման մոտեցումները նկարագրված են «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ում:

Հաշիվը պատկերված է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ճանաչված ընթացիկ պահուստների գումարը, ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասը, իսկ դեբետում՝ դրանց օգտագործումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է ընթացիկ պահուստների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ:

543 «Ընթացիկ պահուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 5431 «Երաշխիքային վաճառքների գծով ընթացիկ պահուստներ», 5432 «Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ պահուստներ», 5433 «Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ», 5434 «Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մաս», 5435 «Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ»:

Ընթացիկ պահուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առանձին պահուստների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ընթացիկ պահուստների ճանաչում	714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասի տեղափոխում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
3. Ոչ ընթացիկ պահուստների ընթացիկ մասի գծով զեղչման ազդեցության ճշգրտման (զեղչի հետպտույտի) հետևանքով տոկոսային ծախսի արտացոլում	727 «Ֆինանսական ծախսեր»

543 «Ընթացիկ պահուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ընթացիկ պահուստների օգտագործում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»

544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը նախատեսված է կապալառուների մոտ, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՄ 11-ին համապատասխան, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն ճանաչման ենթակա «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարների» վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանագրի աշխատանքների դիմաց պատվիրատուներին հասանելիք համախառն գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ, կուտակային հիմունքով, կրած (կատարված) ծախսումներ, գումարած՝ ճանաչված շահույթները, հանած՝ ճանաչված վնասներ և հանած՝ միջանկյալ հաշիվների գումարը, երբ գուտ հանրագումարը բացասական թիվ է:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ներկայացված միջանկյալ հաշիվների (հաշիվ ապրանքագրերի) գումարը՝ այդ աշխատանքների գծով ճանաչված հատույթը գերազանցող մասով, իսկ դեբետում՝ այդ գումարների հատույթ ճանաչումը: Այս հաշվի մնացորդը կրեդիտային է և իրենից ներկայացնում է պայմանագրային աշխատանքների գծով պատվիրատուներին հասանելիք համախառն գումարները (որպես պարտավորություն) հաշվետու ամսաթվի դրությամբ:

Կառուցման պայմանագրերի գծով պատվիրատուներին հասանելիք համախառն գումարների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանագրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

544 «Պատվիրատուներին հասանելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կառուցման պայմանագրերի ներքո կատարված աշխատանքների գծով ներկայացված հաշիվներ (հաշիվ ապրանքագրեր) ճանաչված հատույթ՝ գումարը գերազանցող չափով	221 «Դերիտորական պարտքեր վաճառքների գծով»
2. Կառուցման պայմանագրերի գծով ծախսի ճանաչում կատարված ծախսումները գերազանցող չափով	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

544 «Պատվիրատուներից ստացվելիք համախառն գումարներ կառուցման պայմանագրերի գծով» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կառուցման պայմանագրերի ներքո նախապես ներկայացված հաշվի (հաշիվ ապրանքագրի) գծով հատույթի ճանաչում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հատույթ»
2. Կառուցման պայմանագրերի ներքո հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսումներ, որոնց գծով ծախս է ճանաչվել նախկինում	811 «Հիմնական արտադրություն»

ԴԱՍ 6 «ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Այս դասի հաշիվները, բացառությամբ կարգավորող հաշիվների, պասիվային են և նախատեսված են կազմակերպության գործառնական գործունեությունից եկամուտների, շարունակվող գործունեության այլ եկամուտների, ընդհատված գործունեությունից եկամուտների, վերադասակարգման ճշգրտումներից օգուտների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 6-րդ՝ «Եկամուտներ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 61 «Գործառնական գործունեությունից եկամուտներ», 62 «Շարունակվող գործունեության այլ եկամուտներ», 63 «Ընդհատված գործունեությունից եկամուտներ» և 64 «Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտներ», 67 «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտներ»:

Այս դասի հաշիվները հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդ չեն ունենում:

61 «Գործառնական գործունեությունից եկամուտներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ», 612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում», 614 «Գործառնական այլ եկամուտներ» և 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ»:

Գործառնական գործունեությունից եկամուտների ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են, մասնավորապես, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11-ում, «Հասույթ» ՀՀՄՍ 18-ում և «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ում:

Հաշիվ 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»

611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» հաշիվը նախատեսված է արտադրանքի և ապրանքների իրացումից, աշխատանքների կատարումից ու ծառայությունների մատուցումից ստացված հասույթի (առանց անուղղակի հարկերի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվւպային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ստացված հասույթի գումարը, իսկ դեբետում՝ հետ վերադաձումների հետ կապված հասույթի ճշգրտումը և արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթի դուրս գրումը շահույթին կամ վնասին:

611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6111 «Արտադրանքի վաճառքներից հասույթ», 6112 «Ապրանքների վաճառքներից հասույթ», 6113 «Աշխատանքների կատարումից հասույթ», 6114 «Ծառայությունների մատուցումից հասույթ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) տեսակների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթի արտացոլում՝	
ա) դեբիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 255 «Դրամական միջոցներ ճանապարհին»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

դ) այլ ակտիվների հետ փոխանակմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
----------------------------------	--

611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վաճառված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում	612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հասույթի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում»

612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» հաշիվը նախատեսված է իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտման վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, կարգավորող: Մասնավորապես, դեբետում արտացոլվում է գնորդների կողմից հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների արժեքը՝ վաճառքի գներով (առանց անուղղակի հարկերի, իսկ կրեդիտում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում հասույթի ճշգրտումը:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» հաշիվը
դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հետ վերադարձումից առաջացած գումարների արտացոլում՝	
ա) դեբիտորական պարտքերի նվազեցմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով վճարմամբ	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
գ) կրեդիտորական պարտքերի ձևակերպմամբ	531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» հաշիվը
կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հետ վերադարձումից հասույթի ճշգրտում	611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»

Հաշիվ 614 «Գործառնական այլ եկամուտներ»

614 «Գործառնական այլ եկամուտներ» հաշիվը նախատեսված է գործառնական այլ եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվային է, կրեդիտում արտացոլվում է գործառնական այլ եկամուտների գումարը, իսկ դեբետում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

614 «Գործառնական այլ եկամուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6141 «Այլ պաշարների օտարումից եկամուտներ», 6142 «Պաշարների արժեքի փոփոխություններից եկամուտներ, դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) հակադարձումից եկամուտներ», 6143 «Գործառնական վարձակալությունից եկամուտներ», 6144 «Եկամուտներ տույժերից, տուգանքներից», 6145 «Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ», 6146 «Գործառնական այլ եկամուտներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

614 «Գործառնական այլ եկամուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Այլ պաշարների իրացումից հասույթի արտացոլում՝	
բ) դեբիտորական պարտքի առաջացմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

դ) այլ ակտիվների հետ փոխանակմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Գործառնական վարձակալությունից եկամտի արտացոլում (առանց անուղղակի հարկերի)	222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
3. Եկամուտներ տույժերից, տուգանքներից	222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
4. Դուրս գրված դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) հակադարձումից և մարումից եկամտի արտացոլում	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
5. Վաճառքների և այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի չօգտագործված մնացորդի դուրս գրում	223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»
6. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի զիջումից եկամտի արտացոլում	521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

7. Նյութական վնասի փոխհատուցումից եկամտի արտացոլում	222 «Դեֆիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 251 «Դրամարկդ»
8. Ապահովագրական հատուցումից եկամտի արտացոլում	222 «Դեֆիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
9. Պաշարների արժեքի իջեցման գումարների հակադարձումից (երբ այն չի դիտվում որպես տվյալ ժամանակաշրջանում ծախսի նվազեցում) եկամտի արտացոլում	218 «Պաշարների արժեքի նվազում»
10. Գույքագրմամբ հայտնաբերված ավելցուկից եկամտի արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 214 «Անավարտ արտադրություն» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկդ» 256 «Դրամական փաստաթղթեր»
11. Հիմնական միջոցների լուծարումից ստացված պիտանի նյութերի մուտքագրում	211 «Նյութեր»
12. Սահմանված հատուցումների պլանների ակտիվների գծով ակնկալվող հատույցի արտացոլում	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

614 «Գործառնական այլ եկամուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գործառնական այլ եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ»

615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» հաշիվը նախատեսված է գյուղատնտեսական գործունեությունից եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտը ներառում է կենսաբանական ակտիվներից ստացված արդյունքը (բերքահավաք, ծնած), կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտը, սկզբնական արժեքի հիմունքով չափվող կենսաբանական ակտիվների օտարումից եկամուտը:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է գյուղատնտեսական գործունեությունից եկամտի գումարը, իսկ դեբետում՝ այդ եկամտի դուրս գրումը շահույթին կամ վնասին: Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտների ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ում:

615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6151 «Բերքահավաքից (ներառյալ ծնածից) եկամուտ», 6152 «Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ», 6153 «Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ», 6154 «Կենսաբանական ակտիվների օտարումից եկամուտ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կենսաբանական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերեա
1. Գյուղատնտեսական արտադրանքի ստացում բերքահավաքից (ներառյալ՝ ծնածից)	116 «Կենսաբանական ակտիվներ» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք»
2. Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ (պայմանավորված գնի և (կամ) ֆիզիկական փոփոխությամբ)	116 «Կենսաբանական ակտիվներ» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
3. Սկզբնական արժեքի հիմունքով չափվող կենսաբանական ակտիվների վաճառքից եկամուտ՝	
ա) դեբիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկո» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 255 «Դրամական միջոցներ ճանապարհին»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

դ) այլ ակտիվների հետ փոխանակմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
----------------------------------	--

615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գյուղատնտեսական գործունեությունից եկամտի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 62 «ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

62 «Շարունակվող գործունեության այլ եկամուտներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ», 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ», 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ», 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ», 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ», 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ», 628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» և 629 «Այլ եկամուտներ»:

Հաշիվ 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ»

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից եկամտի արտացոլում	
ա) դեբիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ»

դ) այլ ակտիվների հետ փոխանակմամբ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Ֆինանսական վարձակալությունում գուտ ներդրման չափով՝ ակտիվները ֆինանսական վարձակալության տալու դեպքում	146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»

621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների (օրինակ՝ վաճառքի օպցիոնի) իրագործումը՝ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ վաճառելու նպատակով (ճշգրտում է ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից եկամուտները)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»

622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» հաշիվը նախատեսված է ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից կամ այլ կերպ օտարումներից եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այս հաշիվն օգտագործելու փոխարեն, որպես այլընտրանք, ֆինանսական ակտիվների (հատկապես, իրական արժեքով չափվողների) օտարումը կարող է գրանցվել առանց վաճառքից (օտարումից) եկամուտ ճանաչելու՝ վաճառվող (օտարվող) ակտիվները հաշվառող հաշիվների կրեդիտը (հաշվեկշռային արժեքով) թղթակցելով

վաճառքից (օտարումից) ստացված կամ ստացվելիք հատուցումը հաշվառող հաշիվների դեբետի հետ, իսկ հատուցման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը՝ դեբետագրելով ծախսային հաշիվներին:

Հաշիվը պահվային է, կրեդիտում արտացոլվում է ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտների գումարը, իսկ դեբետում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընթացիկ ֆինանսական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ընթացիկ ֆինանսական ակտիվների (սովորաբար՝ իրական արժեքով չչափվող) վաճառքից հասույթի արտացոլում՝	
ա) դեբիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ»
դ) այլ ակտիվների հետ փոխանակմամբ	141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների (օրինակ՝ վաճառքի օպցիոնի) իրագործումը՝ ընթացիկ ֆինանսական ակտիվներ վաճառելու նպատակով (ճշգրտում է ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից եկամուտները)	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»
---	------------------------

Հաշիվ 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշիվը նախատեսված է ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից (վերագնահատումից) օգուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտների գումարը, իսկ դեբետում՝ դրանց դուրս գրումը շահույթին կամ վնասին:

624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6241 «Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ», 6242 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից օգուտներ», 6243 «Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորստի հակադարձումից օգուտներ», 6244 «Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկման կորստի հակադարձումից օգուտներ», 6245 «Ներդրումային գույքի վերաչափումից օգուտներ», 6246 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկման հակադարձումից) օգուտներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վերագնահատվող (վերաչափվող) ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի արտացոլում (այն չափով, որքանով վերականգնում է նախորդ վերագնահատումներից նախապես շահույթում կամ վնասում ճանաչված նվազումը)	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Ներդրումային գույքի՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների արտացոլում	122 «Ներդրումային գույք»

3. Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, սկզբնական արժեքի հիմունքով չափվող կենսաբանական ակտիվների, ներդրումային գույքի, հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման կորստի հակադարձումից օգուտների արտացոլում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» 154 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով»
4. Վերագնահատման մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի նվազում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է որպես վերագնահատումից արժեքի աճ	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
5. Որպես վաճառքի համար պահող դասակարգված և ընդհատված գործունեություն չկազմող ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկման հակադարձումից) օգուտ	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի դեպքում կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) գումարի աճ (երբ այդ աճը ճանաչվում է շահույթում կամ վնասում)	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և վերաչափումից օգուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ»

625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» հաշիվը նախատեսված է արտարժույթով դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած օգուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտների գումարը, իսկ դեբետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտարժույթների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Արտարժույթով դրամային հոդվածների վերահաշվարկումից օգուտների արտացոլումը	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 229 «Այլ դեբիտորական պարտքեր» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 235 «Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկդ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

	չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
--	--

625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտարժույթով արտահայտված՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտի ճշտում՝ չկրած տոկոսային ծախսերի մասով	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»

626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» հաշիվը նախատեսված է ոչ գործառնական ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից, ինչպես նաև արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտների գումարը, իսկ դեբետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6261 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից օգուտներ», 6263 «Վաճառքի համար մատչելի ոչ գործառնական ֆինանսական ակտիվների վերաչափումից օգուտներ», 6264 «Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից օգուտներ», 6265 «Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ֆինանսական գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով վերաչափումից օգուտների արտացոլում	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
2. Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտների արտացոլում	144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» 149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքագրելիություն)» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 235 «Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 241 «Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկում (անհավաքագրելիություն)»

626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից օգուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»

627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» հաշիվը նախատեսված է ֆինանսական ներդրումներից

եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է ֆինանսական ներդրումներից հաշվեգրված եկամուտների գումարը, իսկ դեբետում՝ եկամուտների ճշգրտումը, դուրս գրումը շահույթին կամ վնասին:

627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6271 «Շահաբաժիններ», 6272 «Տոկոսային եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով», 6273 «Ֆինանսական վարձակալությունից եկամուտներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ֆինանսական ներդրումների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հայտարարված շահաբաժինների, հաշվեգրված տոկոսների (այդ թվում չվաստակած ֆինանսական եկամտի ամորտիզացիայի) արտացոլում	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 238 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
2. Տրված փոխառությունների և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով ժամկետից շուտ մարման դեպքում հաշվեկշռային արժեքից ավել ստացված գումարների արտացոլում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»

627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ֆինանսական ներդրումներից եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ»

628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» հաշիվը նախատեսված է պետական շնորհներից, ակտիվների անհատույց ստացումներից, պարտավորությունների ներումից եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է պետական (ակտիվներին վերաբերող և եկամուտներին վերաբերող) շնորհներից, ակտիվների անհատույց ստացումից, պարտավորությունների ներումից եկամուտը, իսկ դեբետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պետական շնորհների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ակտիվներին վերաբերող շնորհների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	421 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» 541 «Եկամուտներին վերաբերող շնորհներ»
2. Ակտիվների անհատույց ստացումից եկամուտ (որոնք չեն որակվում որպես պետական շնորհի ստացում, օրինակ, առանց որևէ պայման կցվելու) կամ արդեն կրած ծախսերի կամ կորուստների փոխհատուցման նպատակով շնորհների ստացումից եկամուտ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Մպտովող կենսաբանական ակտիվներ» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտաթուփային հաշիվ» և անհատույց ստացված այլ ակտիվներ հաշվառող հաշիվներ
3. Արտոնյալ (անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով) փոխառությունների արտոնության բաղադրիչը, որը չի դասակարգվում որպես պետական շնորհ	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»

4. Պարտավորությունների ներումից եկամուտ, որը չի դասակարգվում որպես պետական շնորհ	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» և ներված այլ պարտավորությունները հաշվառող հաշիվներ
--	---

628 «Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 629 «Այլ եկամուտներ»

629 «Այլ եկամուտներ» հաշիվը նախատեսված է այլ եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է այլ եկամուտների գումարը, իսկ կրեդիտում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

629 «Այլ եկամուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ճանաչված պահուստների նվազում՝ տնտեսական օգուտների արտահոսքի գնահատականի կամ գեղջման դրույքի փոփոխության արդյունքում (բացի հիմնական միջոցների սկզբնական արժեքում ճանաչվող նվազումից)	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
2. Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերումից օգուտ	156 «Ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերում»

629 «Այլ եկամուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում այլ եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 63 «ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ»

63 «Ընդհատված գործունեությունից եկամուտներ» խումբն իր մեջ ներառում է 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»՝ ընդհատված գործունեությունից», 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ» առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները:

Ընդհատված գործունեության հասկացությունը, դրան վերաբերող եկամուտների ճանաչման, չափման և ներկայացման գծով առանձնահատկությունները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

Հաշիվ 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»՝
ընդհատված գործունեությունից»

631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»՝ ընդհատված գործունեությունից» հաշիվը նախատեսված է ընդհատված դասակարգված գործառնության հասույթների (ներառյալ՝ ծառայությունների մատուցումից, աշխատանքների կատարումից, արտադրանքի, ապրանքի վաճառքից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այստեղ չեն ներառվում ընդհատված գործունեության այլ ակտիվների (բացի արտադրանքից, ապրանքներից) վաճառքից (օտարումից) եկամուտները:

Հաշիվը պահվային է, կրեդիտում արտացոլվում է ընդհատված գործունեության արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը, իսկ դեբետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընդհատված գործունեության տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»՝
ընդհատված գործունեությունից» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Ընդհատված գործունեության արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	

ա) դեֆիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեֆիտորական պարտքեր վաճառքների գծով»
բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտաթուրային հաշիվ»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ»

631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ ընդհատված գործունեությունից» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեությունից արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթի՝ «Շահույթ կամ զուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ»

632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ» հաշիվը նախատեսված է ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների (ներառյալ՝ հիմնական միջոցներ, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ, պաշարներ և այլն և բացառյալ՝ տվյալ գործունեության առարկա հանդիսացող արտադրանքի, ապրանքների) վաճառքից (օտարումից) և (կամ) վերաչափումից եկամուտների (օգուտների) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամտի (օգուտի) գումարը, իսկ դերետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6321 «Ընդհատված գործունեությանը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից եկամուտներ», 6322 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընդհատված գործունեության և այդ գործունեությունը կազմող ակտիվների և պարտավորությունների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դերետ
1. Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից եկամուտ՝	
ա) դեֆիտորական պարտքերի առաջացմամբ	221 «Դեֆիտորական պարտքեր վաճառքների գծով»

բ) դրամական միջոցներով անմիջական վճարման դեպքում	251 «Դրամարկ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
գ) պարտավորությունների մարմամբ	523 «Ստացված կանխավճարներ»
2. Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի «իրական արժեք հասած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից (արժեզրկման հակադարձումից) օգուտ	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտներ» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 64 «ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ՕԳՈՒՏՆԵՐ»

64 «Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ», 643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ», 644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»:

Վերադասակարգման ճշգրտումները նախապես՝ ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարներն են: Վերադասակարգման ճշգրտումների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում, «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվ 642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»

642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների (բացի հեջավորման փոխհարաբերության մաս կազմողներց) իրական արժեքով վերաչափումից՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտները, իսկ դերետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ

հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ տվյալ ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ	322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

642 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ»

643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջի ժամանակ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես՝ ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում, մասնավորապես 97-100-րդ պարագրաֆներում:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտները, իսկ դեբետում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ այն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված գործարքն է ազդում շահույթի կամ վնասի վրա (օրինակ՝ երբ տեղի է ունենում կանխատեսված վաճառք) կամ, երբ հեջավորված կանխատեսված գործարքի արդյունքում ճանաչված ակտիվը կամ պարտավորություն է ազդում շահույթի կամ վնասի վրա	323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

643 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ»

644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտները ներառում են արտերկրյա ստորաբաժանումների (մասնաճյուղերի) ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից օգուտները, և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պահվւյին է, կրեդիտում արտացոլվում են ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտները, իսկ դեբետում՝ դրանց դուրս գրումը շահույթին կամ վնասին:

644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ	324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

644 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

67 «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ», 672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ», 673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ», 674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ», 675 «Ակտուարային օգուտներ»:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են, մասնավորապես, «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում, «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում, «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվ 671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ»

671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից, ինչպես նաև արժեզրկման հակադարձումից չիրացված օգուտների (այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես՝ այն, թե օգուտի ո՞ր մասն է ենթակա ճանաչման շահույթում կամ վնասում, և ո՞ր մասը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում) նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից (զուտ կամ համախառն) հաշվեկշռային արժեքի աճը, արժեզրկման հակադարձումից օգուտը, իսկ դեբետում՝ վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) ավելացումը, զուտ աճի փոխանցումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 6711 «Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ», 6712 «Հիմնական միջոցների արժեզրկման հակադարձումից օգուտներ», 6713 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից օգուտներ», 6714 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկման հակադարձումից օգուտներ»:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից չիրացված օգուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վերաչափվող ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքում հաշվեկշռային արժեքի (զուտ կամ համախառն) ավելացման արտացոլում (երբ այդ ավելացումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում)	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկման հակադարձումից օգուտի արտացոլում (երբ այդ օգուտը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում)	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»



671 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի դեպքում կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) գումարի ավելացում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի կամ արժեզրկման հակադարձման հետևանքով հետաձգված հարկային պարտավորության առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային ակտիվի նվազում, երբ հետաձգված հարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
3. Վերագնահատման մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի նվազում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է որպես վերագնահատումից արժեքի աճ	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կամ արժեզրկման հակադարձումից գուտ օգուտի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

Հաշիվ 672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»

672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճից օգուտների (բացի հեջի հաշվառման նպատակներով իրական արժեքի հեջի դեպքում որպես հեջավորված հոդված նախատեսված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի՝ հեջավորված ռիսկին վերագրելի օգուտից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճից օգուտները, իսկ դեբետում՝ այդ օգուտների հարկային հետևանքը և գուտ օգուտների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճից օգուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից (իրական արժեքի աճից) օգուտների արտացոլում	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

672 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճի հետևանքով հետաձգված հարկային պարտավորության առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային ակտիվի նվազում	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի աճից գուտ օգուտի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

Հաշիվ 673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ»

673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջում որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը պասիվային է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտները (որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով), իսկ դեբետում՝ այդ օգուտների հարկային հետևանքը և գուտ օգուտների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների արտացոլում	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

673 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ» հաշիվը դեբետով

Թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների հարկային հետևանքների արտացոլում (հետաձգված հարկային պարտավորության առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային ակտիվի նվազում)	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից գուտ օգուտի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

Հաշիվ 674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ»

674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից օգուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտները ներառում են արտերկրյա ստորաբաժանումների (մասնաճյուղերի) ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից օգուտները, և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՄ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը պահվելիս է, մասնավորապես, կրեդիտում արտացոլվում են արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտները, իսկ դեբետում՝ այդ օգուտների հարկային հետևանքը և գուտ օգուտների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ակտիվների և պարտավորությունների (դրամային և ոչ դրամային) փակման (տարեվերջյան) փոխարժեքով վերահաշվարկումից ակտիվների ավելացում կամ պարտավորությունների նվազում	Արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ակտիվները և պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվներ
2. Արտերկրյա ստորաբաժանումում (մասնաճյուղում) գուտ ներդրման արդյունավետ հեջում հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից (փոխարժեքային) օգուտների արտացոլում	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

674 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտների հարկային հետևանքների արտացոլում (հետաձգված հարկային պարտավորության առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային ակտիվի նվազում)	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային գուտ օգուտի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

Հաշիվ 675 «Ակտուարային օգուտներ»

675 «Ակտուարային օգուտներ» հաշիվը նախատեսված է հետաշխատանքային սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով կամ պլանների ակտիվների գծով առաջացած այն ակտուարային օգուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՄ 19-ին և կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համաձայն ճանաչվում են առաջացման ժամանակաշրջանում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են առաջացած ակտուարային օգուտները, իսկ դեբետում՝ այդ օգուտների տեղափոխումը չբաշխված շահույթին:

Ակտուարային օգուտների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

675 «Ակտուարային օգուտներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով ակտուարային օգուտների արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Պլանների ակտիվների գծով ակտուարային օգուտների արտացոլում	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

675 «Ակտուարային օգուտներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ակտուարային օգուտների փոխանցումը չբաշխված շահույթին	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

ԴԱՍ 7 «ԾԱԽՍԵՐ»

Այս դասի հաշիվներն ակտիվային են և նախատեսված են գործառնական գործունեության ծախսերի, շարունակվող գործունեության այլ ծախսերի, ծախսերի, ընդհատված գործունեությունից ծախսերի, վերադասակարգման ճշգրտումներից կորուստների, շահութահարկի գծով ծախսի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 7-րդ «Ծախսեր» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 71 «Գործառնական գործունեության ծախսեր», 72 «Շարունակվող գործունեության այլ ծախսեր», 73 «Ընդհատված գործունեությունից ծախսեր» 74 «Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ», 75 «Շահութահարկի

գծով ծախս (եկամուտ)» և 77 «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսեր»:

Այս դասի հաշիվները հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդ չեն ունենում:

ԽՈՒՄԲ 71 «ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ»

71 «Գործառնական գործունեության ծախսեր» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք», 712 «Իրացման ծախսեր», 713 «Վարչական ծախսեր», 714 «Գործառնական այլ ծախսեր» և 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»:

Հաշիվ 711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» հաշիվը նախատեսված է վաճառված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ինքնարժեքի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը, իսկ կրեդիտում՝ գնորդների կողմից հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների ինքնարժեքը և իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի դուրս գրումը շահույթին կամ վնասին:

711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7111 «Վաճառված արտադրանքի ինքնարժեք», 7112 «Վաճառված ապրանքների ինքնարժեք», 7113 «Կատարված աշխատանքների ինքնարժեք», 7114 «Մատուցված ծառայությունների ինքնարժեք»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) տեսակների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

**711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Իրացված արտադրանքի, ապրանքների աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի արտացոլում	215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն»
2. Վաճառքի գներով հաշվառված իրացված ապրանքների ինքնարժեքի արտացոլում	
- վաճառքի գին	216 «Ապրանքներ»
- վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն (ճշտանցում)	217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն»

**711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ**

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Գնորդների կողմից հետ վերադարձված արտադրանքի, ապրանքների մուտքագրում	215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում իրացված արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 712 «Իրացման ծախսեր»

712 «Իրացման ծախսեր» հաշիվը նախատեսված է արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է իրացման ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

712 «Իրացման ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7121 «Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ», 7122 «Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր», 7123 «Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր», 7124 «Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովության ծախսեր», 7125 «Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն», 7126 «Մարկետինգի և գովազդի ծախսեր», 7127 «Իրացման այլ ծախսեր»:

Իրացման ծախսերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ իրացված արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) տեսակների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

712 «Իրացման ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Աշխատանքի վճարման, սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Հիմնական միջոցների մաշվածության ծախսերի արտացոլում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն»
4. Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման գծով ծախսերի արտացոլում	211 «Նյութեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»

5. Հիմնական միջոցների գործառնական վարձակալության ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
6. Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման գծով նյութական ծախսերի արտացոլում	211 «Նյութեր»
7. Արտադրանքի, ապրանքների պահպանության և վաճառքի տրանսպորտային ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
8. Ապահովության գծով ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
9. Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրության, մարկետինգի և գովազդի ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
10. Առհաշիվ գումարների գծով ծախսերի արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»

712 «Իրացման ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում իրացման ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 713 «Վարչական ծախսեր»

713 «Վարչական ծախսեր» հաշիվը նախատեսված է վարչական (կազմակերպության համար ընդհանուր նշանակության այլ պայմանական հաստատուն) ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է վարչական ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

713 «Վարչական ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7131 «Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ», 7132 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի), դրանց նորոգման և սպասարկման ծախսեր», 7133 «Գործուղման և

ներկայացուցչական ծախսեր», 7134 «Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր», 7135 «Գրասենյակային և կոմունալ ծախսեր», 7136 «Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր», 7137 «Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովության ծախսեր», 7138 «Չփոխհատուցվող հարկերից ծախսեր», 7139 «Վարչական այլ ծախսեր»:

713 «Վարչական ծախսեր» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Աշխատանքի վճարման, սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի արտացոլում	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսերի արտացոլում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
4. Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսերի արտացոլում	211 «Նյութեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
5. Հիմնական միջոցների գործառնական վարձակալության ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
6. Գործուղման և ներկայացուցչական ծախսերի արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 256 «Դրամական փաստաթղթեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
7. Փոստի և հեռահաղորդակցության ծախսերի արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 256 «Դրամական փաստաթղթեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
8. Գրասենյակային և կոմունալ ծախսերի արտացոլում	211 «Նյութեր» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

9. Աուդիտորական, խորհրդատվական և բանկային ծառայությունների ծախսերի, ապահովության ծախսերի արտացոլում	224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժությային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
10. Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսերի արտացոլում	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

713 «Վարչական ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Մահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարչական ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 714 «Գործառնական այլ ծախսեր»

714 «Գործառնական այլ ծախսեր» հաշիվը նախատեսված է գործառնական այլ ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է գործառնական այլ ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

714 «Գործառնական այլ ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7141 «Այլ պաշարների օտարումից ծախսեր», 7142 «Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսեր, վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) գծով ծախսեր, երաշխիքային սպասարկման և վերանորոգման գծով ծախսեր», 7143 «Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության ծախսեր», 7144 «Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր», 7145 «Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսեր, խոտանված արտադրանքի հետ կապված ծախսեր», 7146 «Հետազոտության և մշակման ծախսեր», 7147 «Հիմնական միջոցների լուծարման ծախսեր», 7148 «Գործառնական այլ ծախսեր»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

714 «Գործառնական այլ ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված) այլ պաշարների ինքնարժեքի արտացոլում	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 214 «Անավարտ արտադրություն»

2. Պաշարների արժեքի նվազումից ծախսի արտացոլում	218 «Պաշարների արժեքի նվազում»
3. Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության ծախսերի արտացոլում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն»
4. Տույժերից, տուգանքներից ծախսերի, դատական ծախսերի արտացոլում	251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
5. Հարկերի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների հաշվեգրում	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
6. Արժեքների պակասորդների և փչացումից կորուստների արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ» 214 «Անավարտ արտադրություն» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն» 251 «Դրամարկդ» 256 «Դրամական փաստաթղթեր»
7. Արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսերի դուրս գրում	811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»
8. Խոտանված արտադրանքի հետ կապված ծախսերի արտացոլում	811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»
9. Երաշխիքային սպասարկման և վերանորոգման ծախսերի արտացոլում	543 «Ընթացիկ պահուստներ»

10. Գործառնական դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսերի արտացոլում (երբ դեբիտորական պարտքերը դուրս են գրվում ուղղակիորեն)	152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»
11. Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ	223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»
12. Հիմնական միջոցների կառուցման (ստեղծման) ծախսումների սկզբնական արժեքը չավելացնող մասի՝ ժամանակաշրջանի ծախս ճանաչումը (նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների՝ նորմալ մակարդակից բարձր ծախսումները)	821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների (ստեղծման) ծախսումներ»
13. Հետազոտության ծախսումների, ինչպես նաև մշակման չկապիտալացվող ծախսումների դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»
14. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող հետագա ծախսումների չկապիտալացվող մասի դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	823 «Հիմնական միջոցների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»
15. Այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների ստեղծման ծախսումների, ինչպես նաև դրանց վրա կատարվող հետագա ծախսումների չկապիտալացվող մասի դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
16. Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսերի արտացոլում	211 «Նյութեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»

17. Հիմնական միջոցների լուծարման ծախսերի արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
18. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հետ վերադարձման դեպքում հաշվեկշռային արժեքի և վճարվելիք համախառն գումարների դրական տարբերության արտացոլում	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
19. Հարկային նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրս գրումից՝ նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի որպես պարտավորություն ձևակերպում	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
20. Հանգստյան տների և առողջարանների ուղեգրերի ծախս ճանաչում	256 «Դրամական փաստաթղթեր»
21. Առհաշիվ գումարների գծով ծախսերի արտացոլում	228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով»
22. Եկամուտներին վերաբերող շնորհների վերադարձում՝ չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող գումարով	252 «Հաշվարկային հաշիվ»

714 «Գործառնական այլ ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գործառնական այլ ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»

715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» հաշիվը նախատեսված է գյուղատնտեսական գործունեությունից ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Գյուղատնտեսական գործունեությունից ծախսերը ներառում են գյուղատնտեսական գործունեության վրա կատարվող ծախսումները, կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստը, սկզբնական արժեքի հիմունքով չափվող կենսաբանական ակտիվների օտարումից ծախսերը:

Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է գյուղատնտեսական գործունեությունից ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ այդ ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին: Գյուղատնտեսական գործունեությունից ծախսերի ճանաչման և չափման մոտեցումները նկարագրված են «Գյուղատնտեսություն» ՀՀՄՄ 41-ում:

715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7151 «Գյուղատնտեսական գործունեության ծախսումներ», 7152 «Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստներ՝ պայմանավորված գնի փոփոխությամբ», 7153 «Կենսաբանական ակտիվները «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստներ՝ պայմանավորված ֆիզիկական փոփոխությամբ», 7154 «Կենսաբանական ակտիվների օտարումից ծախսեր»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կենսաբանական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Գյուղատնտեսական գործունեության վրա կատարվող ծախսումների ծախսագրում	811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն»
2. Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստ (պայմանավորված գնի և (կամ) ֆիզիկական փոփոխությամբ)	116 «Կենսաբանական ակտիվներ» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
3. Սկզբնական արժեքի հիմունքով չափվող՝ օտարված կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքի ծախսագրում՝	116 «Կենսաբանական ակտիվներ» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»

715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում գյուղատնտեսական գործունեությունից ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 72 «ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ»

72 «Շարունակվող գործունեության այլ ծախսեր» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր», 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր», 724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ», 725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ», 726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ», 727 «Ֆինանսական ծախսեր», 728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» և 729 «Այլ ծախսեր»:

Հաշիվ 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»

721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը նախատեսված է ոչ ընթացիկ ակտիվների օտարումից հետ կապված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7211 «Հիմնական միջոցների օտարումից ծախսեր», 7212 «Ոչ նյութական ակտիվների օտարումից ծախսեր», 7213 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր», 7214 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված) ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքի արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 141 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմակերպություններում» 142 «Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում» 143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 154 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով»
2. Ոչ ընթացիկ ակտիվների օտարման հետ կապված ծախսերի արտացոլում	211 «Նյութեր» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
3. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները հետ վերադարձնելիս՝ հաշվեկշռային արժեքի և ֆինանսական վարձակալության գծով պարտավորության դրական տարբերության չափով	119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»

721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր»

722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը նախատեսված է ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից հետ կապված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այս հաշիվն օգտագործելու փոխարեն, որպես այլընտրանք, ֆինանսական ակտիվների (հատկապես, իրական արժեքով չափվողների) օտարումը կարող է գրանցվել առանց վաճառքից (օտարումից) եկամուտ ճանաչելու՝ վաճառվող (օտարվող) ակտիվները հաշվառող հաշիվների կրեդիտը (հաշվեկշռային արժեքով) թղթակցելով վաճառքից (օտարումից) ստացված կամ ստացվելիք հատուցումը հաշվառող հաշիվների դեբետի հետ, իսկ հատուցման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը՝ դեբետագրելով ծախսային հաշիվներին:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընթացիկ ֆինանսական ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վաճառված (օտարված) ընթացիկ ֆինանսական ակտիվների (սովորաբար՝ իրական արժեքով չչափվող) հաշվեկշռային արժեքի արտացոլում	231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 235 «Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
2. «Կարճ վաճառքի» արտացոլում (երբ կազմակերպությունը վաճառում է դեռևս իր տնօրինության տակ չգտնվող արժեթղթեր)	517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
3. Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարման հետ կապված ծախսերի արտացոլում	252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»

722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից (վերագնահատումից) ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց դուրս գրումը շահույթին կամ վնասին:

724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7241 «Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ», 7242 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստներ», 7243 «Հիմնական միջոցների գծով արժեզրկումից կորուստներ», 7244 «Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ», 7245 «Ներդրումային գույքի վերաչափումից կորուստներ», 7246 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկումից) կորուստներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վերագնահատվող (վերաչափվող) ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազման արտացոլում (երբ այդ նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում)	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Ներդրումային գույքի՝ իրական արժեքով վերաչափումից ծախսերի արտացոլում	122 «Ներդրումային գույք»

3. Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, գուդվիլի, սկզբնական արժեքի հիմունքով չափվող կենսաբանական ակտիվների ներդրումային գույքի, հետաձգված ծախսերի գծով արժեզրկման կորստի արտացոլում	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» 154 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով»
4. Վերագնահատման մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի ավելացում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»
5. Որպես վաճառքի համար պահող դասակարգված և ընդհատված գործունեություն չկազմող ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից (արժեզրկումից) կորուստ	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

724 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազման դեպքում կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) գումարի նվազեցում (երբ վերագնահատումից նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում)	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և վերաչափումից ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը նախատեսված է արտարժույթով դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած կորուստների գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտարժույթների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Արտարժույթով դրամային հոդվածների վերահաշվարկումից ծախսերի արտացոլումը	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով» 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 229 «Այլ դեբիտորական պարտքեր» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 235 «Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 251 «Դրամարկդ» 253 «Արտարժույթային հաշիվ» 254 «Այլ հաշիվներ բանկերում» 411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 413 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 511 «Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 512 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 513 «Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ» 514 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս» 515 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք

	համախառն գումարների կարճաժամկետ մաս» 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
--	--

725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտարժույթով արտահայտված՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից կորստի ճշտում՝ չկրած տոկոսային ծախսերի մասով	414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած կորուստների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»

726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» հաշիվը նախատեսված է ոչ գործառնական ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից ծախսերի, ինչպես նաև արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7261 «Որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից կորուստներ», 7263 «Վաճառքի համար մատչելի ոչ գործառնական ֆինանսական ակտիվների վերաչափումից կորուստներ», 7264 «Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից կորուստներ», 7265 «Ոչ գործառնական ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ֆինանսական գործիքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ

1. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների արտացոլում	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 231 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 517 «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»
2. Ֆինանսական ակտիվների արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստների արտացոլում	144 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 145 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր» 149 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկում (անհավաքելիություն)» 233 «Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 234 «Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 235 «Կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր» 236 «Երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 237 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքերի կարճաժամկետ մաս» 241 «Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկում (անհավաքելիություն)»

3. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթների վերագրումը ֆինանսական արդյունքներին	322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթներ և վնասներ» 323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթներ և վնասներ»
---	---

726 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից ծախսերի, արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 727 «Ֆինանսական ծախսեր»

727 «Ֆինանսական ծախսեր» հաշիվը նախատեսված է ֆինանսական ծախսերի (ստացված վարկերի և փոխառությունների, ֆինանսական վարձակալության հետ կապված չկապիտալացվող ծախսերի, պահուստների գծով գեղչի հետպտույտի հետ կապված տոկոսային ծախսի, որպես պարտավորություն դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինների և տոկոսների) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ֆինանսական ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

727 «Ֆինանսական ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7271 «Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով», 7272 «Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր», 7274 «Պահուստների գեղչման ազդեցության ճշգրտման հետևանքով առաջացած տոկոսային ծախսեր», 7275 «Որպես պարտավորություն դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ և տոկոսներ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով»:

Ֆինանսական ծախսերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ վարկերի, փոխառությունների և վարձակալությունների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

727 «Ֆինանսական ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսերի, ինչպես նաև որպես պարտավորություն դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ և տոկոսների ամորտիզացիա՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	414 «Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 516 «Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»
2. Պահուստների գեղչման ազդեցության ճշգրտման (գեղչի հետպտույտի) հետևանքով առաջացած տոկոսային ծախսերի արտացոլում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ» 543 «Ընթացիկ պահուստներ»

3. Ստացված վարկերի, փոխառությունների, ֆինանսական վարձակալության գծով պարտավորության ժամկետից շուտ մարման դեպքում հաշվեկշռային արժեքից ավել վճարված գումարների արտացոլում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
--	---

727 «Ֆինանսական ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր»

728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» հաշիվը նախատեսված է անհատույց տրված ակտիվների գծով ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է անհատույց տրված ակտիվների հաշվեկշռային արժեքը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ անհատույց տրված ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Անհատույց տրված ակտիվների հաշվեկշռային արժեքի արտացոլում	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 211 «Նյութեր» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» և այլ ակտիվները հաշվառող համապատասխան հաշիվներ
2. Ակտիվների անհատույց տրամադրումից առաջացած ավելացված արժեքի հարկ	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»

728 «Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անհատույց տրված ակտիվների գծով ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 729 «Այլ ծախսեր»

729 «Այլ ծախսեր» հաշիվը նախատեսված է այլ ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է այլ ծախսերի գումարը, իսկ կրեդիտում՝ դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

729 «Այլ ծախսեր» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածության ծախսերի արտացոլում	123 «Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն»
2. Ակտիվներին վերաբերող շնորհների վերադարձում՝ չմարված (դեռևս եկամուտ չձևաչված) մնացորդը գերազանցող գումարով	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
3. Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ժամանակ դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցող մասով կատարվող վճարում	251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ»
4. Վարկերի կամ փոխառությունների ժամկետից շուտ մարման (պարտատոմսերի հետ գնման) կամ վճարի դիմաց դրանց երրորդ անձի փոխանցելու դեպքում՝ փաստացի վճարված գումարի և հաշվեկշռային արժեքի դրական տարբերություն	411 «Երկարաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ» 412 «Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ»

729 «Այլ ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում այլ ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 73 «ԸՆԴՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԽՍԵՐ»

73 «Ընդհատված գործունեությունից ծախսեր» խումբն իր մեջ ներառում է 731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» ընդհատված գործունեությունից», 732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր», 733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները:

Ընդհատված գործունեության հասկացությունը, դրան վերաբերող ծախսերի ձևաչման, չափման և ներկայացման գծով առանձնահատկությունները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

Հաշիվ 731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» ընդհատված գործունեությունից

731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք» ընդհատված

գործունեությունից» հաշիվը նախատեսված է ընդհատված դասակարգված գործառնության վաճառքի ինքնարժեքի (ներառյալ՝ մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների, վաճառված արտադրանքի, ապրանքների ինքնարժեքի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այստեղ չի ներառվում ընդհատված գործունեությունը կազմող՝ օտարված այլ ակտիվների (բացի արտադրանքից, ապրանքներից) ինքնարժեքը (հաշվեկշռային արժեքը):

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում է ընդհատված գործունեության՝ իրացված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ինքնարժեքը, իսկ կրեդիտում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընդհատված գործունեության տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ընդհատված գործունեության իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի արտացոլում	215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ» 811 «Հիմնական արտադրություն» 812 «Օժանդակ արտադրություն»

731 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք՝ ընդհատված գործունեությունից» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեության իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր»

732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» հաշիվը նախատեսված է ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների (ներառյալ՝ հիմնական միջոցներ, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ, ոչ նյութական ակտիվներ, պաշարներ և այլն և բացառյալ՝ տվյալ գործունեության առարկա հանդիսացող արտադրանքի, ապրանքների) վաճառքից (օտարումից) և (կամ) վերաչափումից ծախսերի (օգուտների) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում է ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսերի (կորստի) գումարը, իսկ կրեդիտում՝ օտարված օտարման խմբի պարտավորությունների փոխանցումը, ինչպես նաև օտարումից և (կամ) վերաչափումից ծախսերի (կորստի) դուրս գրումը շահույթին կամ վնասին:

732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7321 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից ծախսեր», 7322 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի «իրական արժեք հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից կորուստներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ընդհատված գործունեության և այդ գործունեությունը կազմող ակտիվների և պարտավորությունների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Ընդհատված գործունեությունը կազմող օտարված (կամ հրաժարված) ակտիվների կամ օտարման խմբերի հաշվեկշռային արժեք	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 116 «Կենսաբանական ակտիվներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք» 131 «Ոչ նյութական ակտիվներ» 211 «Նյութեր» 212 «Մպատվող կենսաբանական ակտիվներ» 214 «Անավարտ արտադրություն» 215 «Արտադրանք» 216 «Ապրանքներ» 263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»
2. Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի «իրական արժեք հասած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից (արժեզրկումից) կորուստներ	263 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ»

732 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ընդհատված գործունեությունը կազմող օտարված օտարման խմբի պարտավորությունների փոխանցում	545 «Որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբերի պարտավորություններ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսերի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 733 «Շահութահարկ ընդհատված գործունեության»

733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշիվը նախատեսված է ընդհատված գործունեությանը վերաբերող շահութահարկի (ընթացիկ և հետաձգված հարկերի) գծով ծախսի և (կամ) եկամտի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, դերետում արտացոլվում են ընդհատված գործունեությանը վերաբերող շահութահարկի գծով ծախսը և շահութահարկի գծով զուտ եկամտի դուրս գրումը շահույթին կամ վնասին, իսկ կրեդիտում՝ ընդհատված գործունեությանը վերաբերող շահութահարկի գծով եկամուտը և շահութահարկի գծով զուտ

ծախսի դուրս գրումը շահույթին կամ վնասին:

733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7331 «Ընդհատված գործունեության շահույթի կամ վնասի գծով շահութահարկ», 7332 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից կամ վերաչափումից օգուտի կամ կորստի գծով շահութահարկ»:

733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շահութահարկի գծով ծախսի արտացոլում՝	
ա) ընթացիկ հարկի մասով՝	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
բ) հետաձգված հարկի մասով՝	
- երբ մարվում է հետաձգված հարկային ակտիվը	151 «Հետաձգված հարկային ակտիվներ»
- երբ առաջանում է հետաձգված հարկային պարտավորություն	422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեությանը վերաբերող շահութահարկի գծով զուտ եկամտի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

733 «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Շահութահարկի գծով ծախսի արտացոլում՝	
ա) ընթացիկ հարկի մասով՝	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
բ) հետաձգված հարկի մասով՝	
- երբ առաջանում է հետաձգված հարկային ակտիվ	151 «Հետաձգված հարկային ակտիվներ»
- երբ մարվում է հետաձգված հարկային պարտավորությունը	422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդհատված գործունեությանը վերաբերող շահութահարկի գծով զուտ ծախսի դուրս գրումը շահույթին կամ վնասին	

ԽՈՒՄԲ 74 «ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ. ԿՈՐՈՒՍՏՆԵՐ»

74 «Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ», 743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ», 744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»:

Վերադասակարգման ճշգրտումները նախապես՝ ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից

շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարներն են: Վերադասակարգման ճշգրտումների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում, «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվ 742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»

742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների (բացի հեջավորման փոխհարաբերության մաս կազմողներից) իրական արժեքով վերաչափումից՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կորուստներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում է ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստները, իսկ կրեդիտում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ տվյալ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ	322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

742 «Վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ»

743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջի ժամանակ որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կորուստներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների հաշվապահական

հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես՝ ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում, մասնավորապես 97-100-րդ պարագրաֆներում:

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում է ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստները, իսկ կրեդիտում՝ դրա դուրս գրումը շահույթին կամ վնասին:

743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ այն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված գործարքն է ազդում շահույթի կամ վնասի վրա (օրինակ՝ երբ տեղի է ունենում կանխատեսված վաճառք) կամ, երբ հեջավորված կանխատեսված գործարքի արդյունքում ճանաչված ակտիվը կամ պարտավորությունն է ազդում շահույթի կամ վնասի վրա, կամ էլ, երբ այլևս չի ակնկալվում, որ ճանաչված կորուստը հետագա ժամանակաշրջաններում կարող է փոխհատուցվել	323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

743 «Վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

Հաշիվ 744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ»

744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից՝ նախապես (ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված կորուստներից ընթացիկ ժամանակաշրջանում շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները ներառում են արտերկրյա ստորաբաժանումների (մասնաճյուղերի) ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից կորուստները և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերություններից կորուստները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՄ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում են ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից

շահույթին կամ վնասին վերադասակարգված՝ արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստները, իսկ կրեդիտում՝ դրանց դուրս գրումը շահույթին կամ վնասին:

744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստների վերադասակարգումը սեփական կապիտալից շահույթին կամ վնասին (որպես վերադասակարգման ճշգրտում)՝ արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ	324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ»

744 «Վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստների գծով վերադասակարգման ճշգրտումների դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 75 «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ԵԿԱՄՈՒՏ)»

75 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» խումբն իր մեջ ներառում է 751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» առաջին կարգի (սինթետիկ) հաշիվը:

Հաշիվ 751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)»

751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» հաշիվը նախատեսված է շահութահարկի գծով ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահութահարկի գծով ծախսերի հաշվարկման մոտեցումները նկարագրված են «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ում:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է ընթացիկ և հետաձգված հարկի գծով ծախսը, իսկ կրեդիտում՝ հետաձգված հարկի գծով եկամուտը, դուրս գրումը շահույթին կամ վնասին:

751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7511 «Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)», 7512 «Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)»

751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Շահութահարկի գծով ծախսի արտացոլում՝	
ա) ընթացիկ հարկի մասով	524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»
բ) հետաձգված հարկի մասով՝	
- երբ մարվում է հետաձգված հարկային ակտիվը	151 «Հետաձգված հարկային ակտիվներ»
- երբ առաջանում է հետաձգված հարկային պարտավորություն	422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»

զ) երբ հարկի վճարման ժամկետը հետաձգվել է մինչև իրացման դիմաց վճարի ստացման ժամանակաշրջանը	542 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում շահութահարկի գծով փոխհատուցման մնացորդի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

751 «Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հետաձգված հարկի մասով շահութահարկի գծով փոխհատուցման արտացոլում	
ա) երբ առաջանում է հետաձգված հարկային ակտիվ	151 «Հետաձգված հարկային ակտիվներ»
բ) երբ մարվում է հետաձգված հարկային պարտավորությունը	422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում շահութահարկի գծով ծախսի մնացորդի դուրս գրումը շահույթին կամ վնասին	331 «Շահույթ կամ վնաս»

ԽՈՒՄԲ 77 «ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴԱՆԱԶՎՈՂ ԾԱԽՍԵՐ»

77 «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսեր» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ», 772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ», 773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ», 774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ», 775 «Ակտուարային վնասներ»:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են, մասնավորապես, «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում, «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում, «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվ 771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ»

771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից չիրացված կորուստների (այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազման, ինչպես նաև արժեզրկումից կորստի հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես՝ այն, թե կորստի ո՞ր մասն է ենթակա ճանաչման շահույթով կամ վնասում, և ո՞ր մասը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում) նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից (զուտ կամ համախառն հաշվեկշռային) արժեքի նվազումը (նախորդ վերագնահատումներից արժեքի աճը չգերազանցող չափով), արժեզրկումից կորուստը, իսկ կրեդիտում՝ վերագնահատման հետևանքով կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) նվազումը, զուտ նվազման փոխանցումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 7711 «Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ», 7712 «Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ», 7713 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստներ», 7714 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստներ»

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստների վերլուծական հաշվառումը

տարվում է ըստ վերաչափվող ակտիվների խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը
դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքում հաշվեկշռային արժեքի (զուտ կամ համախառն) նվազման արտացոլում (երբ այդ նվազումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում)	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 115 «Հողամասեր» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» 131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկումից կորստի արտացոլում (երբ այդ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում)	124 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկում» 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում»
3. Վերագնահատման մոդելով չափվող հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև տեղանքի վերականգնման և նմանատիպ այլ ծախսումների գծով ճանաչված ոչ ընթացիկ պահուստի ավելացում (գնահատականների փոփոխության արդյունքում), որը ճանաչվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում	425 «Ոչ ընթացիկ պահուստներ»

771 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ» հաշիվը
կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ

1. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազման դեպքում կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) գումարի նվազեցում	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի նվազման կամ արժեզրկման հետևանքով հետաձգված հարկային պարտավորության նվազում կամ հետաձգված հարկային ակտիվի առաջացում (ավելացում), երբ հետաձգված հարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
3. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կամ արժեզրկումից զուտ կորստի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	321 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

Հաշիվ 772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»

772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից կորուստների (բացի հեջի հաշվառման նպատակներով իրական արժեքի հեջի դեպքում որպես հեջավորված հոդված նախատեսված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի՝ հեջավորված ռիսկին վերագրելի կորստից) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի նվազումից կորուստները, իսկ կրեդիտում՝ այդ կորուստների հարկային հետևանքը և զուտ կորուստների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի նվազումից կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից (իրական արժեքի նվազումից) կորուստների արտացոլում	143 «Իրական արժեքով չափվող ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»

772 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
---	-----------------

1. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից արժեքի նվազման հետևանքով հետաձգված հարկային պարտավորության նվազում կամ հետաձգված հարկային ակտիվի առաջացում (ավելացում)	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից գուտ կորստի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	322 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

Հաշիվ 773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ»

773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջում որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների՝ որպես արդյունավետ հեջ որոշված մասի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում:

Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստները (որպես արդյունավետ հեջ որոշված մասի գծով), իսկ կրեդիտում՝ այդ կորուստների հարկային հետևանքը և գուտ կորուստների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների արտացոլում	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 239 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» 518 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

773 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված կորուստների հարկային հետևանքների արտացոլում (հետաձգված հարկային ակտիվի առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային պարտավորության նվազում)	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից գուտ կորստի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	323 «Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտներ և կորուստներ»

Հաշիվ 774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ»

774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը նախատեսված է արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները ներառում են արտերկրյա ստորաբաժանումների (մասնաճյուղերի) ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից կորուստները և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերություններից կորուստները (այնքանով, որքանով հեջը գնահատվում է որպես արդյունավետ): Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում են արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները, իսկ կրեդիտում՝ այդ կորուստների հարկային հետևանքը և գուտ կորուստների տեղափոխումը սեփական կապիտալի համապատասխան հաշվին:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպության կողմից հաստատված ուղղությունների:

774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ակտիվների և պարտավորությունների (դրամային և ոչ դրամային) փակման (տարեվերջյան) փոխարժեքով վերահաշվարկումից ակտիվների նվազում կամ պարտավորությունների ավելացում	Արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ակտիվները և պարտավորությունները հաշվառող համապատասխան հաշիվներ
2. Արտերկրյա ստորաբաժանումում (մասնաճյուղում) գուտ ներդրման արդյունավետ հեջում հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից (փոխարժեքային) կորուստների արտացոլում	148 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ» 415 «Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ»

774 «Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից կորուստներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստների հարկային հետևանքների արտացոլում (հետաձգված հարկային ակտիվի առաջացում կամ ավելացում կամ հետաձգված հարկային պարտավորության նվազում)	151 «Հետաձգված հարկային ակտիվներ» 422 «Հետաձգված հարկային պարտավորություններ»
2. Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային գուտ կորուստի (հաշվի առած հարկային հետևանքները) տեղափոխումը սեփական կապիտալ	324 «Փոխարժեքային տարբերություններ՝ կապված արտերկրյա ստորաբաժանումների հետ

Հաշիվ 775 «Ակտուարային վնասներ»

775 «Ակտուարային վնասներ» հաշիվը նախատեսված է հետաշխատանքային սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով կամ պլանների ակտիվների գծով առաջացած այն ակտուարային վնասների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՄ 19-ին և կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համաձայն ճանաչվում են առաջացման ժամանակաշրջանում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Հաշիվը ակտիվային է, դեբետում արտացոլվում են առաջացած ակտուարային օգուտները, իսկ կրեդիտում՝ այդ վնասների տեղափոխումը չբաշխված շահույթին:

Ակտուարային վնասների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պլանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

775 «Ակտուարային վնասներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով ակտուարային օգուտների արտացոլում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը»
2. Պլանների ակտիվների գծով ակտուարային օգուտների արտացոլում	153 «Սահմանված հատուցումների պլանների ակտիվներ»

775 «Ակտուարային վնասներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ակտուարային վնասների փոխանցումը չբաշխված շահույթին	342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

ԴԱՍ 8 «ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ»

Այս դասի հաշիվներն ակտիվային են և նախատեսված են արտադրական, ոչ ընթացիկ ակտիվների կառուցման (ստեղծման), դրանց վրա կապիտալացվող հետագա ծախսումների ինչպես նաև կառավարչական հաշվառման այլ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 8-րդ՝ «Կառավարչական հաշվառման հաշիվներ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 81 «Արտադրական ծախսումներ» և 82 «Ոչ ընթացիկ ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»:

Այս դասի հաշիվները հաշվետու ժամանակաշրջանի վերջում փակվում են հաշվեկշռային հաշիվներով և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդ չեն ունենում:

ԽՈՒՄԲ 81 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ»

81 «Արտադրական ծախսումներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 811 «Հիմնական արտադրություն», 812 «Օժանդակ արտադրություն», 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» և 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»:

Հաշիվ 811 «Հիմնական արտադրություն»

811 «Հիմնական արտադրություն» հաշիվը նախատեսված է արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վրա կատարված արտադրական ծախսումների վերաբերյալ

տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբում անավարտ արտադրության մնացորդը, հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ուղղակի ծախսումները, ինչպես նաև անուղղակի արտադրական ծախսումները, օժանդակ արտադրության ծախսումները (հիմնական արտադրությանը վերաբերող մասով), իսկ կրեդիտում՝ թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) փաստացի ինքնարժեքը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջում տեղափոխվող անավարտ արտադրության ինքնարժեքը:

811 «Հիմնական արտադրություն» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8111 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8112 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8113 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8114 «Ուղղակի արտադրական այլ ծախսումներ», 8115 «Օժանդակ արտադրության ծախսումներ», 8116 «Անուղղակի արտադրական ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) տեսակների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

811 «Հիմնական արտադրություն» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հաշվեկշռային հաշվից անավարտ արտադրության մնացորդի տեղափոխում	214 «Անավարտ արտադրություն»
2. Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

դ) ուղղակի արտադրական այլ ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 155 «Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա» 228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
ե) օժանդակ արտադրության ծախսումներ	812 «Օժանդակ արտադրություն»
զ) անուղղակի արտադրական ծախսումներ	813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»

811 «Հիմնական արտադրություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Թողարկված արտադրանքի մուտքագրում՝ ինքնարժեքով	215 «Արտադրանք»
2. Իրացված աշխատանքների, ծառայությունների դուրս գրում՝ ինքնարժեքով	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
3. Ծնածից ստացված կենդանիների, ինչպես նաև մատղաշ կենդանիների քաշաճի մուտքագրում՝ ինքնարժեքով	212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
4. Հիմնական արտադրությունում խոտանված (չվերականգնվող) արտադրանքի դուրս գրում՝ ինքնարժեքով	714 «Գործառնական այլ ծախսեր»
5. Կազմակերպությունում պատրաստված նյութերի, արագամաշ առարկաների մուտքագրում՝ ինքնարժեքով	211 «Նյութեր»
6. Արտադրական թափոնների մուտքագրում՝ հնարավոր օգտագործման գներով	211 «Նյութեր»
7. Արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող մասի դուրս գրում	714 «Գործառնական այլ ծախսեր»

8. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Մահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
9. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ արտադրության մնացորդի տեղափոխումը հաշվեկշռային հաշվին	214 «Անավարտ արտադրություն»

Հաշիվ 812 «Օժանդակ արտադրություն»

812 «Օժանդակ արտադրություն» հաշիվը նախատեսված է օժանդակ արտադրության ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբում անավարտ օժանդակ արտադրության մնացորդը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում օժանդակ արտադրության ծախսումները, իսկ կրեդիտում՝ օժանդակ արտադրությունում թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) փաստացի ինքնարժեքը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջում տեղափոխվող անավարտ օժանդակ արտադրության ինքնարժեքը:

812 «Օժանդակ արտադրություն» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8121 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8122 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8123 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8124 «Օժանդակ արտադրության այլ ուղղակի ծախսումներ», 8125 «Անուղղակի արտադրական ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) տեսակների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

812 «Օժանդակ արտադրություն» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հաշվեկշռային հաշվից անավարտ արտադրության մնացորդի տեղափոխում	214 «Անավարտ արտադրություն»
2. Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր» 212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

դ) ուղղակի արտադրական այլ ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 155 «Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
ե) անուղղակի արտադրական ծախսումներ	813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»

812 «Օժանդակ արտադրություն» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Թողարկված արտադրանքի մուտքագրում՝ ինքնարժեքով	215 «Արտադրանք»
2. Իրացված աշխատանքների, ծառայությունների դուրս գրում՝ ինքնարժեքով	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
3. Ծնածից ստացված կենդանիների, ինչպես նաև մատղաշ կենդանիների քաշաճի մուտքագրում՝ ինքնարժեքով	212 «Սպառվող կենսաբանական ակտիվներ»
4. Օժանդակ արտադրությունում խոտանված (չվերականգնվող) արտադրանքի դուրս գրում՝ ինքնարժեքով	714 «Գործառնական այլ ծախսեր»
5. Օժանդակ արտադրությունում պատրաստված նյութերի մուտքագրում՝ ինքնարժեքով	211 «Նյութեր»

6. Օժանդակ արտադրության արտադրանքի օգտագործումը հիմնական արտադրությունում, ինչպես նաև ոչ ընթացիկ ակտիվների կառուցման (ստեղծման) նպատակով	811 «Հիմնական արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» 821 «Հիմնական միջոցների կառուցման (ստեղծման) ծախսումներ» 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»
7. Օժանդակ արտադրության արտադրական թափոնների մուտքագրում՝ հնարավոր օգտագործման գներով	211 «Նյութեր»
8. Օժանդակ արտադրության արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող մասի դուրս գրում	714 «Գործառնական այլ ծախսեր»
9. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
10. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ արտադրության մնացորդի տեղափոխումը հաշվեկշռային հաշվին	214 «Անավարտ արտադրություն»

Հաշիվ 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»

813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշիվը նախատեսված է հիմնական և օժանդակ արտադրության գծով անուղղակի ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված անուղղակի ծախսումները, իսկ կրեդիտում՝ այդ ծախսումների վերագրումը հիմնական և (կամ) օժանդակ արտադրությանը:

813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8131 «Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ», 8132 «Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովության վճարներ», 8133 «Արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածություն», 8134 «Արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսումներ», 8135 «Արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա», 8136 «Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ», 8137 «Արտադրական անձնակազմի գործուղման ծախսումներ», 8138 «Անուղղակի արտադրական այլ ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ծախսումների հոդվածների, ստորաբաժանումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների

հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Անուղղակի արտադրական ծախսումների արտացոլում՝	
ա) նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովության վճարներ	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»
ե) արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսումներ	211 «Նյութեր» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
զ) անուղղակի արտադրական այլ ծախսումներ	155 «Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա» 228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Անուղղակի արտադրական ծախսումների վերագրում՝	
ա) հիմնական արտադրությանը	811 «Հիմնական արտադրություն»
բ) օժանդակ արտադրությանը	812 «Օժանդակ արտադրություն»
գ) խոտանի շտկմանը	814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»

2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Անուդղակի արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող մասի դուրս գրում	714 «Գործառնական այլ ծախսեր»

Հաշիվ 814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ»

814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» հաշիվը նախատեսված է առաքված, իրացված արտադրանքի, աշխատանքների խոտանի և դրա շտկման վրա կատարված ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, մասնավորապես, դերեւում արտացոլվում է խոտանի ինքնարժեքը և խոտանի շտկման վրա կատարված ծախսումները, իսկ կրեդիտում՝ շտկված արտադրանքի մուտքագրումը (հիմնական և օժանդակ արտադրությունում տվյալ արտադրանքի համար ձևավորված արտադրական ինքնարժեքով) և խոտանի շտկման ծախսումների՝ արտադրական ինքնարժեքի նորմալ մակարդակի գերազանցող մասի ծախս ճանաչումը:

814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվներ՝ 8141 «Խոտան արտադրանք», 8142 «Խոտանի ուղղման նյութական ծախսումներ», 8143 «Խոտանի ուղղման աշխատանքային ծախսումներ», 8144 «Խոտանի ուղղման գծով սցիալական ապահովության վճարներ», 8145 «Խոտանի ուղղման այլ ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ խոտանի տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Խոտան արտադրանքի հետ վերադարձում՝	
- առաքված	215 «Արտադրանք»
- իրացված	711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»

2. Խոտանի շտկման վրա կատարված ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 211 «Նյութեր» 228 «Դերիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն» 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»
--	---

814 «Խոտան և դրա շտկման ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Շտկված արտադրանքի մուտքագրում՝ հիմնական և օժանդակ արտադրությունում տվյալ արտադրանքի համար ձևավորված արտադրական ինքնարժեքով	215 «Արտադրանք»
2. Խոտանի շտկման ծախսումների՝ արտադրական ինքնարժեքի նորմալ մակարդակը գերազանցող մասի ծախս ճանաչում	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»

ԽՈՒՄԲ 82 «ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՍՏԵՂԾՄԱՆ) ԾԱԽՍՈՒՄՆԵՐ»

82 «Ոչ ընթացիկ ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ», 822 «Մարքավորումների տեղակայման ծախսումներ», 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ», 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ», 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» և 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»:

Հաշիվ 821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ»

821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» հաշիվը նախատեսված է ոչ ընթացիկ նյութական ակտիվների (հիմնական միջոցների, ներդրումաին գույքի) կառուցման (ստեղծման) վրա կատարվող ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) վրա կատարված ծախսումները, իսկ կրեդիտում՝ ավարտուն հիմնական միջոցների և ներդրումային գույքի ինքնարժեքը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջում տեղափոխվող անավարտ ոչ

ընթացիկ նյութական ակտիվների ինքնարժեքը:

821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8211 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8212 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8213 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8214 «Այլ ուղղակի ծախսումներ», 8215 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կառուցվող հիմնական միջոցների և ներդրումային գույքի օբյեկտների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» հաշիվը դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման վրա կատարված ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 425 «Ոչ ընթացիկ պահուստներ» 426 «Մահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»

ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
-------------------------	---

821 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ավարտում (օգտագործման համար մատչելի) հիմնական միջոցների և ներդրումային գույքի մուտքագրում՝ ինքնարժեքով	111 «Մաշվող հիմնական միջոցներ»
2. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ծախսումների սկզբնական արժեքը չավելացնող մասի՝ ժամանակաշրջանի ծախս ճանաչումը (նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների՝ նորմալ մակարդակից բարձր ծախսումները)	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
4. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների մնացորդի տեղափոխումը հաշվեկշռային հաշիվներին	118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք»

Հաշիվ 822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ»

822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» հաշիվը նախատեսված է սարքավորումների տեղակայման ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում կատարված սարքավորումների տեղակայման ծախսումները, իսկ կրեդիտում՝ այդ ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ:

822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8221 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8222 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8223 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8224 «Այլ ուղղակի ծախսումներ», 8225 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ տեղակայման ենթակա սարքավորումների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Սարքավորումների տեղակայման ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»

ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկղ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
-------------------------	---

822 «Սարքավորումների տեղակայման ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
2. Սարքավորումների տեղակայման ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ	118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ»

Հաշիվ 823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»

823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների և ներդրումային գույքի վրա կապիտալացվող հետագա ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում կատարված հիմնական միջոցների և ներդրումային գույքի վրա կապիտալացվող հետագա ծախսումները, իսկ կրեդիտում՝ այդ ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ, ժամանակաշրջանի ծախս ճանաչումը:

823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8231 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8232 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8233 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8234 «Այլ ուղղակի ծախսումներ», 8235 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնական միջոցների (ներդրումային գույքի) օբյեկտների և

կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը
դերետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Հիմնական միջոցների և ներդրումային գույքի վրա կապիտալացվող ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»

ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Զկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 426 «Մահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Զկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գումարների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»
-------------------------	--

823 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հիմնական միջոցների և ներդրումային գույքի վրա չկապիտալացվող ծախսումների՝ ժամանակաշրջանի ծախս ճանաչումը	714 «Գործառնական այլ ծախսումներ»
2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Մահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Հիմնական միջոցների և ներդրումային գույքի վրա կապիտալացվող ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ	111 «Մաշվող հիմնական միջոցներ» 118 «Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» 122 «Ներդրումային գույք»

Հաշիվ 824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ»

824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» հաշիվը նախատեսված է ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվների

ներստեղծման վրա կատարված ծախսումները, իսկ կրեդիտում՝ ավարտուն ոչ նյութական ակտիվների ինքնարժեքը, ծախս ճանաչված ոչ նյութական ակտիվների ներստեղծման (հետագոտության և մշակման) ծախսումները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջում տեղափոխվող մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների ինքնարժեքը:

824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8241 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8242 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8243 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8244 «Այլ ուղղակի ծախսումներ», 8245 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ նյութական ակտիվների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումների արտացոլում՝	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»

ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 132 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գումարների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
-------------------------	--

824 «Ոչ նյութական ակտիվների ներստեղծման ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ավարտում ոչ նյութական ակտիվների մուտքագրում՝ ինքնարժեքով	131 «Ոչ նյութական ակտիվներ»
2. Հետագոտության ծախսումների դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	714 «Գործառնական այլ ծախսեր»
3. Մշակման չկապիտալացվող ծախսումների դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	714 «Գործառնական այլ ծախսեր»
4. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
5. Անավարտ ոչ նյութական ակտիվների տեղափոխումը հաշվեկշռային հաշվին	133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ»

Հաշիվ 825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ»

825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը նախատեսված է ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում կատարված ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումները, իսկ կրեդիտում՝ այդ ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ, ժամանակաշրջանի ծախս ճանաչումը:

825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8251 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8252 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8253 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8254 «Այլ ուղղակի ծախսումներ», 8255 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ոչ նյութական ակտիվների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող ծախսումների արտացոլում	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ»
ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

825 «Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Ոչ նյութական ակտիվների վրա չկապիտալացվող ծախսումների դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	714 «Գործառնական այլ ծախսեր»
2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշվին	131 «Ոչ նյութական ակտիվներ» 133 «Անավարտ ոչ նյութական ակտիվներ»

Հաշիվ 826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ»

826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ» հաշիվը նախատեսված է այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման վրա կատարվող ծախսումների, ինչպես նաև այլ ոչ ընթացիկ ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում այլ ոչ ընթացիկ ակտիվների վրա կատարված հետագա ծախսումները (օրինակ՝ լեռնանախապատրաստական աշխատանքների հետ կապված ծախսումները, հողի բարելավման ծախսումները, վարձակալված կամ անհատույց օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները), իսկ կրեդիտում՝ դրանց տեղափոխումը հաշվեկշռային հաշիվ և ժամանակաշրջանի ծախս ճանաչումը:

826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 8261 «Ուղղակի նյութական ծախսումներ», 8262 «Ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով», 8263 «Ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով», 8264 «Այլ ուղղակի ծախսումներ», 8265 «Անուղղակի ծախսումներ»:

Այս հաշվի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
Այլ ոչ ընթացիկ ակտիվների վրա կատարվող ծախսումների արտացոլում՝	
ա) ուղղակի նյութական ծախսումներ	211 «Նյութեր»
բ) ուղղակի ծախսումներ աշխատանքի վճարման գծով	527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»
գ) ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով	525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»

դ) այլ ուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 414 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 425 «Ոչ ընթացիկ պահուստներ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով» 531 «Այլ ընթացիկ պարտավորություններ» 812 «Օժանդակ արտադրություն»
ե) անուղղակի ծախսումներ	112 «Հիմնական միջոցների մաշվածություն» 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն» 211 «Նյութեր» 228 «Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով» 251 «Դրամարկդ» 252 «Հաշվարկային հաշիվ» 253 «Արտարժույթային հաշիվ» 426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ» 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով» 525 «Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով» 527 «Պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» 812 «Օժանդակ արտադրություն»

826 «Այլ ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման ծախսումներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների ստեղծման ծախսումների, ինչպես նաև դրանց վրա կապիտալացվող հետագա ծախսումների տեղափոխումը հաշվեկշռային հաշվին	154 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով»

2. Հետաշխատանքային հատուցումների պլանների գծով ծախսերի ճշգրտում	426 «Սահմանված հատուցումների պլանների գծով պարտականության ներկա արժեքը» 427 «Դեռևս չճանաչված ակտուարային օգուտ (վնաս)» 428 «Դեռևս չճանաչված անցյալ ծառայության արժեքի աճ»
3. Այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների ստեղծման ծախսումների, ինչպես նաև դրանց վրա կատարվող հետագա ծախսումների չկապիտալացվող մասի դուրս գրումը որպես ժամանակաշրջանի ծախս	714 «Գործառնական այլ ծախսեր»

ԴԱՍ 9 «ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ»

Այս դասի հաշիվները նախատեսված են կազմակերպությանը չպատկանող, բայց ժամանակավորապես նրա տրամադրության, օգտագործման տակ գտնվող (գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ, պատասխանատու պահպանման, վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքներ, հավատարմագրային պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ, կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ և այլն) ակտիվների, պայմանական ակտիվների և պարտավորությունների, այլ միջոցների և պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: 9-րդ՝ «Արտահաշվեկշռային հաշիվներ» դասն իր մեջ ներառում է հետևյալ խմբերը՝ 91 «Կազմակերպությանը չպատկանող ակտիվներ», 92 «Բորքերային և հավատարմագրային կառավարման գործունեության արտահաշվեկշռային հաշիվներ», 93 «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ» և 94 «Այլ միջոցներ և պարտավորություններ»:

Այս դասի հաշիվների հաշվապահական հաշվառումը տարվում է պարզ (միակի գրանցման) համակարգով, բացառությամբ 92 խմբի, որտեղ հաշվառումը տարվում է կրկնակի գրանցման համակարգով:

ԽՈՒՄԲ 91 «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՉՊԱՏԿԱՆՈՂ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

91 «Կազմակերպությանը չպատկանող ակտիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ», 912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ», 913 «Վերամշակման ընդունված նյութեր», 914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ», 915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ» և 916 «Որպես գրավ պահվող ակտիվներ»:

Հաշիվ 911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ»

911 «Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ» հաշիվը նախատեսված է վարձակալի կողմից գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցները հաշվառվում են վարձակալական պայմանագրերում նշված արժեքով:

Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնական միջոցների խմբերի, վարձատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ»

912 «Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Այս հաշվում արտացոլվում են՝

- ի պահ ընդունված ապրանքանյութական արժեքները,
- մատակարարներից ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնց գծով կազմակերպությունը հրաժարվել է

դրանց ստացումից և վճարումից (պայմանագրի պայմաններին անհամապատասխանության պատճառով),

-մատակարարներից ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնք պայմանագրով չեն պատվիրված և նախատեսված,

-մատակարարներից չվճարված ապրանքանյութական արժեքների ստացումը, որոնց օգտագործումը հետաձգված է մինչև դրանց դիմաց վճարման կատարումը:

Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքները հաշվառվում են այն գներով, որոնք նախատեսված են ապրանքների ստացման կամ վճարման փաստաթղթերով, պայմանագրերով, ընդունման-հանձնման ակտերով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հաշվարկային գներով:

Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպությունների, ապրանքանյութական արժեքների տեսակների, պահպանման վայրերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 913 «Վերամշակման ընդունված նյութեր»

913 «Վերամշակման ընդունված նյութեր» հաշիվը նախատեսված է պատվիրատուի՝ վերամշակման ընդունված նյութերի, որոնք չեն վճարվել մթերող կազմակերպության կողմից, առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Նյութերը հաշվառվում է պայմանագրերով նախատեսված կամ հաշվարկային գներով:

Նյութերի վերամշակման կամ լրացուցիչ մշակման ծախսերը արտացոլվում են ծախսերի (ծախսումների) հաշվառման հաշիվներում:

Վերամշակման ընդունված նյութերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պատվիրատուների, նյութերի տեսակների, դրանց գտնվելու վայրի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ»

914 «Տեղակայման ընդունված սարքավորումներ» հաշիվը նախատեսված է կապալառու կազմակերպությունների կողմից տեղակայման համար պատվիրատուներից ստացված սարքավորումների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այն հաշվառվում է սարքավորումների ստացման փաստաթղթերում նշված գներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հաշվարկային գներով:

Տեղակայման ընդունված սարքավորումների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց տեսակների, պատվիրատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ»

915 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ» հաշիվը նախատեսված է կազմակերպությունների կողմից կոմիսիայի (հանձնուղի) և կոնսիգնացիայի (հանձնարարության) պայմանագրերով ընդունված ապրանքների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ապրանքները հաշվառվում են վաճառքի գներով:

Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ կազմակերպությունների, ապրանքների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 916 «Որպես գրավ պահվող ակտիվներ»

916 «Որպես գրավ պահվող ակտիվներ» հաշիվը նախատեսված է որպես գրավ պահվող ակտիվների առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Որպես գրավ պահվող ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ ակտիվների տեսակների, գրավատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

92 «Բրոքերային և հավատարմագրային կառավարման գործունեության արտահաշվեկշռային հաշիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ», 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ», 923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ», 924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ», 925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» և 926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»:

Հաշիվ 921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարիչների, բրոքերային գրասենյակների, ֆոնդային բորսաների կողմից հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների (դրամական միջոցներ, արժեթղթեր) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցները, վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9211 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող դրամական միջոցներ», 9212 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր»:

Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), միջոցների տեսակների, արժեթղթերը թողարկողների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների արտացոլում	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ստացված միջոցների վերադասակարգում	922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի միջոցներից տրամադրված փոխառությունների մարում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրի համար փոխառությունների ստացում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Հիմնադրի արժեթղթերի վաճառքից ստացված դրամական միջոցների արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

7. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ընդունված միջոցների վերաչափումից արժեքի աճի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
--	--

921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների հետ վերադարձ	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների վերադասակարգում	922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրի համար ստացված փոխառությունների մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Վաճառված՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների արժեքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
7. Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված միջոցների վերաչափումից արժեքի նվազման արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշիվը նախատեսված է կոմիսիայի (հանձնուղղի) և կոնսիգնացիայի (հանձնարարության) պայմանագրերի համաձայն ստացված դրամական միջոցների և արժեթղթերի, ինչպես նաև դրանց ներդրումից և իրացումից ստացված դրամական միջոցների ու արժեթղթերի և առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ստացված միջոցները, իսկ կրեդիտում՝ դրանց հետ վերադարձը, վաճառքը:

922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9221 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն արժեթղթերում ներդրումներ կատարելու համար դրամական միջոցներ», 9222 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված արժեթղթեր», 9223 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթեր», 9224 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված (ձեռք բերված) արժեթղթերի

Կոմիսիայի (հանձնուղղի) և կոնսիգնացիայի (հանձնարարության) պայմանագրերով ստացված միջոցների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հաճախորդների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների արտացոլում	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերադասակարգում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»
3. Հաճախորդի միջոցներից տրամադրված փոխառությունների մարում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
5. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդի համար փոխառությունների ստացում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Հաճախորդի արժեթղթերի վաճառքից ստացված դրամական միջոցների արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված միջոցներ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների հետ վերադարձ	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»
2. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների վերադասակարգում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»
3. Հաճախորդի միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
4. Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»

5. Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդի համար ստացված փոխառությունների մարում	926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»
6. Վաճառված՝ կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն հաճախորդից ստացված միջոցների արժեքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվային է, դեբետում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը:

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9231 «Դեբիտորական պարտքեր արժեթղթերի վաճառքների գծով», 9232 «Դեբիտորական պարտքեր հաշվեգրված տոկոսների գծով», 9233 «Դեբիտորական պարտքեր հայտարարված շահաբաժինների գծով», 9234 «Տրամադրված փոխառություններ»:

Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), դեբիտորների, փոխառուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Արժեթղթերի վաճառքի գծով դեբիտորական պարտքի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
2. Հիմնադրին (հաճախորդին) պատկանող արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսների և հայտարարված շահաբաժինների գծով դեբիտորական պարտքերի արտացոլում	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»
3. Հիմնադրի (հաճախորդի) միջոցներից տրամադրված փոխառությունների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիզնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
Հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած դերիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

Հաշիվ 924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պահվելի է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց հետ վերադարձը:

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9241 «Պարտավորություններ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ստացված միջոցների գծով», 9242 «Պարտավորություններ կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով»:

Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), նրանց կողմից ներդրված միջոցների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ

1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների հետ վերադարձ	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

Հաշիվ 925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք»

925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով հիմնադրի (հաճախորդի) եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվն ակտիվապասիվային է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով եկամուտները, վնասի դուրս գրումը, իսկ դեբետում՝ ծախսերը, շահույթի դուրս գրումը:

Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունքի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց առաջացման ուղղությունների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

925 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների վաճառքից եկամուտների արտացոլում	
ա) դրամական միջոցներով անմիջապես ստացման դեպքում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
բ) դեբիտորական պարտքի ձևավորմամբ	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
2. Հաշվեգրված տոկոսների, հայտարարված շահաբաժինների գծով եկամտի արտացոլում	923 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ»
3. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերաչափումից շահույթների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
4. Հիմնադրի (հաճախորդի) վնասների դուրս գրումը	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների վաճառքի ծախսերի արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
2. Հավատարմագրային պայմանագրի համաձայն ստացված միջոցների վերաչափումից վնասների արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
3. Հիմնադրի (հաճախորդի) շահույթների դուրս գրումը	924 «Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ»

Հաշիվ 926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ»

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը նախատեսված է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեության արդյունքում առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների գումարը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը:

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշվին կից կարող են բացվել հետևյալ երկրորդ կարգի հաշիվները՝ 9261 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր», 9262 «Ստացված փոխառություններ»:

Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ հիմնադիրների (հաճախորդների), կրեդիտորների, փոխատուների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը կրեդիտով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների դեբետ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի արտացոլում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»

2. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հիմնադրի (հաճախորդի) համար փոխառությունների ստացում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ»
--	--

926 «Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ» հաշիվը դեբետով թղթակցում է հետևյալ հաշիվների հետ

Տնտեսական գործառնությունների բովանդակությունը	Հաշիվների կրեդիտ
1. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ձեռք բերված արժեթղթերի գծով կրեդիտորական պարտքերի մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ընդունված միջոցներ»
2. Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն հիմնադրի (հաճախորդի) համար ստացված փոխառությունների մարում	921 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ» 922 «Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ընդունված միջոցներ»

ԽՈՒՄԲ 93 «ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐ»

93 «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ» խումբը իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի հաշիվները՝ 931 «Պայմանական պարտավորություններ» և 932 «Պայմանական ակտիվներ»:

Հաշիվ 931 «Պայմանական պարտավորություններ»

931 «Պայմանական պարտավորություններ» հաշիվը նախատեսված է պայմանական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանական պարտավորությունների սահմանման և բացահայտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

Պայմանական պարտավորությունների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանական պարտավորությունների:

Հաշիվ 932 «Պայմանական ակտիվներ»

931 «Պայմանական ակտիվներ» հաշիվը նախատեսված է պայմանական ակտիվների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պայմանական ակտիվների սահմանման և բացահայտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

Պայմանական ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ պայմանական ակտիվների:

ԽՈՒՄԲ 94 «ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

94 «Այլ միջոցներ և պարտավորություններ» խումբն իր մեջ ներառում է հետևյալ առաջին կարգի (սինթետիկ) հաշիվները՝ 941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր», 942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր», 943 «Չհատուցված հարկային վնաս», 944 «Գրավադրված ակտիվներ», 945 «Խիստ հաշվառման բլանկներ», 946 «Պարբերական և մասնագիտական գրականություն» և 947 «Շահագործման մեջ գտնվող փոքրաթեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ»:

Հաշիվ 941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր»

941 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր» հաշիվը նախատեսված է հարկային օրենսդրության համաձայն դուրս գրված (հարկային օրենսդրության համաձայն ծախս ճանաչված) դեբիտորական պարտքերի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ յուրաքանչյուր պարտապանի, պարտքերի գոյացման ժամկետի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր»

942 «Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր» հաշիվը նախատեսված է հարկային օրենսդրության համաձայն դուրս գրված (հարկային օրենսդրության համաձայն եկամուտ ճանաչված) կրեդիտորական պարտքերի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքերի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ յուրաքանչյուր կրեդիտորի, պարտքերի գոյացման ժամկետի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 943 «Չհատուցված հարկային վնաս»

943 «Չհատուցված հարկային վնաս» հաշիվը նախատեսված է կազմակերպության չհատուցված հարկային վնասի (հաշվետու ժամանակաշրջանում հարկման առումով ճանաչված և հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի հարկվող շահույթի հաշվարկում ներառվող վնաս) առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այն կարգավորվում է հարկային օրենսդրությամբ:

Չհատուցված հարկային վնասի վերլուծական հաշվառումը տարվում է ըստ առաջացման ժամանակաշրջանների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 944 «Գրավադրված ակտիվներ»

944 «Գրավադրված ակտիվներ» հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրված ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Գրավադրված ակտիվների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ գրավադրված ակտիվների տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 945 «Խիստ հաշվառման բլանկներ»

945 «Խիստ հաշվառման բլանկներ» հաշիվը նախատեսված է պահպանության տակ գտնվող և առհաշիվ տրվող խիստ հաշվառման բլանկների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այդպիսի բլանկներից են անդորրագրային գրքույկները, հավատարմագրերը, տոմսերը և այլն: Խիստ հաշվառման բլանկներին վերաբերող փաստաթղթերի ցանկը, դրանց պահպանման և օգտագործման կարգը սահմանվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերով:

Խիստ հաշվառման բլանկների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց տեսակների և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 946 «Պարբերական և մասնագիտական գրականություն»

946 «Պարբերական և մասնագիտական գրականություն» հաշիվը նախատեսված է որպես ծախս ճանաչված և դեռևս օգտագործման մեջ գտնվող պարբերական և մասնագիտական գրականության առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Այդպիսի գրականության շարքին են դասվում պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերը, մասնագիտական ամսագրերը, դասագրքերը և այլն:

Պարբերական և մասնագիտական գրականության վերլուծական հաշվառումը տարվում է ըստ համապատասխան գրականության և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների:

Հաշիվ 947 «Շահագործման մեջ գտնվող փոքրածեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ»

947 «Շահագործման մեջ գտնվող փոքրածեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ» հաշիվը նախատեսված է շահագործման մեջ գտնվող և որպես ծախս ճանաչված փոքրածեք հիմնական միջոցների և

արագամաշ առարկաների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցների և արագամաշ առարկաների վերլուծական հաշվառումը տարվում է ըստ դրանց պահպանման տեղի, համասեռ խմբերի և կազմակերպության կողմից հաստատված այլ ուղղությունների: